

ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի պատմությունը, Վրաստանի աշխարհագրությունը և այլ հասարակական գիտությունները դպրոցում

Նպատակները և խնդիրները

Հասարակական գիտությունների առարկայական խմբում միավորված են միանման նպատակներ, բովանդակություն և ուսումնասիրման մեթոդներ ունեցող առարկաներ՝ պատմություն, աշխարհագրություն և քաղաքացիական կրթություն: Ընդհանուր կրթության բոլոր երեք աստիճաններում (տարրական, բազային և միջնակարգ աստիճան) այս առարկաները ուսուցանվում են համակարգված՝ աշակերտի տարիքային յուրահատկությունների և հնարավորությունների հաշվառումով: Ուսումնական գործընթացը կառուցված է ժառանգականության և անընդհատության սկզբունքի վրա:

Հասարակական գիտությունների ուսումնասիրման նպատակն է օժանդակել աշակերտի հայրենասեր և պատասխանատվության զգացումով քաղաքացի ձևավորմանը: Այս նպատակին հասնելու համար ուսուցման գործընթացն այնպես պետք է վարել, որ աշակերտի մոտ.

- Հետաքրքրություն առաջանա հասարակական կյանքի և զարգացման նկատմամբ անցյալում և ներկայում, որպեսզի հարցեր առաջադրի, տեղեկություններ հավաքի, պաշտպանի գաղափարներ, վերլուծի ընթացիկ հարցեր:
- Ջարգանա աշակերտների, ուսուցիչների, համայնքի անդամների հետ փոխհարաբերության կարողություն՝ հասարակության ակտիվ և պատասխանատու անդամ ձևավորվելու նամար, նրա մոտ հաստատվի սեփական նույնականությունը:
- Մշակվեն պատմության և աշխարհագրության տիրապետման համար անհրաժեշտ կարողություններ և բարձր բարոյական արժեքներ:
- Հեշտանա անմիջական միջավայրի և տիեզերքի ընկալման կարողությունը՝ համաշխարհային պատմության համատեքստում, պատկերացում ստեղծվի հասարակության և միջավայրի հարաբերությունների մասին:
- Ձևավորվի լիբերալ արժեքների վրա հիմնված աշխարհայացք և բարոյական վարք:

Յուրահատուկ կարողություններ.

- Ժամանակի և տարածության մեջ կողմնորոշում:
- Պատմական և աշխարհագրական մեկնաբանություն:
- Պատմա-աշխարհագրական միջոցների կիրառում և ստեղծում:
- Տարածական-ժամանակային մոդելավորում:
- Դիրքորոշման մշակում, քննադատություն և պաշտպանություն:

Ընդհանուր կարողություններ

- Հիմնախնդրի իմաստավորում և կապերի հաստատում
- Տեղեկատվության ձեռքբերում և կազմակերպում
- Ստեղծագործական կարողություն
- Հաղորդակցություն
- Հետազոտություն
- Հիմնախնդրի լուծում
- Մոդելավորում
- Ուսանելու ունակություն
- Համագործակցություն

Աշակերտը պետք է դաստիարակվի բարձր բարոյական արժեքների հիման վրա.

- Մարդու արժանիքների և իրավունքների նկատմամբ հարգանքի ցուցաբերում
- Կարեկցանք և հոգացողություն
- Մեր հայրենիքի նկատմամբ
- Սկզբունքայնություն և քաղաքացիական խիզախություն
- Բարեխղճություն և աշխատասիրություն
- Հավասարություն
- Հանդուրժողականություն
- Արդարություն և օրենքի նկատմամբ հարգանք:

Տարրական աստիճան

Տարրական աստիճանն ավարտելուց հետո, աշակերտը պետք է կողմնորոշվի Վրաստանի և աշխարհի պատմական և աշխարհագրական նշանակալից իրադարձություններում, ճանաչի իր բնակելի միջավայրը, Վրաստանի տեսարժան վայրերը, նրա բազմապիսի մշակույթը, բնական պաշարներն ու տնտեսական գործունեության տարածված բնագավառները:

Այս աստիճանում աշակերտին պետք է սովորեցնենք պատմական և աշխարհագրական պարզ հետազոտություն. տարբեր պատմա-աշխարհագրական միջոցների (քարտեզ, գլոբուս, աղյուսակ, դիագրամ, լուսանկար, սխեմատիկ նկար և այլն) կիրառում և դրանցից որևէ մեկի պարզ նմանօրինակի ստեղծում, հարմարեցված գրավոր աղբյուրների վրա աշխատանք (տեքստից բովադակության դուրսբերում, պատմական փաստերի համեմատում-հակադրում):

Աշակերտը պետք է հասկանա, որ պատմական անցյալը կարելի է արտացոլել և մեկնաբանել տարբեր միջոցներով: Այդպիսի միջոցներն են, օրինակ, հավաստի աղբյուրներ, գեղարվեստական գրականություն, բանավոր խոսք, լուսանկարներ, կինոնկարներ, թանգարանային ցուցանմուշներ և այլն: Աշակերտի մոտ պետք է զարգանա հաղորդակցության կարողությունը: Նա պետք է կարողանա հիմնավորված դատել, սեփական կարծիքը կարճաժամ հաղորդել, դասարանային բանավեճերին մասնակցել, պատմական և աշխարհագրական հարցերով նկարագրական շարադրություն գրել:

Դեռահասը պետք է իմաստավորի սեփական իրավունքներն ու պարտականությունները՝ ընտանիքի և իրեն ծանոթ սոցիալական խմբերի (դպրոց, հարևանություն, բարեկամներ և այլն) նկատմամբ: Նա պետք է տիրապետի պարզ սպառողական և առողջության անվտանգության համար անհրաժեշտ հմտություն-կարողությունների, իրազեկ լինի տարբեր սոցիալական շրջապատում վարվելաձևի բարոյական նորմերին: Կարևոր է, որ նրա մոտ զարգանա ուրիշին ունկնդրելու կարողությունը և հարգի տարբերվող կարծիքը:

* * *

Հասարակական գիտությունները պարտադիր առարկաներ են ընդհանուր կրթության բոլոր երեք աստիճաններում (լրիվ ընդհանուր կրթության բոլոր երեք աստիճաններում Վրաստանի պատմության և քաղաքական, սոցիալական և տնտեսական աշխարհագրության դասընթացներում ինտեգրված են համաաշխարհային պատմության և աշխարհագրության նշանակալի հարցեր):

V-VI դասարաններում հասարակական գիտությունները դասավանդվում են ինտեգրված տեսքով՝ «Իմ հայրենիքը» դասընթացի շրջանակներում:

I-VI դասարաններում հասարակական գիտությունների տարբեր մտնում են ուսումնական այլ առարկաների մեջ (վրաց լեզու և գրականություն, բնագիտության, գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն, մաթեմատիկա):

Բազային աստիճան

Բազային աստիճանում պատմության, աշխարհագրության, քաղաքացիական կրթության և կրոնի ու հասարակության ուսուցումը աշակերտին պետք է ցույց տա մարդու փորձի բազմազանությունը՝ հնագույն ժամանակներից առ այսօր, ինչպես նաև իր երկրի ձեռքբերումները մարդկության նվաճումների ֆոնի վրա: Աշակերտին պետք է մատուցել տեղեկություններ ինչպես Վրաստանի, այնպես էլ աշխարհի քաղաքական, սոցիալական, մշակութային, կրոնական թե էթնիկական բազմազանության մասին: Այս տեղեկությունների վրա հենվելով՝ նա պետք է կարողանա վերլուծել անցյալի և արդիականության կարևորագույն պատմական թե աշխարհագրական նշանակալից իրադարձությունները և տարբեր դարաշրջանների ու հասարակությունների զարգացման նմանություններն ու տարբերությունները:

Այս աստիճանում աշակերտի մոտ պետք է ձևավորվի պատմական մտածողության կարողություն՝ պատմական իրադարձության պատճառները ինքնուրույն բացատրելու և դրա արդյունքները վերլուծելու:

Պատմական գործընթացի տարբեր առումներով (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կրոնական) ըմբռնում, պատմական իրադարձության և անձնավորության գործունեության մասին տարբերվող մեկնաբանությունների գոյության պատճառների պարզաբանում, տարբերվող մեկնաբանությունների համեմատում ու գնահատում, պատմական աղբյուրների (պատմական գրավոր աղբյուրներ, հնագիտական թե ազգագրական նյութ, պատմական թեմայով ստեղծված գեղարվեստական ստեղծագործություններ, լուսանկարներ և այլն) հայթայթում և նրանց քննադատաբար գնահատում (ցանկալի է, որ պատմական թե աշխարհագրական նյութի որոնման և մշակման ժամանակ աշակերտն օգտագործի տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ինտերնետի և սի-դի-ռոմի միջոցով տեղեկատվություն գտնել, համակարգչային ծրագրերի միջոցով նյութը մշակել և էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկատվություն փոխանակել), պատմական թեմայի շարադրում, պատմական թեմայով մտքերի փոխանակմանը և բանավեճերին մասնակցություն:

Բազային դպրոցն ավարտելու համար՝ աշակերտը պետք է ծանոթ լինի աշխարհագրական ընդհանուր հասկացություններին. տեղային, տարածաշրջանային և լիամասշտաբ մակարդակներով ընթացող բնական, սոցիալ-տնտեսական թե քաղաքական գործընթացների տեսանկյուններին, տարածքների առանձնացման սկզբունքներին, բնակչությանը, արտադրական և ոչ արտադրական ճյուղերի տարածական վերաբաշխմանը: Նա պետք է կարողանա նաև Վրաստանի աշխարհագրական ցուցանիշները (բնական պայմանները, ռեսուրսները, վերաբնակեցումները, տնտեսության ճյուղերը) համեմատել մեկ այլ երկրի աշխարհագրական ցուցանիշների հետ և դրա հիման վրա, հաստատել նմանություն-տարբերությունն ու կապերը, ի մի բերել և վերլուծել քարտեզներից և այլ աշխարհագրական միջոցներից ստացած տեղեկությունը, կազմել պարզ թեմատիկ քարտեզներ, գրել աշխարհագրական շարադրություն, մասնակցել աշխարհագրական հիմնախնդիրների հետ կապված բանավեճերին, աշխարհագրական տեսակետները տարբերել փաստերից: Վերը նշվածների ուսումնասիրությունը աշակերտին պետք է

օգնի աշխարհագրական գիտելիքներ հավաքելու և հմտություն-կարողություններ զարգացնելու և շրջակա միջավայրի պահպանման կուլտուրա ձևավորելու հարցում:

Լիբերալ-ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքացիական դաստիարակությունը աշակերտին պետք է օգնի. հասարակության և պետության առջև իր իրավունքների և պարտականությունների գիտակցման և մարդու իրավունքների, կառավարման և տնտեսության զարգացման մասին ստացած տեսական գիտելիքները առօրյա կյանքին համապատասխանեցնելու գործում, զարգացնել նշանակալից քաղաքացիական հմտություն-կարողություններ՝ սեփական դիրքորոշման ձևավորում և պաշտպանություն, սեփական վարվելաձևի քննադատորեն գնահատում, տարբերակված կարծիք, ազգություն, դավանանք և մշակույթ ունեցող մարդկանց նկատմամբ հարգանքի դրսևորում:

* * *

VII-VIII դասարաններում հասարակական գիտությունների ուսուցումը կրկին շարունակվում է մեկ՝ «Վրաստանի և աշխարհի պատմություն և աշխարհագրություն» դասընթացի շրջանակներում: Այս դասընթացի ուսուցման համար տրամադրված շաբաթական 5 ժամը կարելի է բաշխել պատմության և աշխարհագրության ուսուցիչների միջև: Այս դեպքում ժամային ցանցը պետք է հիմնվի ընտրված դասագրքի առավելագույն արդյունավետ օգտագործման սկզբունքին:

IX դասարանում, որպես առանձին առարկաներ, ուսուցանվում են՝ Վրաստանի պատմությունը, Վրաստանի աշխարհագրությունը և քաղաքացիական կրթությունը:

Միջնակարգ աստիճան

Պատմության, աշխարհագրության և քաղաքացիական կրթության ուսուցումը ընդհանուր կրթության երրորդ աստիճանում հիմնվում է պարտադիր դպրոցում աշակերտի կողմից ստացված գիտելիքների վրա և դեռահասին ընձեռում իր ընտրած առարկաներն ավելի խորը ուսումնասիրելու հնարավորություն:

Այս աստիճանում բոլոր երեք դասարաններում պատմությունը մնում է որպես պարտադիր առարկա:

Տվյալ դասընթացի նպատակն է աշակերտներին ծանոթացնել հասարակական գիտությունների հիմունքները և հետազոտման մեթոդները: Դասընթացն այնպես է կառուցված, որ աշակերտը կարողանա սեփական հետաքրքրություններին և տարիքային հնարավորություններին համապատասխան հարցերն ինքնուրույն հետազոտել և ներկայացնել իր աշխատությունը (լսարանին հեշտ ընկալելի ձևով), կարողանա հետազայում հասարակական գիտությունների առանձին առարկաներում օգտագործել իր գիտելիքները և հմտություն-կարողությունները:

Այս աստիճանում բոլոր երեք դասարաններում պատմությունը մնում է որպես պարտադիր առարկա:

X դասարանում ամբողջ տարի ուսուցանվում է պատմության ներածական դասընթացը, IX դասարանում՝ Վրաստանի և աշխարհի պատմություն՝ հնագույն ժամանակներից ներառյալ XIX դարը, իսկ XII դասարանը լրիվությամբ տրամադրվում է XX դարի պատմությանը:

Այսպիսի որոշում ընդունելու գլխավոր պատճառներից մեկն այն է, որ Վրաստանի և աշխարհի պատմության իմացությունը աշակերտին հայրենասեր և քաղաքականապես կրթված քաղաքացի ձևավորելու նախապայմանն է: Պատմության ուսուցումը աշակերտին պետք է ցույց տա, որ պատմությունն անընդհատ գործընթաց է, որ ժամանակակից հասարակության համար քաղաքական, սոցիալական և բարոյական կարևորագույն հիմնախնդիրները հիմնականում պայմանավորված են դարերի և հազարամյակների ընթացքում տեղի ունեցած փոփոխություններով: Տարբեր պատմական ժամանակաշրջաններում տարբեր անձանց և հասարակության առջև ծառայած հիմնախնդիրների այլընտրանքային ուղիների, նրանց կողմից ընտրված կոնկրետ որոշման և այս որոշման արդյունքների ցուցադրմամբ, պատմության ուսուցումը աշակերտի մոտ պետք է զարգացնի նաև հիմնախնդրի կարգավորման կարողությունը:

Այս խնդիրների լուծումը պահանջում է, որ աշակերտի մոտ պատմական դատողությունը զարգացած լինի բարձր մակարդակով. նա պետք է կարողանա վերապրել պատմական դարաշրջանը (պատմական դարաշրջանը նկարագրելիս՝ իրադարձությունները տեսնել այն ժամանակաշրջանում ապրող մարդկանց աչքով, անցյալում տեղի ունեցած իրադարձությունները գնահատել ոչ միայն այսօրվա հեռանկարից, այլև այն դարաշրջանի արժեքների և հայացքների հաշվառումով), անհրաժեշտ է, որ պատմական դարաշրջանը զգալու կարողության ձևավորումը սկսվի տարրական և բազային աստիճանում, հաստատել ու վերլուծել պատմական իրադարձությունների միջև պատճառա-հետևանքային կապերը, համեմատել ու վերլուծել պատմական իրադարձության պատճառների և հետևանքների տարբերակված գնահատումները (մեկնաբանությունները), (այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ աշակերտի համար բացի դասագրքից մատչելի լինեն տարբեր պատմական փաստաթղթեր և անցյալի և ժամանակակից պատմաբանների երկեր: դատողություն անել պատմության անխուսափելիության և պատահականության հայեցակարգերի մասին (աշակերտը պետք է հասկանա, որ անհատն ունի ազատ կամք և ընտրություն անելու հնարավորություն, նա պետք է իմաստավորի, որ պատմությունը կարող էր ընթանալ այլ ուղիով, այս դեպքում նրա մոտ չի ստեղծվի տպավորություն, որ ապագան նախօրոք է սահմանված և որ անհատի գործողությունը և նրա արված ընտրությունը իմաստ չունի), անցկացնել պատմական հետազոտություն (պատմական հետազոտության-որոնման նպատակի որոշումը և պլանավորումը, գրավոր, տեսողական, զրական և երաժշտական աղբյուրների որոնումը, պատմական փաստաթղթի քննադատական վերլուծությունը, պատմաբանների տարբերակված հայացքների համեմատումը, անցկացրած հետազոտության հիման վրա, պատմական շարադրություն գրելը):

X դասարանում ամբողջ տարվա ընթացքում դասավանդվում է աշխարհագրության ներածություն, աշխարհագրական հետազոտություն: X-XI դասարաններում աշխարհագրությունը պարտադիր է, իսկ XII դասարանում՝ կամընտրական առարկա՝ Ներած. Հաս.գիտ. - 8

գլոբալ՝ լայնամասշտաբ, հիմնախնդիրների աշխարհագրություն: Տասներորդ դասարանում աշակերտներին հնարավորություն է տրվում ուսումնասիրել աշխարհագրական հետազոտությունների յուրահատկությունները, ինչը նրանց հնարավորություն կտա ամփոփել տարրական և բազային աստիճաններում ստացած գիտելիքը և հետաքրքրվելու դեպքում հետազայում ընտրությունն անել աշխարհագրության օգտին: Այս դասընթացի շրջանակներում ուսուցումը հիմնված է աշխարհագրական հիմնախնդիրների վրա և հիմնվում է աշակերտների համար հրատապ և հետաքրքիր թեմատիկայի վրա:

Միջնակարգ աստիճանում աշակերտն ուսումնասիրում է աշխարհի երկրների հիմնական բնութագրիչները, դրանցում ընթացող տարբեր գործընթացներն ու երևույթները, քննարկում և վերլուծում է բնապահպանության և, ընդհանուր առմամբ, կայուն զարգացման հիմնախնդիրները, այս հարցերի նկատմամբ այլընտրանքային մոտեցումները, դրանց կարգավորման հնարավոր ուղիները, գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրական առանձնահատկությունները, գիտակցում է, թե ինչ մեծ ներդրում կարող է անել գիտելիքներով և փորձով հարուստ յուրաքանչյուր մարդ հասարակություն՝ շրջակա միջավայրի առողջացման, դրա կայունության պահպանման գործում:

Միջնակարգ աստիճանը ավարտելուց հետո աշակերտը պետք է կարողանա շրջակայքում ընթացող իրադարձությունների դիտարկման հիման վրա որոշել բնակչության հիմնական պահանջարկներն ու հիմնախնդիրները, վերլուծել և պլանավորել դրանց լուծման ուղիները: Պետք է կարողանա պլանավորել և անցկացնել աշխարհագրական հետազոտություն և հետազոտության արդյունքը ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր, հետազոտության գործընթացում ստեղծել դիդակտիկ նյութ (քարտեզ և այլ աշխարհագրական միջոցներ):

Այս աստիճանում հասարակական գիտությունների առարկայական խումբը X դասարանում աշակերտին առաջարկում է քաղաքացիության պարտադիր եռամսյակային դասընթաց, իսկ XI-XII դասարաններում՝ չորս կամընտրական առարկա՝ պետություն, գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրություն, քաղաքացիություն և տնտեսագիտություն: Այս առարկաների ուսուցումը աշակերտին կընձեռի՝ քաղաքական, իրավաբանական և տնտեսական գիտելիքների հիմունքներին տիրապետելու հնարավորություն, կօգնի նրան՝ սոցիալական թե բարոյական պատասխանատվության գիտակցության և հասարակական կյանքին մասնակցելու ցանկության կայունացման գործում:

Ուղղություններ

Ազգային ուսումնական պլանում սահմանված են յուրաքանչյուր դասարանի կամ աստիճանի վերջում ուսումնական գործընթացի արդյունքները և աշակերտի կողմից դրանց հասնելու ստուգիչները: Արդյունքները խմբավորված են՝ ուղղությունների համաձայն: Յուրաքանչյուր ուղղություն արտացոլում է առարկայի հիմնական բովանդակությունը և հիմնվում է մեկ կամ մի քանի դիսցիպլինի վրա: Պատմության և աշխարհագրության X դասարանի չափորոշիչ ուղղությունները սահմանված են հետազոտական և հաղորդակցական հմտություն-կարողություններին համապատասխան:

Ուսուցման ուղղությունները՝ առարկաների և դասարանների համաձայն

Ուղղությունները	Վրաստանի և աշխարհի պատմություն և աշխարհագրություն	Պատմություն	Աշխարհագրություն	Քաղաքացիական կրթություն
Ժամանակը և տարածությունը	5-8		9, 11, 12	
Միջավայրը և էկոնոմիկան	5-8	9, 11, 12		
Պետական կառավարումը և քաղաքականությունը	5-8	9, 11, 12	9, 11, 12	
Մշակույթը և կրոնը	5-8	9, 11, 12		
Մարդը և հասարակությունը	5-8	9, 11, 12		10
Անհատական զարգացում				10
Քաղաքացի և պետությունը				10
Քաղաքացիություն				9, 11-12
Կառավարում				9, 11-12
Էկոնոմիկա				9, 11-12
Պատմական մեկնաբանություն և հետազոտություն		10		
Հաղորդակցություն		10	10	
Աշխարհագրական հետազոտություն			10	
Միջավայրը և սոցիալական համակարգերը			9, 11, 12	

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

VII ԴԱՍԱՐԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պատմ.Աշխարհ.		Ուղղություններ		
Ժամանակը և տարածությունը	Միջավայրը և տնտեսությունը	Պետական կառավարում և քաղաքականություն	Մարդը և հասարակությունը	Մշակույթ և կրոն
<p>1. Ըմբռնում է թվարկության համակարգը, իրադարձություններն ու փաստերը կապում պատմական դարաշրջանի հետ:</p> <p>2. Տեղեկություն ձեռք բերելու համար՝ կարդում է պատմա-աշխարհագրական տարբեր միջոցներ:</p> <p>3. Քարտեզի վրա որոշում է աշխարհագրական օբյեկտների և տարածքների գտնվելու վայրը:</p>	<p>4. Բացատրում է, թե բնական պայմանները ինչպես են անդրադառնում բնակավայրի տեսակների և տնտեսության զարգացման վրա:</p> <p>5. Դատում է բնական ռեսուրսների նպատակահարմար և բազմակողմանի կիրառման մասին:</p> <p>6. Վերլուծում է էկոնոմիկայում և բնության մեջ գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում առաջացած փոփոխությունները:</p>	<p>7. Բնութագրում և միմյանց հետ համեմատում է կառավարման տարբեր ձևերն ու սոցիալական կառուցվածքները:</p> <p>8. Դատում է երկրի պատմության մեջ քաղաքական գործիչի դերի մասին:</p>	<p>9. Բնութագրում և միմյանց հետ է համեմատում տարբեր սոցիալական կառուցվածքները:</p> <p>10. Դատում է տարբեր մշակույթների և դարաշրջանների ընթացքում հաստատված կանոնների, նորմերի և օրենքների մասին:</p>	<p>11. Հետազոտում է, թե ինչպես են անդրադառնում բնական պայմանները, սոցիալական միջավայրը և տնտեսական փոխհարաբերությունները մարդու կենցաղի վրա:</p> <p>12. Վերլուծում է, թե ինչ նշանակություն ունի կրոնը հասարակության կյանքում:</p>

Արդյունքները և ստուգիչները Ժամանակը և տարածությունը

Պատմ.Աշխարհ. VII.1. Հասկանում է թվարկության համակարգը:

Պատմական իրադարձություններն ու փաստերը կապում է համապատասխան պատմական դարաշրջանի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատմական իրադարձությունները հաղորդում է ժամանակագրական հետևողականությամբ:
- Միմյանց հարաբերակցում է ժամանակի միավորները (օր.՝ հազարամյակ՝ 10 դար, դար՝ 100 տարի և այլն):
- Ճշգրտորեն է կիրառում՝ «հին դարաշրջան», «մեր թվարկությունից առաջ», «հին թվարկությամբ», «մինչև Քրիստոսի ծնունդը», «նոր դարաշրջան», «մեր թվարկությամբ», «նոր թվարկությամբ» արտահայտությունները:
- Դասարանում, խմբային կամ անհատական աշխատանքի պահին, ժամանակի գծի վրա (սանդղակի) նշում է պատմական տարեթվերը կամ պատմական ժամանակաշրջանները:
- Արտահայտում է ենթադրություն՝ երկրագնդի զարգացման ընթացքում տեղի ունեցած նշանակալից իրադարձությունների հետևողականության (օր.՝ ջրոլորտի, մթնոլորտի, մայրցամաքների և կյանքի ծագման) մասին և դրանք համեմատում աշխարհաժամանակագրական սխեմայի հետ:
- Անվանում է այն դարը և հազարամյակը, որին պատկանում է կոնկրետ տարեթիվը:
- Կազմում է աղյուսակ, որտեղ ժամանակագրական հետևողականությամբ դասավորում է ձեռնարկում եղած թեմաների հետ կապված նշանակալից տարեթվերը և դրանք վերագրում համապատասխան դարաշրջանի (նախահողագործական, հողագործական, արդյունաբերական և ետարդյունաբերական): Օրինակ՝

Թեմա դարաշրջան	Թեմա I (Աշխատանք և տեխնոլոգիաներ)	Թեմա II (Կենցաղ և բնակավայրի տեսակները)	Թեմա III (Կարգ սոցիալական խմբերից մինչև ժամանակակից պետություն)	Թեմա IV
Նախահողագործական	Հին քարե դար՝ կիրառում են կրակը:	Վերին հին քարե դար՝ մարդն ապրում է քարանձավում	40000 տարի առաջ՝ տոհմային համայնքի ստեղծումը:	
Հողագործական	Նոր քարե դար՝ հողագործության և անասնապահության գոյացումը:	Մ.թ.ա I հազարամյակ՝ հիմնվում է առաջին քաղաքը:	Մ.թ.ա 3-րդ դարի սկիզբ՝ Քարթլիի թագավորության ստեղծումը:	
Արդյունաբերական				
Ետարդյունաբերական				

Պատմ.Աշխարհ. VII. 2 . Տեղեկություն ձեռք բերելու համար՝ օգտվում է տարբեր պատմա-աշխարհագրական միջոցներից:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Աշխարհագրական և պատմական տեղեկությունները մեկնաբանում է՝ լուսանկարների, աղյուսակների և քարտեզների կիրառությամբ:
- Միջազգային խորհրդանշանների օգնությամբ, տեղեկությունը տեղադրում է ուրվագծային քարտեզի և տարբեր օժանդակ պատմա-աշխարհագրական միջոցների վրա:
- Կիրառում է երկրագնդի ժամային գոտիների քարտեզը և իր երկրի ժամանակը համեմատում այլ գոտիներում գոյություն ունեցող երկրների ժամանակի հետ:
 - Երևակայությամբ շուրջերկրյա ճանապարհորդություն է կատարում՝ արևելքից դեպի արևմուտք կամ արևմուտքից՝ արևելք, դատում է տարեթվերի փոխանակման գծի նշանակման և դասավորության սկզբունքների, ինչպես նաև ճանապարհորդելիս ստեղծված դժվարությունների և դրանց հաղթահարման միջոցների մասին:
 - Համանման աշխարհագրական միջոցների մասին տեղեկությունը հաղորդում է այլ տեսքով (օր.՝ աշխարհի քարտեզից նշանակալից գետերը խմբավորում է աղյուսակում՝ ըստ մայրցամաքների):

Պատմ.Աշխարհ. VII. 3. Քարտեզի վրա որոշում է աշխարհագրական օբյեկտների և տարածքների գտնվելու վայրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի օգնությամբ որոշում է աշխարհի և Վրաստանի նշանակալից աշխարհագրական օբյեկտների կոորդինատները:
- Կիրառում է քաղաքական քարտեզ և նկարագրում պայմանական նշանները (գույներ, սահմաններ), որոնցով տեղի է ունենում տարածքների նշումը քաղաքական քարտեզի վրա (պետություններ, վարչական միավորներ, մայրաքաղաքներ):
- Քարտեզի և վիճակագրական տեղեկատվության կիրառմամբ, կազմում է աղյուսակ, որտեղ, ըստ մայրցամաքների, զետեղում է երեք ամենամեծ և երեք ամենափոքր երկրների (տարածության և բնակչության համաձայն: բնութագրիչները):
- Կիրառում է Վրաստանի ատլասը և բնութագրում երկրամասային միավորներից մեկը (դիրքը, սահմանները, ռելիեֆը, ջրագրական ցանցը, վարչական կենտրոնները):
- Քարտեզի միջոցով սահմանում է Վրաստանի ընդհանուր աշխարհագրական դիրքը, համեմատում համանման և տարբերակված տեղադրության երկրները, խմբավորում դրանք աղյուսակում:
- Քարտեզագրքի օգնությամբ լրացնում է Վրաստանի տարբեր դարաշրջանների (միջին դարեր, խորհրդային ժամանակաշրջան, ներկայիս) վարչա-քաղաքական ստորաբաժանման քարտեզը և համեմատում միմյանց:

Միջավայրը և տնտեսությունը

Պատմ.Աշխարհ. VII.4. Բացատրում է, թե բնական պայմաններն ինչպես են անդրադառնում բնակավայրերի տեսակների և տնտեսության զարգացման վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում, խմբով աշխատելիս, դիտարկում է հնագիտական և ազգագրական (դասագրքում տրված կամ գտնված: նյութերը և պատասխանում հարցին` ի՞նչ գործունեությամբ էին զբաղված մարդիկ, որոնց պատկանում էին այս իրերը (բնակատեղը):
- Վրաստանի ուրվագծային քարտեզի վրա նշում է տարբեր տեսակի բնակավայրեր և դատում է կոնկրետ աշխարհագրական միջավայրում դրանց առաջացման պատճառների մասին (օր.՝ ինչո՞ւ են քաղաքները հիմնում գետերի ափերին), դատում է տարբեր միջավայրեր բնակչության վերաբնակեցման յուրահատկությունների մասին (գետի կիրճերի երկայնքով, ծովի ափերին, անապատներում, լեռներում, արդյունաբերական և ագրարային

տարածաշրջաններում), դրանք համեմատում է (ծանոթանում է բնակատեղերի լուսանկարներին և տեղանքի պլաններին, վերլուծում դրանք: իր բնակավայրի հետ:

- Լուսանկարի և քարտեզի օգնությամբ նկարագրում է տարբեր տարածքներին բնորոշ բնանկարներ (օր.՝ արևադարձային անտառներ, անապատ, տափաստան և այլն) և դրանք կապում այս երկրի (տարածաշրջանի) տնտեսական գործունեության հետ:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ, լուսանկարների օգնությամբ, համեմատում է տարբեր աշխարհագրական միջավայրերում գոյություն ունեցող երկու բնակավայրեր և կազմում տարբերությունը դրանց միջև (նյութ, ճարտարապետություն):
- Ձեռք է բերում տեղեկատվություն՝ բնական տարերային երևույթների (լեռնահեղեղ, ձյունահյուս, սողանք, ջրհեղեղ և այլն) աշխարհագրության մասին և խմբավորում դրանք (օր.՝ աղյուսակի օգնությամբ):
- Վիճակագրական նյութի հիման վրա, բնութագրում է նույն ուժգնության երկու երկրաշարժ (օր.՝ Սպիտակի և Ռաճայի), դատում է տարբերվող (գոհ, վնաս, բնության ձևափոխում) պատճառների մասին և խմբավորում աղյուսակի օգնությամբ:
- Ենթադրություն է արտահայտում բնական աղետային երևույթներից հնարավոր պաշտպանության միջոցառումների մասին, դրանք համեմատում է Վրաստանում և այլ երկրներում հաստատված պաշտպանական միջոցառումների հետ (օր.՝ սվանական ճարտարապետության համապատասխանեցումը ձյունահյուսերին):
- Հետազոտում է գյուղատնտեսական շուկայի տեսականին, խմբավորում դրանք (օր.՝ աղյուսակի միջոցով)՝ Վրաստանի տարածաշրջանների համաձայն, սահմանում է գյուղատնտեսության տեսակները և արդյունքները ներկայացնում իրեն ցանկալի ձևով:

Պատմ.Աշխարհ.VII.5. Դատում է բնական ռեսուրսների նպատակահարմար և բազմակողմանի կիրառության մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբավորում է (քարտերի կամ աղյուսակի կիրառմամբ: մեկ նյութից պատրաստած տարբեր հնագիտական իրերը (օր.՝ կավից պատրաստվում էր և կճուճ, և աղյուս):
- Խմբավորում է (քարտերի կամ աղյուսակի կիրառությամբ) բնական ռեսուրսները և էկոնոմիկայի համապատասխան բնագավառները:
- Կենցաղային սպառման առարկաները կապում է ռեսուրսի տեսակի հետ:
- Մխենայի միջոցով պատկերում է ռեսուրսների ձևափոխությունը՝ արդյունահանումից մինչև գործածումը (նավթ-վառելանյութ-

էլեկտրաէներգիա):

- Գրավոր հաղորդում է, թե իր ընտանիքը հին դարաշրջանում ինչպես կկազմակերպեր տնտեսական կյանքը՝ միայն այն ժամանակաշրջանում գոյություն ունեցած պաշարների կիրառումով:
- Բնական միջոցները տարբերում է՝ ըստ բազմապիսի բնութագրիչների և դրանք խմբավորում աղյուսակում (անսպառ, սպառվող, վերականգնվող, չվերականգնող):
- Կազմում է այն բնական միջոցների ցանկը, որոնք կօգտագործի նրա ընտանիքը, քաղաքը, գյուղը, երկիրը: Համապատասխան խորհրդանիշի կիրառումով, արդյունահանման վայրերը տեղադրում է ուրվագծային քարտեզի վրա:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ թվարկված ռեսուրսները որակավորում է տարբեր հատկանիշներով՝ դրանց կիրառման նշանակության (առաջնային, երկրորդային, պակաս չափով նշանակալից, նշանակալից) և իրացման ժամանակի (հնագույն, հին, նոր, հեռանկարային) համաձայն:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ դատում է թվարկած ռեսուրսների կիրառման արդյունքում առաջացած աղտոտման (ուժեղ է աղտոտում, աղտոտում է, պակաս չափով է աղտոտում: մասին:
- Խմբում աշխատելիս՝ դատում է տնտեսության տարբեր ճյուղերի կողմից որոշ ռեսուրսների օգտագործման անհրաժեշտության և ինտենսիվության մասին, սահմանում է դրանց խնայողության ուղիները (օր.՝ ջուր և էլեկտրաէներգիա):

Պատմ.Աշխարհ. VII.6. Վերլուծում է էկոնոմիկայում և բնության մեջ գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում առաջացած փոփոխությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբային կամ անհատական աշխատանքի պահին ժամանակի սանդղակի վրա նշում է երեք կամ չորս գաղափար (հայտնագործություն), որոնք, ըստ նրա, հնագույն ժամանակներից առ այսօր տնտեսությունում առաջացրել են ամենանշանակալից փոփոխությունները և դասարանի առջև հիմնավորում է խմբի ընտրությունը:
- Գրում է շարադրություն, որտեղ կոնկրետ օրինակի քննարկման հիման վրա, դատում է գիտատեխնիկական առաջընթացի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի մասին (օր.՝ ատոմային էներգիայի կիրառումը:):
- Համադասարացիների խմբի հետ միասին ընտրում է որևէ նշանակալից հայտնագործություն կամ գյուտ և դրա ժողովրդականացման համար պատրաստում այն դարաշրջանի համար արդյունավետ գովազդ (ցուցանակ, բրոշյուր, ցուցապաստառ, ձայնային տեղեկագիր կամ ձայներիզ, տեսահոլովակ և այլն):

Պետական կառավարումը և քաղաքականությունը

Պատմ.Աշխարհ.VII.7. Բնութագրում է և միմյանց հետ համեմատում պետական կառավարման տարբեր ձևերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է պետության կառավարման ձևը, տարածքային կառուցվածքը և քաղաքական կարգը, ընտրում է որևէ երկիր և դրա օրինակով թվարկում պատճառները, որոնք ազդեցություն են գործում պետական կառավարման փոփոխությունների վրա:
- Համեմատում է պետական կառավարման տարբեր ձևերը մեկ դարաշրջանում և կազմում է աղյուսակ, որտեղ նշում է դրանց դրական և բացասական կողմերը: Օրինակ.

Պետական կառավարման ձևը	Դրական	Բացասական
Աթենքի ժողովրդավարությունը		
Սպարտայի ազնվապետությունը		
Իրանի Աքեմենյանների միապետությունը		

- Խմբի հետ միասին դատում է, թե ինչպես կբարելավեր ընտանիքի, դասարանի, դպրոցի թե բնակավայրի կյանքը՝ կառավարման գործին իր մասնակցությամբ:

Պատմ.Աշխարհ. VII.8. Դատում է քաղաքական գործչի նշանակության մասին՝ երկրի պատմության մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ կամ անհատականորեն ժամանակի սանդղակի վրա նշում է, իր կարծիքով, ամենանշանակալից չորս (կամ հինգ) քաղաքական գործիչների՝ հնագույն ժամանակներից մինչ այսօր և դասարանի առջև զրուցում ընտրության պատճառների մասին:
- Ձեռք է բերում տեղեկատվություն (դասագրքի և լրացուցիչ գրականության միջոցով) վրաց թագավորներից մեկի մասին և գրում շարադրություն, որտեղ զրուցում է նրա անցկացրած բարեփոխումների պատճառների և հետևանքների մասին:
- Աղյուսակի միջոցով խմբավորում է երկու միմյանց հակադրված քաղաքական գործիչների փաստարկումներն ու նպատակները:
- Համեմատում է երկու աղբյուր, որոնք տարբերակված են գնահատում միևնույն

պատմական անհատի գործունեությունը, բացատրում է տարբերակված մեկնաբանության պատճառները:

- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների հետ միասին բեմադրում է ներկայացում՝ քաղաքական գործչի մասին, դատում է ներկայացման մեջ հաղորդված պատմական փաստերի մասին (օր.՝ «Փոքրիկ Կախին»):

Մարդը և հասարակությունը

Պատմ.Աշխարհ.VII.9. Բնութագրում է և միմյանց համեմատում տարբերվող սոցիալական կառուցվածքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հնագիտական և ազգագրական (դասագրքում տրված և հետազոտված) նյութերից առանձնացնում է այն իրերը, որոնք վկայում են սոցիալական շերտավորման մասին, հիմնավորում է իր ընտրությունը:
- Դասարանում խմբով կամ անհատականորեն աշխատելիս՝ կազմում է աղյուսակ, որտեղ խմբավորում է հասարակություններն ու նրանց կիրառած հարկադրական աշխատանքի տարբեր ձևերը, դատում է ինչպես անցյալում, այնպես էլ արդի աշխարհում հարկադրական աշխատանքի գոյության պատճառների մասին:
- Ընտրում է անցյալի որևէ հասարակության սոցիալական խավ և գրավոր նկարագրում այս խավի ներկայացուցչի առօրյա կյանքը (օր.՝ գյուղացին՝ միջին դարերի Եվրոպայում կամ ստրուկը՝ Հռոմի պետությունում):
- Ուսուցչի կողմից առաջարկված դարաշրջանից անվանում է հայտնի պատմական դեմքերի, սահմանում նրանց սոցիալական կարգավիճակը (օր.՝ թագավոր, վաճառական, որսորդ, բանկիր, հողատեր, նախագահ, գիտնական և այլն) և ձևակերպում նրանց հաջողության պատճառները:
- Համադասարանցիների հետ միասին մասնակցում է սիմուլյացիոն (կեղծակերպման: խաղին, որը տնտեսական փոխհարաբերությունների նախանմուշներից մեկն է (օր., ֆերմա, արհեստանոց, արտադրամաս, խանութ, բանկ և այլն):

Պատմ.Աշխարհ. VII.10. Դատում է տարբեր մշակույթներում և դարաշրջաններում հաստատված կանոնների, նորմերի և օրենքների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ միմյանց է համեմատում տարբեր դարաշրջանների երկու երկրների օրենսդրական սկզբունքները և դատում, թե դրանցից ո՞րն է իր համար ընդունելի (օր.՝ Համնուրաբի օրենքները և հռոմեական օրենսդրությունը, շարիաթը և ժամանակակից վրացական օրենսդրությունը):

- Համադասարանցիների հետ միասին ներկայացնում է իրադրական նախանմուշներ, որոնց բարոյական և իրավական գնահատումները հաճախ չեն համընկնում (օր.՝ ստախոսությունը, քաղցած, անապատան երեխայի կողմից հաց գողանալը, մահապատիժը և այլն):
- Սեփական դիտարկումներից ելնելով՝ դատում է, թե օրենքը խախտելու դեպքում ինչ վտանգ է ստեղծում անպատժելիությունը հասարակության և անհատի համար:
- Մյուս դասարանների փորձի հաշվառումով, համադասարանցիների հետ միասին մշակում է իր «դասարանի սահմանադրությունը», այն համեմատում ուսուցչի առաջարկած կանոնների:

Մշակույթ և կրոն

Պատմ.Աշխարհ.VII.11.Հետազոտում է, թե ինչպես են անդրադառնում բնական պայմանները, սոցիալական միջավայրը և տնտեսական փոխհարաբերությունները մարդու կենցաղի վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբով կամ անհատականորեն աշխատելիս՝ ընտրում է երկու տարբերակված սոցիալական կառուցվածքի հասարակություն և համեմատում նրանց բարքերը, սովորույթները և ավանդույթները (օր.՝ քոչվորական և հողագործական հասարակություն):
- Դասարանում խմբային կամ անհատական աշխատանքի ժամանակ խմբավորում է գյուղի և քաղաքի բնակչության կենցաղի հետ կապված հնագիտական և ազգագրական իրեր, հիմնավորում է իր կարծիքն՝ այս խմբավորման կապակցությամբ:
- Գրում է շարադրություն, որտեղ միմյանց է համեմատում միևնույն սոցիալական խավի ներկայացուցչի կենցաղը՝ երկու տարբեր դարաշրջաններում (օր.՝ բանվորը՝ XIX և XX դարերում):
- Ավագների հարցման հիման վրա՝ իր ընտանիքի կենցաղը համեմատում է իր նախնիների (պապի, տատի) ապրելակերպին և կազմում աղյուսակ, որտեղ թվարկում է նմանություններն ու տարբերությունները: Օր.՝

Նմանություն		Տարբերություն	
Իմ ընտանիքը	Նախնիները	Իմ ընտանիքը	Նախնիները

- Գեղարվեստական գրականությունից կամ բանահյուսությունից, կինեմատոգրաֆիայից, զանգվածային լրատվամիջոցներից, առօրյա կյանքից որոնում, գտնում է լրատվություն՝ Վրաստանի տարբեր բնական պայմաններում բնակվող մարդկանց կենցաղի մասին և համեմատում միմյանց:

- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների հետ միասին, պլանավորում և իրականացնում է պարզ ազգագրական փորձարշավ իր հայրենի վայր՝ բնական պայմանները և բնակչության ավանդույթներն ուսումնասիրելու նպատակով:

Պատմ.Աշխարհ.VII.12. Վերլուծում է, թե ինչ նշանակություն ունի կրոնը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հնագիտական և ազգագրական (դասագրքում տրված և հայթայթած) նյութի դիտարկման հիման վրա՝ գրուցում է հասարակության կրոնական պատկերացումների մասին:
- Խմբային աշխատանքի ժամանակ, որևէ երկրի օրինակով, դատում է կրոնական հանդուրժողականության մասին՝ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր:
- Դասարանում բանավեճի ժամանակ դատողություն է անում, թե ինչ ազդեցություն էր գործում կրոնն ընտանեկան կենցաղի վրա հնում, և ինչ ազդեցություն է գործում այն այսօր:
- Քարտեզի վրա ցույց է տալիս իրեն ծանոթ կրոնների ծագման վայրերը, տարածման այսօրվա տարածքները և թվարկում դրանց հետ կապված նշանակալից պաշտամունքային հուշարձանները, խորհրդանիշներն ու ավանդույթները:
- Որևէ երկրի կրոնի և մշակույթի մասին ձեռք բերած տեղեկության հիման վրա՝ դատում է, թե ինչպես կօգնեք այս տեղեկությունն այս երկրով շրջագայելու ժամանակ:
- Համադասարանցիների հետ ձեռք բերած ազգագրական նյութի (դասագիրք, գրականություն, ֆիլմեր, նկարազարդումներ, սեփական ուղևորական գրառումներ, հարցազրույցներ և այլն) հիման վրա՝ գրուցում է Վրաստանում բնակվող ազգությունների ընտանեկան և կրոնական տոների մասին և դրանց միջև անցկացնում զուգահեռներ:
- Օգտագործում է վիճակագրական տեղեկություն և կազմում Վրաստանի բնակչության հիմնական կրոնները պատկերող քարտեզ, դատում է Վրաստանում կրոնի աշխարհագրությունը սահմանող պատմական գործոնների մասին:

Երաշխավորված բովանդակություն

1. Ժամանակը և օրացույցը
2. Պատմական և աշխարհագրական միջավայր
3. Աշխատանք և տեխնոլոգիաներ
4. Բնակավայրերի տեսակները և կենցաղը՝ քարանձավից մինչև երկնաքեր
5. Պարզ սոցիալական խմբերից մինչև ժամանակակից պետություն
6. Կանոններ, օրենքներ և իրավադատություն
7. Բազմաստվածությունից՝ միաստվածություն:

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

VIII ԴԱՍԱՐԱՆ

Արդյունքներն ըստ ուղղությունների

Աշխարհ. Պատմ. VIII		Ուղղությունները		
Ժամանակը և տարածությունը	Միջավայրը և էկոնոմիկան	Պետական կառավարում և քաղաքականություն	Մարդը և հասարակությունը	Մշակույթը և կրոնը
<p>1. Վերլուծում է քարտեզները և այլ պատմա-աշխարհագրական միջոցներ (լուսանկարներ, գրաֆիկաներ, աղյուսակներ, դիագրամներ), կազմում է պարզ քարտեզներ:</p> <p>2. Աշխարհագրական միջոցների օգնությամբ, ուսումնասիրում է տարածքների դիրքերը:</p>	<p>3. Ուսումնասիրում է բնակչության ժողովրդագրական բնութագրիչները, վերաբնակեցման յուրահատկությունները, գաղթային գործընթացները և դրանք կապում տնտեսական զարգացման հետ:</p> <p>4. Բնութագրում է քաղաքաշինության գործընթացը:</p> <p>5. Դատում է հաղորդակցությունների զարգացման մասին՝ հնագույն ժամանակներից առայսօր:</p> <p>6. Հետազոտում է առևտրի դերը՝ տնտեսության զարգացման գործում:</p>	<p>7. Ուսումնասիրում է հակամարտությունների պատճառները, զարգացումն ու արդյունքները:</p> <p>8. Բնութագրում է Հարավային Կովկասը՝ հենվելով աշխարհի տարածաշրջանների առանձնացման սկզբունքի վրա:</p> <p>9. Դատում է պետությունում կառավարման ձևի և քաղաքական ռեժիմի փոխադարձ կապի մասին:</p> <p>10. Բնութագրում է միջազգային կազմակերպությունների նշանակությունը:</p> <p>11. Դատում է պետության համար օրենքի գերակայության նշանակության մասին:</p>	<p>12. Վերլուծում է մարդու իրավունքների հիմունքները և դրանց զարգացման պատմական պայմանները:</p> <p>13. Բնութագրում է հասարակությունում խաղաղ համագործակցության համար անհրաժեշտ պայմանները:</p>	<p>14. Ուսումնասիրում է արվեստի և կրթության զարգացման հիմունքները:</p> <p>15. Հետազոտում է հասարակության զարգացման մշակութային հիմունքները:</p>

Ազգային պատմության ցուցակ

Արդյունքները և ստուգիչները

Ժամանակը և տարածությունը

Պատմ.Աշխարհ.VIII.1. Վերլուծում է քարտեզները և այլ աշխարհագրական միջոցներ (լուսանկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, դիագրամներ), կազմում է պարզ քարտեզներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Բացատրում է լուսանկարների, գծապատկերների, աղյուսակների, դիագրամների և քարտեզների տեսքով ներկայացրած պատմական և աշխարհագրական տեղեկությունը:
- Պարզաբանումների միջոցով ընթերցում է քարտեզների բովանդակությունը և դրանց մասին տրված տեղեկությունը արտահայտում տարբեր ձևով (օր.՝ գրավոր կամ աղյուսակի տեսքով):
- Միջազգային խորհրդանշանների (պատմական նշանների ամբողջություն: օգնությամբ, ստեղծում է պարզաբանումներ և նկարում հայրենի բնակավայրի պարզ քարտեզ:
- Կազմում է նախորդ դարաշրջանի տեղային միջավայրի (սակավաբնակ վայրեր՝ գյուղ, թաղամաս և այլն) պլան և համեմատում նույն վայրի ժամանակակից պլանին, դատում է, թե ինչ փոփոխությունների է ենթարկվել միջավայրը այս երկու դարաշրջանների միջև:
- Հենվելով բնակչության մարդահամարների նյութերի վրա՝ կազմում է տարբեր տեսակի գծապատկերներ և դիագրամներ:
- Ձեռք է բերում լրատվություն (պատմական քարտեզների, դասագրքերի և լրացուցիչ գրականության միջոցով: հայտնի գաղթային տարբեր հոսքերի մասին և դասարանում խմբային աշխատանքի ժամանակ, ուրվագծային քարտեզի վրա նշում այս տեղափոխությունների երթուղիները:
- Ձեռք է բերում տեղեկություն (դասագրքի և լրացուցիչ գրականության միջոցով) մեծ ճանապարհորդների մասին և ուրվագծային քարտեզի վրա նշում այս ճանապարհորդությունների երթուղին:
- Ժամանակակից և անցյալ դարաշրջանի քարտեզների համեմատության հիման վրա, կազմում է այն երկրների ցուցակը, որոնք նշված չեն անցած դարաշրջանի քարտեզի վրա (օր., ժամանակակից և XV դարի առաջին կեսի քարտեզները):
- Ուրվագծային քարտեզի վրա անց է կացնում ցամաքային և ծովային այն երթուղիները, որոնցով Վրաստանը կապվում է հարևան պետությունների հետ:

Պատմ. Աշխարհ. VIII. 2. Աշխարհագրական միջոցների կիրառմամբ, ուսումնասիրում է տարածքների գտնվելու տեղը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Կոորդինատային ցանցի կիրառմամբ, որոշում է տարբեր վայրերի տեղադրությունը, այդ թվում՝ տարածություններն ու ուղղությունները (աշխարհի կարևորագույն երկրները և մայրաքաղաքները, Վրաստանի տարածաշրջաններն ու վարչական կենտրոնները):
- Խմբային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր խումբ ընտրում է աշխարհագրական դիրքով շեշտակիորեն տարբերվող երկիր՝ փորձարշավ անցկացնելու համար և դասարանի առջև ներկայացնում դրա իրականացման պարզ պլանը (նպատակ, երթուղի, ժամանակ, փոխադրամիջոց, ընտրած երթուղու առավելությունը մյուսների համեմատությամբ, տանելու համար անհրաժեշտ իրերի ցուցակ և այլն):
- Աշակերտն օգտագործում է համապատասխան թեմատիկ քարտեզներ և վերլուծում Եվրոպա-Ասիայի միջև սահմանի անցկացման պրոբլեմայնությունը (քննարկում և ընդհանրացնում է սահմանի անցկացման այլընտրանքային տարբերակները, հիմնավորում իր համար ընդունելի տարբերակը), ճշմարտացիությունը և տեղադրում ուրվագծային քարտեզի վրա:
- Քաղաքական և ֆիզիկական քարտեզների կիրառմամբ, խմբավորում է երկրները՝ տեղադրության համաձայն, խոսում է Կովկասի և նրա մեջ մտնող երկրների դիրքի մասին:

Միջավայրը և էկոնոմիկան

Պատմ. Աշխարհ. VIII.3. Ուսումնասիրում է բնակչության ժողովրդագրական բնութագրիչները, վերաբնակեցման յուրահատկությունները, գաղթային գործընթացները և դրանք կապում տնտեսական զարգացման հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հենվելով վիճակագրական տվյալների վրա՝ դատում է աշխարհի բնակչության հարաշարժության մասին և բացատրում փոփոխությունների պատճառները:
- Բնութագրում է ժողովրդագրական հիմնական ցուցանիշները (ծնելիություն, մահացություն, բնական աճ), սեռական-հասակային կառուցվածքը և աշխարհում տարածված վերարտադրության տեսակները, ընթերցում է համապատասխան գծապատկերներ և դիագրամներ:
- Կապ է հաստատում կոնկրետ տնտեսական փոխհարաբերությունների տիպի զարգացման և ժողովրդագրական փոփոխությունների միջև (օր., մ.թ.ա. IV-I հազարամյակներում Եվրասիայում և Աֆրիկայում հողագործության զարգացման և աշխարհի բնակչության աճի միջև):

- Համապատասխան թեմատիկ քարտեզի կիրառումով, վերլուծում է բնակչության խտությունը աշխարհի տարբեր տարածաշրջաններում, առանձնացնում է ամենախիտ և ամենանոսր բնակեցված տարածաշրջանները և դրանք խմբավորում աղյուսակում:
- Արտագաղթի տեսակները (արտաքին, ներքին, ճոճանակաձև և այլն), տարբերում է՝ ուղղության և ժամանակի համաձայն, դատում է մարդկանց գաղթի հնարավոր պատճառների մասին և բերում համապատասխան օրինակներ: Ենթադրություններ է անում՝ անհատի (որն ընդգրկված է այս գործընթացում) և երկրների մասին (որտեղից և ուր ուղղված է կոնկրետ արտագաղթը), արտագաղթի հնարավոր արդյունքների մասին:
- Գրում է շարադրություն, որտեղ նկարագրում է օտար երկրում նորաբնակների գաղթի պատճառները (կամավոր և հարկադրական՝ գերությունից մինչև թրաֆիկինգ՝ մարդավաճառություն), նրանց ճանապարհորդությունը և նոր բնակավայրում նրանց առօրյա կենցաղը:

Պատմ. Աշխարհ. VIII.4. Բնութագրում է քաղաքաշինության գործընթացը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Համենատում է գյուղական և քաղաքային բնակավայրերի լուսանկարները, տարբերակիչ նշանները հակադրում է սեփական բնակատեղին:
- Հավաքում է տեղեկություններ (գրականություն, լուսանկարներ, քարտեզներ) և նկարագրում ժամանակակից քաղաքը (ագլոմերացիա, մեգապոլիս, կոնուրբացիա), դրա բնութագրիչ նշանները ներկայացնում է գծապատկերի տեսքով:
- Ծանոթանում է Վրաստանում և այլ երկրներում բնակավայրերին կարգավիճակ շնորհելու չափորոշիչներին, պայմանական նշանների միջոցով քարտեզի վրա նշում է ընտրված երկրների տարբեր բնակավայրերի բազմամարդությունն ու գործառույթները:
- Հետաքրքրությունների համաձայն, հավաքում է տեղեկատվություն (պլան, քարտեզ, լուսանկար, վիճակագրական լրատվություն և այլն)՝ մայրցամաքների խոշորագույն քաղաքների մասին և համեմատում դրանք՝ ըստ տարբեր նշանների (պլանավորում, գործառույթային շրջանների բաժանում, ենթակառուցվածք, բնակչություն և այլն) : Արդյունքները ներկայացնում է իր համար ցանկալի ձևով (աղյուսակ, գծապատկեր, ուրվանկար, շարադրություն և այլն):
- Անհատականորեն կամ խմբային աշխատանքի ժամանակ, աղյուսակի օգնությամբ, խմբավորում է տարբեր դարաշրջաններում Վրաստանում և Արևմտյան Եվրոպայում գյուղի բնակչության քաղաքներ արտագաղթելու պատճառներն ու արդյունքները (օր., XIX դարի երկրորդ կեսի Վրաստանը, XVII-XVIII դարերի Արևմտյան Եվրոպան):

Պատմ. Աշխարհ. VIII.5. Դատում է հաղորդակցությունների զարգացման մասին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է մեծ ճանապարհորդներից մեկին, հետազոտում նրա ճանապարհորդության պատճառներն ու արդյունքները: Իր համար ցանկալի ձևով համադասարանցիներին ներկայացնում է ձեռք բերած տեղեկատվությունը: Դասարանում աշխատելիս՝ կազմում է ժամանակի սանդղակ:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ կազմում է տարբեր տեսակ գրերի ցուցակ, զրուցում դրանց ծագման և զարգացման մասին:
- Ընտրում է որևէ կարևորագույն առևտրա-ցամաքային ճանապարհ և գրավոր նկարագրում ճանապարհորդների հաղորդակցական դժվարությունները և այս ճանապարհի սոցիալ-տնտեսական նշանակությունը:
- Անվանում է տրանսպորտային միջոցները, ժամանակի սանդղակի վրա նշում այն մարդկանց անուններն ու հայրենի երկրները, ովքեր իրենց լուծման են ներդրել տրանսպորտի զարգացման մեջ:
- Ժամանակի սանդղակի վրա նշում է այն տեխնոլոգիական հայտնագործությունները, որոնք նպաստել են հաղորդակցությունների զարգացմանը (օր.՝ տպագրության, համակարգչի և այլն):
- Անվանում է իրեն ծանոթ հաղորդակցական միջոցները և դատում տարբեր նշանակումով կամ պայմաններում դրանց կիրառության արդյունավետության մասին (օր.՝ տեղեկության հաղորդման և բեռնատեղափոխման միջոցները՝ տարբեր դարաշրջաններում):
- Դատում է առանձնահատուկ բնական միջավայրում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցների զարգացման և օգտագործման հեռանկարների մասին, իրազեկվում է էկոլոգիապես անվտանգ ժամանակակից տրանսպորտի ստեղծման գործում գիտնականների ձեռքբերումներին:

Պատմ. Աշխարհ. VIII.6. Հետազոտում է առևտրի դերը՝ տնտեսության զարգացման գործում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է նշանակալից առևտրական կենտրոններից մեկը և դատում տնտեսության զարգացման գործում դրա միջազգային և տեղական նշանակության մասին, այն նշում է ուրվագծային քարտեզի վրա:
- Սեփական բնակավայրի օրինակով անվանում է այն ռեսուրսները, ապրանքները և ծառայությունները, որոնց նկատմամբ կա պահանջարկ, սակայն լրիվությամբ չի կարող ապահովվել, համադասարանցիների հետ միասին դատում է իրավիճակի կարգավորման միջոցների մասին:
- Վիճակագրական նյութի վերլուծության հիման վրա, խմբավորում է տարբեր արտադրանք ներմուծող և արտահանող երկրները:

- Հետազոտում է պարենային խանութի կամ գյուղատնտեսական շուկայի տեսականին, ապրանքը խմբավորում է տեղում արտադրված և ներմուծված ապրանքների, դատում է սննդամթերքի ներմուծման գործում Վրաստանի դերի մասին և ներմուծող երկրները տեղադրում ուրվագծային քարտեզի վրա:
- Վրաստանի կամ այլ երկրի պատմությունից բերում է օրինակներ, որոնց հիման վրա համեմատում է այնտեղ բնակվող մարդկանց համար՝ զարգացման տարբեր մակարդակի պայմաններում, առևտրի նշանակության մասին:
- Համադասարանցիների խմբի հետ միասին, իր դպրոցի կամ բնակավայրի պահանջարկների հաշվառումով, ընտրում է օրենքով թույլատրված ապրանք կամ սպասարկում, որը կկարողանար արտադրել նաև անձամբ, տարբեր ռեսուրսների նվազ ծախսերով, նրանց հետ միասին կազմում է այս ապրանքից կամ սպասարկումից օգտվել ցանկացողների թիվը և հնարավոր արժեքը:

Պետական կառավարում և քաղաքականություն

Պատմ. Աշխարհ. VIII.7. Ուսումնասիրում է հակամարտությունների պատճառները, զարգացումն ու արդյունքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբով կամ անհատականորեն աշխատելիս՝ աղյուսակի օգնությամբ խմբավորում է տարբեր պատերազմների (հակամարտությունների) սկսվելու պատճառներն ու առիթները: Օրինակ.

Պատերազմը	Պատճառը	Առիթը
Բյուզանդիա-Իրանի պատերազմը VII դարի սկզբին	Բյուզանդիայի նկատմամբ Իրանի տարածքային պահանջները	Բյուզանդիայի կայսրի՝ Մավրիկեի սպանությունը 602 թվականին
Դիդգորիի ճակատամարտը	Դավիթ IV Շինարարի կողմից թուրք-սելջուկների արտաքսումը Վրաստանից	Թբիլիսցի վաճառականների բողոքը սուլթանին՝ Դավիթ Շինարարի քմահաճության մասին
I Համաաշխարհային պատերազմը	«Անտանտայի» և «Եռյակ միության» միջև հակասությունը:	Սպանությունը Սարակոյում:

- Հետազոտում է տարբեր ժամանակաշրջաններում պատերազմական միջոցների զարգացումը և դատում է, թե ինչ ազդեցություն է գործում այս գործընթացը պատերազմները վարելու վրա:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ կազմում է իրեն ծանոթ պատերազմների ցանկ և խմբավորում դրանք՝ մասշտաբայնության համաձայն: Օրինակ.

Ներքին պատերազմ	Տեղական	Տարածաշրջանային	Համաշխարհային
Բագրատ IV-ի և Լիպարիտ Բաղուաշի միջև պատերազմը	Թամար թագուհու և Ռուբենադինի միջև պատերազմը	30-ամյա պատերազմը Եվրոպայում	I համաշխարհային պատերազմը:

- Ընտրում է մարտերից մեկը (կամ պատերազմական կամպանիա) և գրավոր դատողություն անում՝ դրանում գորավարի դերի մասին:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ համեմատում է միևնույն դարաշրջանի տարբեր երկրների պատերազմական կուլտուրան (գերիների, վիրավորների, զոհվածների նկատմամբ վերաբերմունքը) :
- Թվարկում է պատերազմի զոհերի կարգերը, համադասարանցիների խմբի հետ միասին քննարկում է կարգերից մեկի իրավունքները սահմանող նորմերը և դրանց պաշտպանության մեխանիզմները, համեմատում է ընտրած կարգի նկատմամբ վերաբերմունքի կոնկրետ օրինակները, մինչև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի մշակումը և հետագայում:
- Վրաստանի ուրվագծային քարտեզի վրա նշում է այն տարածքային փոփոխությունները, որոնք առաջացել են այս կամ այն պատերազմի արդյունքում (օր.՝ Ռուսաստան-Թուրքիայի 1828-1929 թթ. պատերազմը) :
- Աղյուսակի միջոցով խմբավորում է տարբեր հակամարտությունները (օր.՝ գյուղացիական ապստամբություն, հեղափոխություն, պատերազմ) և դրանց հետ կապված սոցիալական փոփոխությունները (օր.՝ ճորտատիրության վերացումը, արհեստավորների և վաճառականների կազմակերպությունների հզորացումը, սոցիալական թե ռասայական խտրականության կանխարգելումը և այլն) , համադասարանցիների խմբի հետ միասին որոշում է դրանց միջև եղած պատճառա-հետևանքային կապը:
- Համադասարանցիների հետ միասին ձեռք է բերում տեղեկություն՝ բնության մեջ պատերազմով հարուցված փոփոխությունների մասին (ջուր, օդ, հող, անտառ) , փոփոխությունների հետևանքները ներկայացնում է աղյուսակի կամ նկարի (ցուցապաստառի) տեսքով:
- Ձեռք է բերում տեղեկատվություն այն տեխնոլոգիային աղետների մասին, որոնք ստեղծվել են պատերազմական գործողությունների տարածությունում (օր.՝ ԱՄՆ-Իրաքի առաջին պատերազմով հարուցված էկոլոգիական աղետը Պարսից ծոցում) և դատում է դրանց բացասական հետևանքների մասին:

Պատմ. Աշխարհ. VIII.8. Բնութագրում է Հարավային Կովկասը՝ հիմնվելով աշխարհի տարածաշրջանների տարանջատման սկզբունքի վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է քարտեզը և ֆիզիկական, պատմա-մշակութային, տնտեսական և քաղաքական նշաններով բնորոշում է աշխարհի տարածաշրջանների

բաժանման յուրահատկությունները:

- Կիրառում է ուսումնական քարտեզը և սահմանում ռազմավարական պաշարներով (օր.՝ վառելիքա-էներգետիկական) հարուստ տարածաշրջանները, լրացնում համապատասխան ուրվագծային քարտեզը:
- Օգտագործում է քարտեզը և բնութագրում Սև և Կասպից ծովերի ֆիզիկական-աշխարհագրական բնութագրիչները, նշանակալից պաշարները (հանքային, կենսաբանական, ռեկրեացիոն) և բնապահպանական հիմնախնդիրները, արտահայտում է կարծիքներ՝ դրանց դերի և հեռանկարների մասին:
- Օգտագործում է համապատասխան թեմատիկ քարտեզներ, վիճակագրական տեղեկատվություն և դատում Կովկասի բնակչության մի շարք բնութագրիչների մասին (օր.՝ ժողովրդագրական, էթնիկական, կրոնական բազմազանություն) , լրացնում է համապատասխան ուրվագծային քարտեզներ:
- Քարտեզի վրա և տեքստում ձեռք բերած տեղեկությունների օգնությամբ նկարագրում է Կովկասի համար բնութագրական նշանակալից պաշարները (նավթ, գազ, հանքային ջրեր և այլն.: բնական յուրահատկությունները, կապում է բնակչության ավանդական տնտեսական գործունեության հետ (օր., գոտայնությունը և գյուղատնտեսության մասնագիտացումը):
- Հավաքում է տեղեկություններ, դատում Կովկասի բնական-տարերային երևույթների (երկրաշարժ, սողվածք, լեռնահեղեղ և այլն) , շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրների և դրանց կարգավորման հնարավոր ուղիների մասին:
- Կովկասյան տարածաշրջանը համեմատում է աշխարհի մեկ այլ տարածաշրջանի հետ՝ ըստ աչքի ընկնող նշանների (տեղադրության, բնական պայմանների, բնակչության և այլն) նմանություն-տարբերությունները արտացոլում է իր համար ընդունելի ձևով:
- Կովկասի ուրվագծային քարտեզի վրա նշում է նշանակալից քաղաքները և դատում դրանց հիմնման պատճառների մասին:
- Կազմում է մեծ պետությունների ցուցակ, որոնք փորձում էին տիրապետել կամ իրենց գերիշխանությունն են հաստատել Հարավային Կովկասում, պատմական տարբեր դարաշրջաններում և համեմատում է դրանց գերիշխանության հետևանքները:

Պատմ. Աշխարհ. VIII.9.Գատում է պետությունում կառավարման ձևի և քաղաքական կարգի փոխադարձ կապի մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Թվարկում է տարբեր տեսակի (ժողովրդավարական, բռնապետական, ամբողջատիրական և այլն) պետություններ, միմյանց հետ համեմատում տարբեր քաղաքական կարգեր և ընտրում, իր կարծիքով, Վրաստանի համար արդյունավետը:

- Թվարկում է այն հասարակական շահերը, որոնք չի կարող անտեսել պետության ղեկավարությունը, իր կարծիքը հիմնավորում է պատմությունից բերված օրինակներով:
- Վրաստանի Սահմանադրության մեջ որոնում, գտնում և վերլուծում է այն դրույթները, որոնք կապված են ժողովրդավարության ապահովման հետ (օր.՝ իշխանության բաշխումը և ընտրովիությունը, բազմակուսակցություն, մարդու քաղաքական իրավունքները և այլն) : Արտահայտում է սեփական կարծիքը՝ ժողովրդավարության հզորացմանն ուղղված փոփոխությունների մասին:

Պատմ. Աշխարհ. VIII.10. Հետազոտում է միջազգային կազմակերպությունների դերը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Արտահայտում է սեփական տեսակետ՝ միջազգային կազմակերպությունների (օր., ՄԱԿ, ՆԱՏՕ, Եվրամիություն, Եվրախորհուրդ) ստեղծման և զարգացման մասին, խմբավորում դրանք՝ գործունեության համաձայն (ռազմա-քաղաքական, տնտեսական, բնապահպանական, մարզական և այլն):
- Հավաքում է տեղեկություններ և դատում Վրաստանի և Կովկասի համար նշանակալից միջազգային կազմակերպությունների գործունեության մասին, որոշում է դրանց դերը՝ երկրների ինտեգրման հարցում:

Պատմ. Աշխարհ. VIII.11. Դատում է պետության համար օրենքի գերակայության նշանակության մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դատում է յուրաքանչյուր քաղաքացու շահերի համար օրենքի գերակայության նշանակության մասին (օրինակ՝ կարգուկանոն, ազնիվ հարաբերություններ, մարդու իրավունքների պաշտպանություն, արդարացիություն և այլն) և բերում է համապատասխան օրինակներ սեփական դիտարկումներից և պատմությունից:
- Դատում է պետության համար սահմանադրության գոյության նշանակության և բնութագրիչ նշանների մասին:
- Համադասարանցիների խմբի հետ միասին կազմում է այն հարցերի ցուցակը, որոնք, ըստ նրանց, պետք է արտացոլվեն երկրի հիմնական օրենքում, խմբի կարծիքն իրազեկում է մյուս խմբերին, ունկնդրում է նրանց ներկայացուցչի շնորհանդեսը, մասնակցում մտքերի փոխանակությանն ու ընդհանուր որոշման ընդունմանը:

Մարդը և հասարակությունը

Պատմ. Աշխարհ. VIII.12. Վերլուծում է մարդու իրավունքների հիմունքները և դրանց զարգացման պատմական պայմանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սեփական իրավունքներից առանձնացնում է բնաշնորհի և ձեռքբերովի իրավունքները, անվանում այն արժեքները, որոնք դրված են նշված իրավունքների հիմքում:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է որևէ պատմական դարաշրջան և պետություն, որի օրինակով նկարագրում է ամենաիրավազուրկ մարդու վիճակը, անվանում այն արժեքները (օր.՝ արժանապատվություն, հավասարություն, ազատություն...), որոնց անտեսումն էլ հենց տեղի էր ունենում նրա նկարագրած դեպքում, և իրավունքները, որոնք, այնուամենայնիվ, ուներ մարդը:
- Տարբեր առարկաներից ստացած գիտելիքների հիման վրա, համեմատում է մարդու իրավունքների տարբեր կարգերը (օր.՝ անձնական, քաղաքական, տնտեսական և այլն) և դատում նմանության և տարբերության մասին, վերլուծում է մարդու իրավունքների զարգացման գործընթացը (նախապայմանները, պահանջներն ու հետևանքները) :
- Մասնակցում է դասարանային բանավեճին և պատասխանում հետևյալ հարցերին. ի՞նչ է ազատությունը, ազա՞տ են ես արդյոք: Բոլոր մարդիկ ազա՞տ են այսօր աշխարհում:

Պատմ. Աշխ. VIII.13. Բնութագրում է հասարակությունում խաղաղ համագոյակցության համար անհրաժեշտ պայմանները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հիշում է դեպք, երբ ինքը և իր ծանոթը որևէ կոնֆլիկտային իրավիճակում կատարել են միջնորդի (միջնորդ-հաշտարարի) դեր, համադասարանցիների հետ միասին խաղարկում է այս իրավիճակը և գնահատում ստեղծված իրավիճակը (օր.՝ հանգամանքներ, վտանգներ, կողմերի հնարավորություններ և նպատակներ և այլն) և միջնորդի վարվելաձևը (օր.՝ պատճառաբանություն, հատկանիշներ, գիտելիք, գործողություններ և այլն) :
- Բերում է օրինակներ՝ Վրաստանի և այլ երկրների պատմությունից կամ գեղարվեստական գրականությունից, երբ կոնֆլիկտային իրավիճակի կարգավորման համար ուժ չի գործադրվել:
- Թվարկում է բողոքի արտահայտման խաղաղ ձևերը, բերում է օրինակներ՝ Վրաստանի և այլ երկրների պատմությունից և կոնկրետ դեպքում գնահատում բողոքի արդյունքները:
- Թվարկում է այն արժեքները, որոնց նկատմամբ հարգանքի ցուցաբերումը

անհրաժեշտ է մարդկանց խաղաղ համագոյակցության համար, հիմնավորելիս օգտագործում է մարդկանց խաղաղ համագոյակցության (օր.՝ տարբերակված ռասայի, ազգության կամ դավանանքի) իրեն ծանոթ օրինակներ:

Մշակույթ և կրոն

Պատմ. Աշխ. VIII.14. Ուսումնասիրում է արվեստի և կրթության զարգացման հիմունքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ստեղծում է սեփական խորհրդանշանները և ուրվագծային քարտեզի վրա նշում Վրաստանի բնական և ճարտարապետական (տարբեր դարաշրջանների) հուշարձանները:
- Նկարագրումների կիրառումով, աղյուսակում խմբավորում և տարբերակում է տարբեր ոճով կառուցված ճարտարապետական հուշարձանները:
- Նկարագրում է հայրենի բնակավայրում գտնվող բնական կամ ճարտարապետական հուշարձանը (հուշարձանները) և դրա մասին ձեռք բերում տեղեկություններ (ավանդագրույց, ասք և այլն) :
- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների հետ միասին, բեմադրում է պատմական բնույթի ներկայացում և դատում դրանում շարադրված փաստերի մասին:
- Ծանոթանում է ՅՈՒՆԵՍԿՕ -ի բնական և մշակութային հուշարձանների ցուցակում ընդգրկված Կովկասում գոյություն ունեցող պահպանված օբյեկտներին և կարծիք արտահայտում՝ ինչ օբյեկտներ են ավելանալու այս ցուցակում և ինչու:
- Բնութագրում է կրթական հիմնարկությունների բաշխումը՝ Վրաստանի տարածաշրջանների համաձայն, դատում է՝ տարածաշրջանի զարգացման գործում դրանց դերի մասին:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է իրեն ծանոթ, հայտնի հին աշխարհի, միջին դարերի և ժամանակակից վրաց և արտասահմանյան կրթական կենտրոնները:
- Միմյանց է համեմատում, թե ինչպես էին սովորում երեխաները՝ տարբեր դարաշրջաններում և երկրներում (օր.՝ Աթենքում և Սպարտայում) :
- Բնութագրում է դարաշրջաններից մեկի համալսարանական համակարգը (օր.՝ միջին դարերի Եվրոպայի համալսարանի կառուցվածքը, դասախոսների և ուսանողների կենցաղը, առարկաների ցանկը և այլն) :
- Դատում է տարբեր դարաշրջաններում և երկրներում կրթություն ստանալու անհավասարության մասին, նշում է այդ անհավասարության պատճառները:
- Գրում է շարադրություն՝ տարբեր դարաշրջաններում և երկրներում տղաների և աղջիկների կրթություն ստանալու անհավասարության մասին:

Պատմ. Աշխարհ. VIII.15. Հետազոտում է հասարակության զարգացման մշակութային հիմունքները.

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դասարանում, խմբային կամ անհատական աշխատանքի ժամանակ խմբավորում է Կովկասի ժողովուրդների կենցաղում և սովորույթներում եղած նմանություններն ու տարբերությունները (օր., վրացիների և հյուսիսկովկասյան ժողովուրդների, վրացիների և հայերի և այլն):
- Իրեն ծանոթ սոցիալական միջավայրի օրինակով (օր.՝ ընտանիք, հարևանություն, դասարան, բարեկամներ, բնակավայր և այլն) առանձնացնում է այն գործոնները (օր.՝ ընդհանուր բարոյական արժեքներ, հանգամանքներ և այլն.: որոնք նրանց դարձնում են միմյանցից կախյալ, օրինակներ է բերում գեղարվեստական գրականությունից և պատմական աղբյուրներից:
- Ծանոթանում է տարբեր մշակույթներում հաստատված վարվելակարգի նորմերին և, համադասարանցիների խմբի հետ միասին, ընտրում ամենաընդունելին, խմբի անդամների հետ միասին խաղարկում է կոնկրետ իրավիճակ՝ այս նորմերը ներկայացնելու համար:
- Համեմատում է տարբեր կրոնական նորմերի և օրենսդրության ազդեցությունը հասարակության զարգացման վրա (օր., Իրան՝ իսլամ) :
- Թվարկում է հասարակությունում գործող «չգրված օրենքները» և կանոնները, հարևան ժողովուրդների մշակույթում որոնում-գտնում է համանման նորմեր, միմյանց է համեմատում և գնահատում, թե որքանով ընդունելի են դրանք իր համար:
- Անձնական փորձի հիման վրա՝ արտահայտում է սեփական կարծիքը՝ կուլտուրականության բնութագրիչ նշանների մասին, ունկնդրում է համադասարանցիների կարծիքները և քննարկման արդյունքում, նրանց հետ միասին, ստեղծում կուլտուրական մարդու և հասարակության դիմանկարը:
- Համադասարանցիների հետ միասին մշակում է դասարանում արդարացի փոխհարաբերությունների, վարվելակարգի կանոնները և պահպանում դրանք:
- Ուսուցչի օգնությամբ համադասարանցիների հետ միասին պլանավորում և իրականացնում է պարզ ազգագրական փորձարշավ՝ հայրենի տարածաշրջանում՝ բնական պայմանների և տեղական բնակչության կյանքի յուրահատկությունները (օր.՝ ծեփակերտում, ժողովրդական ստեղծագործություն, խաղեր) ուսումնասիրելու համար:
- Համադասարանցիների հետ միասին ընտրում է տարածված մարզաձևերից (աշխարհում կամ տարածաշրջանում: մեկը և քննարկում դրա զարգացման պայմանները (օր.՝ ծագումը, տարածման դինամիկան, արդյունավետությունը և այլն) , ուրվագծային քարտեզի վրա նշում է այդ մարզաձևի պատմական զարգացումը և խմբում քննարկման արդյունքների հետ միասին իրազեկում համադասարանցիներին:

- Դատում է՝ հասարակության համար միջազգային սպորտային կազմակերպությունների և շարժումների նշանակության մասին, համեմատում է սպորտի միջազգային և ազգային տեսակները՝ դրանց հանրաճանաչության պատճառների համաձայն:

Երաշխավորված բովանդակություն

1. Ռեզիոնալիզմ

ա. Հարուստ և աղքատ երկրներ:

բ. Կովկաս՝ դիրք, Սև և Կասպից ծովեր, բնական պայմաններ, բնակչությունը և տնտեսությունը:

գ. Կովկասը և այլ տարածաշրջաններ (օր., Բալկաններ) :

դ. Միջազգային կազմակերպություններ:

2. Հակամարտություններ և դրանց կարգավորումը:

ա. Հակամարտությունների պատճառները:

բ. Պատերազմների վարումը և բնույթը, պատերազմները և մարտական զենքը՝ հնագույն ժամանակներից մինչև այսօր:

գ. Ահաբեկչություն:

դ. Հակամարտությունների կարգավորում:

ե. Հակամարտությունների քաղաքական (սահմանների փոփոխությունը), տնտեսական (ետպատերազմյան ծանր կացությունը) , ժողովրդագրական (զոհ) և էկոլոգիական հետևանքները:

3. Հաղորդակցություն, առևտուր, ճանապարհորդություն, արտագաղթ:

ա. Հաղորդակցությունների զարգացումը

- Գրի ծագումը և նրա տեսակները (մեխենագիր, սեպագրություն, այբբենական գիր) :
- Գիրը Վրաստանում:
- Գրքի տպագրությունը աշխարհում և Վրաստանում:
- Տրանսպորտային հաղորդակցությունների զարգացումը հնագույն ժամանակներից առ այսօր (ցամաքային, ջրային և օդային) :
- Հունական գաղութացումից մինչև Տրասելա:
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ (փոստ, հեռագրատուն, զանգվածային լրատվամիջոցներ, ինտերնետ (համացանց):

բ. Առևտուրը

- Բնական փոխանակում:
- Առևտուրը Վրաստանում և աշխարհում՝ հնագույն ժամանակներից ցայսօր:
- Կոլխյան թեթրիից մինչև լարի:
- Ներքին և արտաքին առևտուրը:

գ. Ճանապարհորդությունը և աշխարհագրական մեծ հայտնագործությունները:

- Հին աշխարհի ճանապարհորդները:
- Աշխարհագրական մեծ հայտնագործություններ:
- Ճանապարհորդությունն այսօր (գրոսաշրջության տարատեսակները):

4. Բնակչությունը, վերաբնակեցումը, գաղթը, քաղաքաշինությունը:

- Բնակչության տարածքային բաշխումը և խտությունը:
- Բնակչության ժողովրդագրական բնութագրիչները (ծնելիություն, մահացություն, բնական աճ, սեռական-տարիքային կառուցվածք, բազմացման տեսակները):
- Արտագաղթ հասկացությունը, նրա հարուցիչ պատճառները և գործոնները:
- Ժողովուրդների մեծ արտագաղթերը Հին Արևելքում, անտիկ աշխարհում, միջին դարերի Եվրոպայում և Ամերիկայում:
- Արտագաղթի գործընթացները Վրաստանում՝ հնագույն ժամանակներից մինչև այսօր:
- Քաղաքաշինություն:

5. Արվեստ

ա. Նկարչությունը, քանդակագործությունը, գրականությունը, երաժշտությունը, թատրոնը և կինոն Վրաստանում և աշխարհում, հնագույն ժամանակներից մինչև այսօր:

բ. Ճարտարապետություն, աշխարհագրական գործոնների ազդեցությունը:

գ. Աշխարհի մշակութային և բնական ժառանգության պահպանումը՝ ՅՈՒՆԵՍԿՕ:

6. Կրթություն

ա. Կրթական կենտրոնները Վրաստանում և աշխարհում՝ հնագույն ժամանակներից մինչև այսօր:

բ. Կրթության նշանակությունն այսօր:

Վրաստանի աշխարհագրություն
IX դասարան
Արդյունքներն ուղղությունների համաձայն

Ժամանակը և տարածությունը	Միջավայրը և սոցիալական համակարգերը	Պետական կառավարումը և քաղաքականությունը
<p>1. Քարտեզների և աշխարհագրական միջոցների (լուսանկարներ, գծապատկերներ, աղյուսակներ, դիագրամներ և այլն) օգնությամբ բնութագրում է վայրը, իրադարձությունը և գործընթացները, կազմում է թեմատիկ քարտեզներ:</p>	<p>2. Բնութագրում է և վերլուծում Վրաստանի բնական պայմանները: 3. Վրաստանի բնական և անթրոպոգենային լանդշաֆտները կապում է նրանց տնտեսական կիրառության հետ: 4. Վերլուծում է Վրաստանում աշխարհագրական-բնապահպանական հիմնախնդիրների առաջացման բնական և անթրոպոգենային աղբյուրները: 5. Բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և հարաշարժ բնութագրիչները կապում է երկրի տնտեսական ակտիվության հետ: 6. Վերլուծում է Վրաստանի բնակչության գաղթային և քաղաքաշինական գործընթացները և անում կանխատեսումներ: 7. Վերլուծում է վրացական ավանդույթների աշխարհագրական յուրահատկությունները:</p>	<p>8. Քննարկում է Վրաստանի տեղադրությունը և որոշում երկրի համար նրա նշանակությունը: 9. Վերլուծում է Վրաստանի տնտեսության ռազմավարական բնագավառները և նրանց զարգացման հեռանկարները: 10. Որոշում է Վրաստանի տեղը աշխարհում՝ սոցիալ-տնտեսական պարամետրերի համաձայն:</p>

Արդյունքները և ստուգիչները Ժամանակը և տարածությունը

Աշխարհ. IX. 1. Քարտեզների և աշխարհագրական միջոցների (լուսանկարներ, գծապատկերներ, աղյուսակներ, դիագրամներ և այլն) օգնությամբ բնութագրում է վայրը, իրադարձությունը և գործընթացները, կազմում է թեմատիկ քարտեզներ:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Վերլուծում է քարտեզների, գծագրերի, աղյուսակների, դիագրամների և գծապատկերների միջոցով ներկայացված աշխարհագրական տեղեկությունը:
- Ըստ լուսանկարների վերլուծում է Վրաստանի բնապատկերները:
- Կոորդինատային ցանցի օգտագործմամբ որոշում է Վրաստանի նշանակալից աշխարհագրական օբյեկտների, տարածաշրջանների և վարչական կենտրոնների գտնվելու վայրերը:
- Հետազոտման նպատակի նախատեսումով՝ որոնում-գտնում է և ըստ անհրաժեշտության օգտագործում համապատասխան թեմատիկ քարտեզները:
- Միևնույն վայրի տարբեր թեմատիկ քարտեզների համադրման հիման վրա անց է կացնում համալիր վերլուծություն (օրինակ՝ ֆիզիկա-աշխարհագրական, բնակչության, գյուղատնտեսության մասնագիտացման քարտեզներ):
- Հայթայթած տեղեկության հիման վրա կազմում է Վրաստանի թեմատիկ քարտեզներ (երկրամասային, պատմա-աշխարհագրական գավառներ, բնակչության խտություն, հիմնական կրոնների տարածումը և այլն):
- Վիճակագրական տեղեկության հիման վրա կազմում է տարբեր բարդության գծագրեր (գծապատկեր, դիագրամ և այլն):
- Խմբում աշխատելիս, փորձարշավ անցկացնելու նպատակով՝ ընտրում է որևէ պատմա-աշխարհագրական գավառ, տարածաշրջան կամ շրջան և դասարանի ներկայությամբ ներկայացնում է նրա իրականացման պլանը (նպատակ, ուղերթ, ժամկետը, փոխադրամիջոցը, հետը տանելու իրեր և այլն): Կազմում է փորձարշավն արտացոլող սխեմատիկ պլան:

Միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխարհ. IX. 2. Բնութագրում է և վերլուծում Վրաստանի բնական պայմանները:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Որոշում է պատճառա-հետևանքային կապեր ֆիզիկա-աշխարհագրական պարամետրերի միջև և դատում է նրանց աշխարհագրության մասին (օրինակ՝ Վրաստանի ռելիեֆի ձևերը և կլիմայի յուրահատկությունները կապում է

ջրագրական ցանցի ձևավորում-տարածման հետ): Այս ցուցանիշների համաձայն համեմատում է Արևմտյան և Արևելյան Վրաստանը:

- Քարտեզի և այլ տեղեկության օգտագործմամբ բնութագրում է նշանակալից աշխարհագրական օբյեկտները և իրադարձությունները: Նրանցից առանձնացնում է ռեկորդային ցուցանիշ ունեցողը (տեղումներ, քամի, սողանք և այլն) և լրացնում է համապատասխան ուրվագծային քարտեզը:
- Քարտեզների և տեքստային նյութի օգտագործմամբ նկարագրում է Վրաստանին բնորոշ նշանակալից ռեսուրսները (հանքային և վառելիքային պաշարներ, շինանյութեր, հանքային ջրեր և այլն) և կապում բնակչության տնտեսական գործունեության հետ (օրինակ՝ գոտայնությունը և գյուղատնտեսության մասնագիտացումը): Վրաստանի տարածաշրջանները խմբավորում է տվյալ բնութագրիչի համաձայն:
- Տեղեկություններ է հավաքում (դասագիրք, զանգվածային լրատվամիջոցներ և այլն), դատում Վրաստանի բնական տարերային երևույթների մասին (երկրաշարժ, սողանք, հեղեղ և այլն), բնապահպանական հիմնախնդիրների և նրանց վճռման հնարավոր ուղիների մասին:
- Տեղեկություններ է հավաքում (Վրաստանի քարտեզագիրք և այլն) և համեմատում Վրաստանի երկու տարբերվող տարածաշրջաններ՝ ակնառու նշանների համաձայն (տեղադրավայրի, ռելիեֆի, կլիմայի, ջրագրական ցանցի և այլ): Նմանություն-տարբերություններն արտացոլում է իր համար ընդունելի ձևով:
- Համեմատում է և խմբավորում Վրաստանի էներգետիկ պաշարները (օրինակ՝ ավանդական և այլընտրանքային էներգապաշարներ)՝ բնապահպանական անվտանգության համաձայն:
- Ծանոթանում է կայուն զարգացման բնապահպանական թեմաների, առանձնացնում նրանցից Վրաստանի համար հրատապը և դատում դրա առաջացնող պատճառների և հետևանքների մասին:

Աշխարհ. IX. 3. Վրաստանի բնական և անթրոպոգենային լանդշաֆտները կապում է նրանց տնտեսական կիրառության հետ:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Աշխարհագրական գործոնների պատճառա-հետևանքային կապերի ընդհանրացման հետևանքով, ակներև նշանների համաձայն դատում է Վրաստանին բնորոշ բնական լանդշաֆտների (մերձծովյա, անտառային, լեռնային և հարթավայրային) առանձնահատկությունների մասին:
- Տեղեկություններ է հավաքում (Վրաստանի քարտեզագիրք և այլ) և լանդշաֆտի շրջանակներում կապում գոյություն ունեցած բնական գործոնները, բնակչությունը և տնտեսությունը, դատում է նրա կայուն զարգացման հեռանկարների մասին:
- Օգտագործում է քարտեզներ և բացատրում Վրաստանի ագրարային և

ինդուստրիալ լանդշաֆտների տարածման յուրահատկությունները:

- Նկարագրողունների միջոցով համեմատում է Վրաստանի ագրարային և ինդուստրիալ լանդշաֆտները աշխարհի նույնօրինակ լանդշաֆտների հետ, նմանություն-տարբերություններն արտացոլում է իր համար ցանկալի ձևով:

Աշխարհ. IX. 3. Վերլուծում է Վրաստանում աշխարհագրական-բնապահպանական հիմնախնդիրների առաջացման բնական և անթրոպոգենային աղբյուրները

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Թվարկում է Վրաստանում հողի, ջրի, օդի աղտոտման հիմնական աղբյուրները, դրանք խմբավորում է ծագման համաձայն և դատում աղտոտումը նվազեցնելու հնարավոր ուղիների մասին: Հետազոտման արդյունքներն արտացոլում է գծապատկերի կամ աղյուսակի տեսքով:
- Նկարագրում է Վրաստանում տարածված որոշ տարերային երևույթների աղետալի բնույթը և դատում նրանցից խուսափելու հնարավոր միջոցառումների մասին: Դասարանի առջև ներկայացնում է հետազոտման արդյունքները:
- Թվարկում է Վրաստանում աշխատող բնապահպանական կազմակերպությունները և ծանոթանում նրանց աշխատանքի ռազմավարություններին: Կարող է նրանց դիմել՝ ըստ անհրաժեշտության:
- Հասակակիցների հետ կազմում է և ըստ հնարավորինս իրականացնում բնապահպանական նախագծեր (նպատակ, խնդիրներ, վճռման ուղիներ, սպասվելիք արդյունքներ):
- Վերլուծում է Վրաստանում պահպանված տարածքների տարբեր ձևերի գոյության նշանակությունը (ծանոթանում է աշխարհում գոյություն ունեցած նմանօրինակների) և քարտեզի օգտագործմամբ դատում է նրանց զարգացման հեռանկարների մասին:
- Տարբեր տեսակի աշխարհագրական միջոցների օգնությամբ դատում է Վրաստանում պահպանված տարածքների բաշխման և ստեղծման պատճառների մասին (Օրինակ՝ Բաժարա - Ութխովարի, Բաբանուրի-Չելքվա) և կազմում համապատասխան քարտեզ:

Աշխարհ. IX. 5. Բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և հարաշարժ բնութագրիչները կապում է երկրի տնտեսական ակտիվության հետ (Պատմ. IX. արդ. 1).¹

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Հիմնվելով վիճակագրական տվյալների վրա՝ դատում է Վրաստանում բնակչության դինամիկայի, բնակման և խտության մասին, դրանք կապում է սոցիալ-տնտեսական վիճակի հետ:
- Բնութագրում է Վրաստանում բնակչության մարդահամարի ավանդույթները

¹ Աշխարհագրության և պատմության այս արդյունքներին պետք է հասնել այս երկու առարկաների համակարգված ուսուցումով:

(Գուրջիստանի վիլայեթի մեծ դավթար, Ռուսաստանի կայսրության մարդահամարներ, ԽՍՀՄ բնակչության համընդհանուր մարդահամարներ, անկախ Վրաստանի 2002 թ. բնակչության համընդհանուր մարդահամար), դրանք համեմատում է ուրիշ երկրների նման փորձի հետ և դատում նրանց հուսալիության մասին:

- Վերլուծում է Վրաստանի բնակչության ժողովրդագրական հեռանկարը, վիճակագրական տվյալների հիման վրա կազմում սեռական-տարիքային բուրգեր և համեմատում այլ երկրների նման օրինակների հետ:
- Վիճակագրական տեղեկության հիման վրա համեմատում է Վրաստանի երկու հակադիր տարածաշրջաններում գոյություն ունեցող ժողովրդագրական իրավիճակը, դատում ստեղծված իրավիճակի առաջացման պատճառների և նրա բարելավման ուղիների մասին;
- Տեղեկություններ է ձեռք բերում և դատում տարբեր երկրներում իրականացված ժողովրդագրական քաղաքականության մասին, ենթադրություն է արտահայտում Վրաստանում հնարավոր ժողովրդագրական քաղաքականության անցկացման մասին:

Աշխարհ. IX.6. Վերլուծում է Վրաստանի բնակչության գաղթային և քաղաքաշինական գործընթացները և անում է կանխատեսումներ
(Պատմ. IX. արդ. 2).²

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Դատում է Վրաստանում առկա գաղթային գործընթացներն առաջացնող պատճառների, հոսքերի, հաճախականության մասին և դրանք կապում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հետ:
- Դասարանում խմբային աշխատանքի ժամանակ մշակված սոցիոլոգիական հետազոտման հարցարանի հիման վրա անց է կացնում հետազոտում (դասարանում, դպրոցում, բարեկամության շրջանում, հարևանության մեջ), դատում Վրաստանում գաղթային գործընթացների զարգացման մասին և արդյունքները ներկայացնում դասարանին:
- Դատում է քաղաքաշինությանն օժանդակող և խանգարող գործոնների և նրանց հետ կապված սոցիալական, տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրների մասին, հիմնախնդիրները խմբավորում է աղյուսակում:
- Հետազոտում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետևանքով Վրաստանում բնակավայրերի գործառույթը կորցնելու կամ ձեռք բերելու հետևանքով առաջացած սոցիալական հիմնախնդիրները և արդյունքներն արտահայտում է իր համար ցանկալի ձևով (աղյուսակ, գծապատկեր ...):
- Ընտրում է Վրաստանի որևէ քաղաք և ստեղծում նրա հեռանկարային զարգացման պարզ նմուշօրինակ:
- Վերլուծում է Վրաստանում բնակավայրերի տեսակները, մեծությունը,

² Աշխարհագրության և պատմության այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցմամբ:

գործառույթը և համեմատում դրանք աշխարհի տարբեր երկրների նման օրինակների հետ, արդյունքներն արտահայտում է իր համար ցանկալի ձևով (բառային, գրավոր, նկարի ձևով):

- Արտահայտում է սեփական վերաբերմունքը Վրաստանի ներքին և արտաքին գաղթային գործընթացների հետևանքով առաջացած սոցիալական փոփոխությունների մասին և դատում իրավիճակի բարելավման հնարավոր ուղիների մասին:

Աշխարհ. IX. 7. Վերլուծում է վրացական ավանդույթների աշխարհագրական յուրահատկությունները (Պատմ. IX. արդ. 5).³

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Ժողովրդական ճարտարապետությունը կապում է Վրաստանի բնական պայմանների հետ: Համեմատում է տարբեր պատմա-աշխարհագրական գավառների բնակատեղերը և նմանություն-տարբերություններն արտահայտում իր համար ցանկալի ձևով (նկար, աղյուսակ և այլն):
- Դատում է Վրաստանում տարածված ժողովրդական արհեստի բազմերանգությունն առաջացնող աշխարհագրական գործոնների մասին: Համեմատում է և խմբավորում տարբեր պատմա-աշխարհագրական գավառներում գոյություն ունեցած ժողովրդական արհեստի ավանդույթները:
- Դատում է Վրաստանի տարբեր անկյուններում տարածված ավանդական հագուստի, խոհանոցի և սեղանի յուրօրինակության մասին: Դրանք կապում է շրջապատի յուրահատկությունների հետ, համեմատում միմյանց և նմանություն-տարբերություններն արտահայտում է իր համար ցանկալի ձևով (գրում է շարադրություն, պատրաստում ցուցադրափեղկ, ուրվանկար և այլն):
- Դատում է Վրաստանի պատմա-աշխարհագրական գավառներում տարածված ծիսկատարությունների մասին, համեմատում նման բովանդակություն ունեցող ծիսակատարությունները և նմանություն-տարբերություններն արտահայտում իր համար ցանկալի ձևով (գրավոր, բանավոր, աղյուսակի):

Պետական կառավարում և քաղաքականություն

Աշխարհ. IX. 8. Քննարկում է Վրաստանի տեղադրությունը և որոշում երկի համար նրա նշանակությունը (Պատմ. IX. արդ.3).⁴

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Դատում է սահմանների անցկացման յուրահատկությունների և նշանակության մասին՝ միջազգային, ազգային և տեղական մակարդակներում:

³ Աշխարհագրության և պատմության այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցմամբ:

⁴ Աշխարհագրության և պատմության այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցմամբ:

- Դատում է Վրաստանի տարածքի ձևավորման մասին, ուրվագծային քարտեզի վրա անց է կացնում տարբեր դարաշրջանների սահմաններ:
- Բացատրում է ֆիզիկա-աշխարհագրական, տնտեսա-աշխարհագրական և աշխարհաքաղաքական տեղադրությունը սահմանող գործոնները՝ տեղական և գլոբալ մակարդակներով, զուգահեռներ է անցկացնում աշխարհի երկրների հետ:
- Գնահատում է Վրաստանի տեղադրությունը, բնական պայմանները և ռազմավարական պաշարները (հանքային պաշարները): Ենթադրություն է արտահայտում երկրի զարգացման հեռանկարների մասին:
- Որոշում-գտնում է Եվրոպա-Ասիայի միջև սահմանի անցկացման տարբեր վարկածներ: Հիմնավորում իր համար ընդունելի տարբերակի ճշմարտացիությունը և այն անցկացնում ուրվագծային քարտեզի վրա:

Աշխարհ.IX.9. Վերլուծում է Վրաստանի տնտեսության ռազմավարական բնագավառները և նրանց զարգացման հեռանկարները (⁵ Պատմ IX. արդ.1).⁶

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Թվարկում է Վրաստանի տնտեսության ռազմավարական բնագավառների (օրինակ՝ զբոսաշրջություն, գյուղատնտեսություն, էներգետիկա և այլն) զարգացման համար անհրաժեշտ գործոնները, ինչի հիման վրա էլ խմբավորում է բնակավայրերը, շրջանները կամ տարածաշրջանները:
- Դատում է Վրաստանում տնտեսության ռազմավարական բնագավառների (օրինակ՝ ագրոգործարարություն և այլ) զարգացման հեռանկարների մասին՝ աշխարհի երկրների փորձի նախատեսումով:
- Օգտագործում է Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագիրը», բնութագրում է այն ժամանակվա Վրաստանի գյուղատնտեսության գոտայնությունը և այն համեմատում ժամանակակից պատկերի հետ:
- Դատում է Վրաստանում տարբեր հաղորդակցության միջոցների նշանակության և զարգացման հեռանկարների մասին: Ուրվագծային քարտեզի վրա տեղադրում է նշանակալի տրանսպորտային հանգույցները և մայրուղիները:
- Տեղեկություններ է որոշում-գտնում տարբեր տեսակի զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի մասին: Ընտրում է Վրաստանի շրջաններից մեկը և գրում նախագիծ զբոսաշրջության համապատասխան տեսակի զարգացման վերաբերյալ:
- Վիճակագրական նյութի հիման վրա հետազոտում է Վրաստանի առևտրային հաշվեկշռի ձևափոխումը XX-XXI դարերի ընթացքում և կապում այն երկրի տնտեսական զարգացման հետ:

⁵ Այս խորհրդանշանը նշանակում է կապ (լինկ):

⁶ Աշխարհագրության և պատմության այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցմամբ:

2009

- Ծանոթանում է կայուն զարգացման տնտեսական տեսությունների, նրանցից ընտրում է Վրաստանի համար հրատապը և դատում առաջացնող պատճառների և արդյունքների մասին:

Աշխարհ. IX. Վերլուծում է Վրաստանի տեղն աշխարհում՝ սոցիալ-տնտեսական պարամետրերի համաձայն (*Պատմ. IX. արդ.2*)⁷:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Թվարկում է երկրի զարգացմանը խանգարող և օժանդակող գործոնները: Խմբավորում է դրանք աղյուսակում և դրանց համապատասխանեցնում Վրաստանում առկա իրավիճակը:
- Նկարագարողությունների վերլուծության հիման վրա՝ մշակում է երկրի զարգացման մակարդակի ցուցանիշները, կազմում է սեփական չափանիշները (աշխատատեղեր, առևտրի օբյեկտներ, միջին աշխատավարձ, փոխադրամիջոցներ, բնակարաններ) և հիմնավորում իր տեսակետները:
- Ջննում է երկրների հյուսիս-հարավի բաժանման (տնտեսական զարգացման մակարդակի ցուցանիշ) քարտեզը և աղյուսակում խմբավորում երկրներն՝ ըստ մայրցամաքների և զարգացման մակարդակի:
- Մարդկային զարգացման դասիչի միջոցով տարբերում է տարբեր երկրները և Վրաստանը: Դատում է այս դասակարգման յուրահատկությունների մասին, կազմում համապատասխան գծագիր, աղյուսակ:
- Դատում է տարբեր բնագավառներում Վրաստանի ռազմավարական գործընկեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների հեռանկարների մասին և արդյունքներն արտահայտում ցանկալի ձևով:

⁷ Աշխարհագրության և պատմության այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցմամբ:

IX դասարան

Վրաստանի պատմություն

Պատմ. IX		Ուղղություն	
Բնությունը և տնտեսությունը	Պետության կառավարումը և սոցիալական կառույցները	Քաղաքականություն	Մշակույթը և կրոնը
1. Աշակերտը վերլուծում է Վրաստանի տնտեսական հարաբերությունների զարգացումը տարբեր դարաշրջաններում:	2. Աշակերտը վերլուծում է Վրաստանի կառավարման կառույցները հնագույն ժամանակներից մինչև 3. Աշակերտը հետազոտում է սոցիալական հարաբերությունները Վրաստանում հնագույն ժամանակներից մինչև 3. Աշակերտը հետազոտում է սոցիալական հարաբերությունները Վրաստանում հնագույն ժամանակներից մինչև	4. Աշակերտը վերլուծում է արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը Վրաստանի պետության առաջացման և զարգացման վրա:	5. Աշակերտը հետազոտում է Վրաստանում գոյություն ունեցող կրոնները: 6. Աշակերտը հետազոտում է վրացական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև 6. Աշակերտը հետազոտում է վրացական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև

Արդյունքները և ստուգիչները
Բնությունը և տնտեսությունը

Պատմ. IX 1. Աշակերտը վերլուծում է տարբեր դարաշրջաններում տնտեսական հարաբերությունների զարգացումը Վրաստանում (¹ Աշխ. IX. աղբ. 5, 9).²

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Ուրվագծային քարտեզի վրա նշում է Վրաստանի տարածքում տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցած առևտրային ճանապարհները:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է ենթադրյալ ճանապարհները, որոնց միջոցով տարբեր դարաշրջաններում Վրաստանն առևտուր էր անում այլ պետությունների հետ:
- Աղյուսակի միջոցով խմբավորում է և դատում այն ներքին և արտաքին գործոնների մասին, որոնք տարբեր դարաշրջաններում խանգարում էին ներքին և արտաքին առևտրի զարգացմանը:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է տարբեր ժամանակաշրջաններում վրացական դրամի տարածման արեալը և այն երկրները, որոնց դրամական

¹ Այս խորհրդանշանն արտահայտում է կապ (լինկ):
² Պատմության և աշխարհագրական այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցումով:
 Պատմ. IX - 45

միավորներին հանդիպում ենք Վրաստանի տարածքում:

- Դատում է, թե ինչպես էին փոխվում առևտրային հարաբերությունները Վրաստանում տրանսպորտի զարգացման հետ:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է Վրաստանի տարածքում գոյություն ունեցած բնական հանածոների արդյունահանման վայրերը և խոսում է արհեստագործության կամ արդյունաբերության այն բնագավառների մասին, որոնց զարգացմանն օժանդակել է դրանց արդյունահանումը:
- Գրավոր դատում է Վրաստանի տնտեսության մեջ, օտար երկրի կառավարումից բխած, դրական և բացասական փոփոխությունների մասին (օրինակ՝ XIX դարում Ռուսաստանի կառավարումը Վրաստանում):
- Դատում է, թե ինչպես էր Վրաստանում փոխվում գյուղի տնտեսությունը գյուղատնտեսական տեխնիկայի զարգացման հետ:
- Միմյանց է համեմատում տարբեր դարաշրջաններում Վրաստանի տարբեր անկյուններում գյուղական տնտեսության ավանդական բնագավառների զարգացումը:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է Վրաստանի արդյունաբերական կենտրոնները և բնութագրում է նրանցից մեկը:
- Միմյանց է համեմատում պլանային և շուկայական տնտեսությունը և դատում Վրաստանում պլանային տնտեսությունից շուկայականին անցնելուց առաջացած փոփոխությունները:
- Դատում է տարբեր դարաշրջաններում Վրաստանի տնտեսության՝ տարածաշրջանի, կայսրության և համաշխարհային էկոնոմիկային ինտեգրման մասին (օրինակ՝ Վրաստանը և Կովկասը, Վրաստանը և Խորհրդային Միությունը, Վրաստանը և աշխարհը):

Պետական կառավարումը և սոցիալական կառուցվածքը

Պատմ. IX 2. Վերլուծում է Վրաստանի կառավարական կառույցները հնագույն ժամանակներից մինչև օրս

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Դատում է տարբեր ժամանակների վրացական թագավորությունների պետական կարգի մասին և թվարկում նմանությունները և տարբերությունները (օրինակ՝ Փառնավազի ժամանակվա Քարթլիի և Թամարի ժամանակաշրջանի Վրաստանի թագավորությունները):
- Բնութագրում է և համեմատում տարբեր շրջաններում Վրաստանում պետության կառավարման կառույցներում իրականացված բարեփոխումները:
- Բնութագրում է և համեմատում միջնադարյան և ժամանակակից Վրաստանի պետական կառույցները: Դատում է նրանց գործառույթների մասին:

- Համեմատում է Վրաստանը և այլ ժողովրդավարական երկրների կառավարման կառույցները:

Պատմ. IX 3. Աշակերտը հետազոտում է սոցիալական հարաբերությունները Վրաստանում հնագույն ժամանակներից մինչև օրս (³ Աշխ. IX. արդ. 6).⁴

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Ժամանակագրական կարգով խմբավորում է տարբեր ժամանակաշրջանների սոցիալական շերտերի ներկայացուցիչներին և դատում նրանց փոխադարձ վերաբերմունքի մասին, օրինակ.

Ժամանակաշրջանը	Սոցիալական շերտերը
XI-XIII դարեր	մեծազնվական-ազնվական-գյուղացի-առևտրական-արհեստավոր
XV-XVIII դարեր	իշխան-ազնվական-գյուղացի-առևտրական-արհեստավոր

- Դատում է Վրաստանում քաղաքաշինությանը առաջացած սոցիալական փոփոխությունների մասին:
- Վերլուծում է բարեփոխումներից առաջացած փոփոխությունները սոցիալական կառույցներում (օրինակ՝ ճորտատիրության վերացումը Վրաստանում):
- Վերլուծում է տարբեր ժամանակաշրջանների Վրաստանում ստեղծված կուսակցությունները և տարբերվող սոցիալական շերտերի միջև փոխհարաբերությունները:

Ուղղություն՝ քաղաքականություն

Պատմ. IX 4. Աշակերտը վերլուծում է արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը վրացական պետության առաջացման և զարգացման վրա (Աշխ. IX. արդ. 7).⁴

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Աղյուսակի միջոցով առանձնացնում է արտաքին և ներքին գործոնը (գործոնները), որը պետության կամ պետության մի մասի (օրինակ՝ իշխանություն) առաջացման պատճառներից մեկն է դարձել:
- Աղյուսակի միջոցով առանձնացնում է արտաքին և ներքին գործոնը (գործոնները) , որը պետության կամ պետության մի մասի (օրինակ՝ իշխանություն) առաջացման պատճառներից մեկն է դարձել:

Օրինակ՝

Արտաքին գործոն	Պետություն
1. Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության մասնատումը 2. ա) 1917 թվականի Ռուսաստանի հեղափոխությունը բ) I համաշխարհային պատերազմը	1. Քարթլիի թագավորություն 2. Վրաստանի անկախ պետություն

- Դատում է կոնկրետ արտաքին գործոնի մասին, որն ազդել է պետության հետագա զարգացման վրա (օրինակ՝ I խաչակրաց արշավանքն առաջացրել է թուրք-սելջուկների պետության թուլացում և համապատասխանաբար Վրաստանի հզորացում):
- Շարադրություն է գրում, որտեղ հետազոտում է հակամարտությունը պետությունների միջև և նրա ազդեցությունը հարևանների վրա (օրինակ՝ պարսկա-բյուզանդական պատերազմը VI դարում և նրա ազդեցությունը Քարթլիի և Էգրիսիի թագավորությունների վրա):
- Վերլուծում է և համեմատում արտաքին գործոնների ազդեցությունը երկրի ներքին հակամարտությունների վրա:
- Աղյուսակում ժամանակագրական հաջորդականությամբ խմբավորում է պետությունները, որոնք կորցրել են անկախությունը (կամ ընդհանրապես վերացել են) և մատնանշում է այս երևույթի առաջացման արտաքին և ներքին գործոնները: Օրինակ.

Դար	Պետություն	Արտաքին գործոն	Ներքին գործոն
VI դար	Քարթլիի թագավորություն	Պարսիկների կողմից թագավորության վերացումը	Թագավորի միանձնյա կառավարման թուլացում
XIX դարի սկիզբ	Քարթլ-Կախեթիի թագավորություն	Ռուսաստանի, Պարսկաստանի և օսմանների քաղաքականությունը Կովկասում	ա) Երկրի տնտեսական թուլացում բ) Դիմակայություն Բատոնիշվիլիների միջև
XX դարի վերջ	Խորհրդային Միություն	Դիմակայություն ժողովրդավարական երկրների հետ	ա) Պլանային տնտեսություն բ) Ազգային շարժման հզորացում

- Ուրվագծային քարտեզի վրա նշում է ներքին պատերազմներից բխած տարածքային փոփոխությունները:
- Դատում է համաշխարհային պատերազմներից առաջացած գլոբալ փոփոխությունների և Վրաստանի համար այս փոփոխությունների նշանակության մասին (օրինակ՝ I համաշխարհային պատերազմի արդյունքն էր կոմունիզմը և ֆաշիզմը) :
- Վերլուծում է միջազգային կազմակերպությունների ազդեցությունը Վրաստանի պետության զարգացման վրա:

Ուղղություն՝ մշակույթը և կրոնը

Պատմ. IX 5. Աշակերտը հետազոտում է Վրաստանում գոյություն ունեցած կրոնները: (Աշխ. IX. արդ. 7).⁴

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Կազմում է Վրաստանում տարածված հեթանոսական աստվածությունների մասին ցուցակ: Գտնում նրանց զուգադրությունները հին արևելյան և անտիկ պանթեոններում:
- Վերլուծում է, թե ինչ փոփոխություններ է կրել Վրաստանում հեթանոսությունը Քարթլիի պետության առաջացումից հետո (օրինակ՝ խիստ ստորակարգության պահպանում, նոր պաշտամունքների ներմուծում և այլն):
- Խմբավորում է Վրաստանում քրիստոնեության պետական կրոն հայտարարելուն օժանդակող և խանգարող գործոնները:
- Ընտրում է վրաց եկեղեցու երկու ներկայացուցչի և համեմատում նրանց գործունեությունը կրոնական և մշակութային բնագավառներում:
- Կազմում է Վրաստանում տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցած կրոնական դավանանքների ցանկը և դատում նրանց հարաբերությունների մասին ինչպես միմյանց, այնպես էլ պետության հետ:
- Նկարագրում է վրացական ուղղափառ եկեղեցու կառուցվածքը տարբեր դարաշրջաններում և նկարագրում եկեղեցական պաշտոնները:

Պատմ. IX 5. Աշակերտը հետազոտում է վրացական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև օրս:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Ուրվագծային քարտեզի վրա նշում է Վրաստանում և նրա սահմաններից դուրս գոյություն ունեցած կրթօջախները և կազմում այն առարկաների ցանկը, որ դասավանդում էին այնտեղ:

³ Այս խորհրդանշանն արտահայտում է կապ (լինկ):

⁴ Պատմության և աշխարհագրական այս արդյունքներին պետք է հասնեն այս երկու առարկաների համակարգված ուսուցումով

2009

- Գրավոր նկարագրում է և բնութագրում իր բնական վայրում (քաղաքում, գյուղում, շրջանում) գտնվող մշակութային ժառանգության հուշարձան (օրինակ՝ գորեցի աշակերտը բնութագրում է Ուփլիսցիխեն կամ Գորիի բերդը) :
- Ըստ գործառույթների խմբավորում է և ուրվագծային քարտեզի վրա նշում իրեն ծանոթ վրացական ճարտարապետական հուշարձանները (օրինակ՝ աշխարհիկ նշանակման՝ բերդաքաղաքներ, բերդեր և այլն, դավանանքային նշանակման՝ տաճարներ, վանքեր-եկեղեցիներ):
- Դատում է վրացական և օտար մշակույթի փոխհարաբերության և փոխազդեցության մասին, գրում է շարադրություն, որում քննարկում է մեկ կոնկրետ օրինակ (օր.՝ հարաբերությունը հունական աշխարհի հետ Հելլենիզմի դարաշրջանում, քրիստոնեական և արևելյան մշակույթների ազդեցությունը վրացական մշակույթի վրա միջնադարում և այլն):

Բովանդակություն⁵**1. Վրաստանը հնագույն ժամանակվանից մինչև Հելլենական դարաշրջանի սկիզբը**

- ա) Քարե դար*
- բ) Բրոնզե դար*
- գ) Վրացիների ծագումը*

Վրաստանը մ.թ.ա III դարից մինչև մ.թ . IV դարը

- ա) Մերձավոր Արևելքը և Քարթլիի թագավորությունը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո (մ.թ.ա. III-II դդ.)*
- բ) Հռոմի պետությունը և Մերձավոր Արևելքի երկրները մ.թ.ա II-I դդ.*
- գ) Քարթլին մ.թ. I-III դդ.-ում (Հռոմը և Պարթևական պետությունը)*
- դ) Արևմտյան Վրաստանի թագավորությունները I-III դդ.-ում*

2. Վրաստանը IV-X դարերում

- ա) Զրիստոնեությունը Քարթլիում*
- բ) Վրաստանը և նրա հարևան պետությունները IV-V դարերում*
- գ) Բյուզանդիա-Իրան պատերազմները և Վրաստանը VI-VII դարերում*
- դ) Արաբները և Վրաստանը*
- ե) Վրացական թագավորություն-կառավարչությունները VIII-X դարերում*

3. Միասնական վրացական պետությունը XI-XII դարերում

- ա) Վրաստանը X դարի վերջին և XI դարի առաջին կեսում*
- բ) Թուրք-սելջուկները և Վրաստանը*
- գ) Դավիթ IV Շինարար*
- դ) Վրաստանը XII դարի միջին շրջանում*
- ե) Թամար թագուհի*

4. Վրաստանը XIII դար - XV դարի I կեսում

- ա) Մոնղոլները և Վրաստանը*
- բ) Գիորգի V Պայծառակերպը*

⁵ Չափորոշում տրված արդյունքներին կարելի է հասնել այս բովանդակության ուսուցումով:

- գ) Լենգ-Թեմուրի արշավանքները
- դ) Վրաստանը XV դարի I կեսում

5. Վրացական թագավորություն-կառավարչությունները XV դարի II կեսում - XVIII դարում

- ա) Քաղաքական իրավիճակը XV դ. միջին շրջանի Մերձավոր Արևելքում և Վրաստանի մասնատումը թագավորություն-կառավարչությունների
- բ) Վրաստանը XVI դարում և XVIII դարի առաջին կեսում
- գ) Քարթլ-Կախեթիի և Իմերեթիի թագավորությունները XVIII դարի երկրորդ կեսում

6. Վրաստանը XIX դարում և XX դարի առաջին քսանամյակում

- ա) Ռուսական կառավարման հաստատումը և ազգային-ազատագրական շարժումը XIX դարի առաջին կեսի Վրաստանում
- բ) Ճորտատիրության վերացումը և նրա սոցիալ-տնտեսական հետևանքները
- գ) Թերեքի ջուր խնամներ
- դ) Դասեր և կուսակցություններ
- ե) Քաղաքական իրավիճակը XX դարի առաջին քսանամյակում և I համաշխարհային պատերազմը

7. Վրաստանը 1918-1921 թվականներին

- ա) Վրաստանի անկախության վերականգնումը
- բ) Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը

8. Վրաստանը 1921-1991 թվականներին

- ա) Նոր տնտեսական քաղաքականությունը և ստալինիզմը
- բ) Հայրենական մեծ պատերազմը և Ստալինի կառավարման վերջին տարիները
- գ) Ստալինիզմից մինչև լծացում (1953-1985)
- դ) Վերափոխումը և Խորհրդային Միության փլուզումը

8. Վրաստանի անկախ հանրապետությունը

Քաղաքացիական կրթություն

IX դասարան

Արդյունքներն ըստ ստուգիչների

Քաղ. IX		Ուղղություններ	
Քաղաքացիություն	Կառավարում	Տնտեսագիտություն ¹	
<p>1. Աշակերտը դատում է Վրաստանի քաղաքացու իրավունքների, ազատությունների և սահմանադրական պարտականությունների մասին:</p> <p>2. Աշակերտն ուսումնասիրում է հասարակական-քաղաքական կյանքում քաղաքացու մասնակցության ձևերը և միջոցները:</p> <p>3. Աշակերտը հետազոտում է հասարակության մեջ արդարացի հարաբերությունների խանգարող և օժանդակող գործոնները:</p> <p>4. Աշակերտը գնահատում է մարդու և հասարակության դերը սոցիալական հիմնախնդիրների վճռման հարցում:</p>	<p>5. Աշակերտը հետազոտում է ժողովրդավարական պետության հիմունքները:</p> <p>6. Աշակերտը տարբերակում է Վրաստանի իշխանության ճյուղերը և նրանց գործառույթները: Դատում է նրանց փոխադարձ կապի մասին:</p> <p>7. Աշակերտը դատում է Վրաստանում կառավարման ժողովրդավարական լինելու վերաբերյալ:</p>	<p>8. Աշակերտը միմյանցից տարբերում է մարդու ցանկությունները, հնարավորությունները և օբյեկտիվ ռեսուրսները:</p> <p>9. Աշակերտը հետազոտում է մարդու տնտեսական գործունեության հիմնական բնագավառները և նրանց փոխադարձ կապը:</p> <p>10. Աշակերտը պլանավորում է իր ապագա գործունեությունը և կարիերան:</p>	

¹ IX դասարանում տնտեսագիտություն ուղղությունը ուսուցանվում է կենտրոնացված մեկ եռամսյակի ընթացքում: Սրա համար ընտրված եռամսյակը որոշվում է դպրոցի ուսումնական պլանով:

Արդյունքները և ստուգիչները Քաղաքացիություն

Քաղ. IX 1. Դատում է Վրաստանի քաղաքացու իրավունքների, ազատությունների և սահմանադրական պարտականությունների մասին:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանական բանավեճի «Ի՞նչ տեղի կունենար, եթե բոլորը միայն իրավունքներ ունենային և չունենային պարտականություններ»: Անհրաժեշտ է արդյոք պատասխանատվությունը և ինչի՞ համար:
- Համեմատում է Վրաստանի քաղաքացու սահմանադրական իրավունքները և ազատությունները Մարդու իրավունքների միջազգային հռչակագրի դրույթների հետ:
- Դատում է Վրաստանում քաղաքացիների իրավահավասարության երաշխիքների մասին:
- Իր դպրոցի, բնակավայրի կամ երկրի օրինակով թվարկում է հարցեր, որոնց վճռման համար, իր կարծիքով, նշանակալի է բացահատել մեծամասնությանը (օրինակ՝ պլեբիսցիտ, հանրաքվե, հարցում, ընտրություններ և այլն):

Քաղ. IX 2. Ուսումնասիրում է հասարակական-քաղաքական կյանքում քաղաքացու մասնակցության ձևերը և միջոցները:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Դատում է մարդու և հասարակության փախադարձ վերաբերմունքի մասին, տարբերում է անհատի և հասարակության շահերը:
- Մասնակցում է բանավեճի՝ ինչ է նշանակում հասարակությունը: Արտահայտում է կարծիք քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների դերի մասին Վրաստանում: Ջուզահեռներ է անցկացնում այլ երկրների հետ:
- Դատում է, թե արդյոք նրանց դասարանում ժողովրդավարական միջավա՞յր է (օրինակ՝ արդյոք կա՞ հավասարության, փոխադարձ հարգանքի, համագործակցության մթնոլորտ, արդյոք կարո՞ղ է ցանկացած աշակերտ իր կարծիքն արտահայտել բանավեճերի և քննարկումների ժամանակ):
- Համադասարանցիների խմբի հետ խաղարկում է իրավիճակ, երբ ոտնահարվում է մարդու իրավունքը կամ ազատությունը, արտահայտում է և հիմնավորում իր տեսակետն այս արժեքների նշանակության մասին: Հաղորդում է սեփական ապրումները (օրինակ՝ երբ է զգում, որ ուրիշներից ոչ լավն է, ոչ էլ վատը, երբ է զգում, որ արժանավայել է վարվում):
- Իր բնակավայրում (տարածաշրջանում) ընտրում է մի որևէ հասարակական

կազմակերպություն և գտնում տեղեկություններ նրա մասին: Դատում է այս կազմակերպության ստեղծման պատճառների և նպատակների մասին:

- Թվարկում է, իր կարծիքով, դասարանի կամ դպրոցի համար հրատապ հարցեր, որոնց վճռմանն անձամբ է ուզում մասնակցել և համադասարանցիներին (դաստիարակի կամ դպրոցի վարչությանը) ներկայացնում է այս հարցերի կարգավորման իր պլանը:
- Համադասարանցիներին հիշեցնում է 7-րդ դասարանում կազմած դասարանական սահմանադրության բովանդակությունը, նրանց ծանոթացնում է փաստաթղթի մեջ ընդգրկվելիք փոփոխությունների և լրացումների նախագիծը: Սեփական տեսակետի հիմնավորման համար պահպանում է ժամանակակարգը:

Քաղ. IX 3. Հետազոտում է հասարակության մեջ արդարացի հարաբերություններին խանգարող և օժանդակող գործոնները:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Խմբավորում է օրենքները, որոնք համապատասխանում են նրա բարոյական արժեքներին և որոնք նրա համար ընդունելի չեն: Հիմնավորում է իր դիրքորոշումը:
- Բացատրում, թե ինչու է անձը պարտավոր պահպանել օրենքը: Անվանում է այն վտանգը, որ հետևում է ապօրինի գործողությանը:
- Համադասարանցիների հետ, սեփական դիտարկումների հիման վրա, ընտրում է և խաղարկում որևէ կոնֆլիկտային իրավիճակ: Քննարկում է նրա կարգավորման հնարավոր ուղիները (օրինակ՝ շահերի դիրքորոշումից՝ բանակցությամբ, օրենքների դիրքորոշումից՝ դատարանով և այլն): Ընտրում է տվյալ դեպքի համար ամենից արդյունավետը: Հիմնավորում է իր տեսակետը:
- Համադասարանցիների հետ ստեղծում է խաղաղ միջավայրի համար անհրաժեշտ վարքի ամենօրյա ուղեցույց փաստաթուղթ (օրինակ՝ բուկլետ, պաստառ):

Քաղ. IX 4. Գնահատում է մարդու և հասարակության դերը սոցիալական հիմնախնդիրների վճռման հարցում:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Մարդու որևէ պահանջմունքին համապատասխանեցնում է մարդու որոշակի իրավունք (օրինակ՝ սնունդ՝ կյանքի, աշխատանքի և այլ իրավունքներ, հարաբերություն՝ կյանքի, խոսքի, աշխատանքի, անվտանգ միջավայրի և այլ իրավունքներ) և հիմնավորում է իր պատասխանի ճշմարտացիությունը:
- Անապաստան երեխաների մասին զանգվածային լրատվամիջոցներում հրապարակած տեղեկություններ է գտնում, վերլուծում է դրանք և

համադասարանցիներին ներկայացնում այս հիմնախնդրի կարգավորման յուրովի պլան:

- Նկարագրում է այն վտանգները, որ հետևում են դեռահասների կողմից ծխախոտի, ոգելից խմիչքների և թմրանյութերի օգտագործմանը, քննարկում է համապատասխան վիճակագրական տվյալներ Վրաստանի, հարևան երկրների և աշխարհի համար: Անվանում է արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների օրինակներ:
- Գրում է երկ սոցիալական հիվանդություններ (օրինակ՝ ալկոհոլիզմ, թմրամոլություն, ՉԻԱՀ, թոքախտ և այլն) ունեցող անձանց նկատմամբ հասարակության մյուս անդամների վերաբերմունքի մասին, որտեղ հիմնավորում է սեփական դիրքորոշումն՝ իր կողմից նկարագրված հարաբերությունների արդարացիության մասին:
- Տարբերում է փախստական և բռնի վերաբնակեցված տերմինները, անվանում է համապատասխան օրինակներ ինչպես Վրաստանում, այնպես էլ աշխարհի այլ երկրներում, դատում է պատճառների մասին, որոնք կարող են մարդկանց ստիպել լքել իրենց բնակման վայրը (օրինակ՝ պատերազմ և զինված հակամարտություններ, մարդու իրավունքների խախտում, խտրականություն, աղքատություն և գործազրկություն, տարերային երևույթներ և այլն):

Կառավարում

Քաղ. IX 5. Հետազոտում է ժողովրդավարական պետության հիմունքները:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Դատում է ժողովրդավարության առաջացման և զարգացման մասին, Վրաստանը համեմատում է որևէ այլ երկրի օրինակների հետ:
- Բանավոր կամ գրավոր ներկայացնում է համադասարանցիների խմբի հետ պատրաստած ժողովրդավարական դասարանի, դպրոցի մուշօրինակ, փաստարկներ է բերում սեփական եզրակացությունների ապացուցման համար:
- Համեմատում է տարբեր (պահպանողական, սոցիալիստական, լիբերալ, կրոնական և այլն) տեսակետներ հավասարության և ազատության մասին, ընտրում է իր համար ամենից ընդունելին:

Քաղ. IX 6. Տարբերում է Վրաստանի իշխանության ճյուղերը և նրանց գործառույթները: Դատում է նրանց փոխադարձ կապի մասին:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Դատում է կենտրոնական և տեղական իշխանությունների միջև եղած տարբերությունների մասին:

- Համադասարանցիների հետ խմբավորում է իշխանության տարբեր ճյուղեր (գործադիր, օրենսդիր և դատական) և տարբերում է նրանց գործառույթները:
- Ընտրում է որևէ պետական մարմին և կապում այն իշխանության համապատասխան ճյուղի հետ: Քննարկում է այս մարմնի գործառույթները և նրա կապը իշխանության այլ մարմինների հետ:
- Թվարկում է այն պետական մարմինները թե հաստատությունները, որոնք ապահովում են նրա սահմանադրական իրավունքների պաշտպանությունը և պարտավորությունների կատարումը: Կարծիք է արտահայտում նրանց գործողության արդյունավետության մասին:
- Կազմում է սեփական բնակավայրում վճռվելիք հարցերի ցուցակ և համապատասխանաբար անվանում իշխանության այն ներկայացուցիչներին, որոնց պետք է դիմի սկզբից: Հիմնավորում է իր եզրակացությունը (ըստ ճյուղի և մակարդակի կամ ատյանի):
- Համադասարանցիների խմբի հետ ընտրում է որևէ պետական մարմին (օրինակ՝ շրջանային վարչություն, քաղաքապետարան, խորհրդարան, դատարան, նախարարություն և այլն) և մասնակցում կեղծակերպական խաղի՝ «Աշխատանքային մեկ օր»:

Քաղ. IX 7. Դատում է Վրաստանում կառավարման ժողովրդավարական լինելու վերաբերյալ:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Քննարկում է իշխանության որևէ մարմնի (օրինակ՝ խորհրդարան, քաղաքապետ, ինքնակառավարման մարմին, դատավոր և այլն) ընտրության կանոնները, համեմատում Վրաստանի և այլ երկրի օրինակ: Առանձնացնում է, ըստ նրա, թվարկածներից ավելի արդարացի կանոնները:
- Համադասարանցիների խմբի հետ հայթայթում է տեղեկություններ որևէ ընտրովի պաշտոնի կամ մարմնի (օրինակ՝ դպրոցի տնօրեն, պատգամավոր, քաղաքապետ և այլն) մասին և կեղծակերպական ընտրություններում կատարում է իր համար հատկացված դերը (օրինակ՝ ընտրող, թեկնածու, աջակցող, դիտորդ, լրագրող, իրավապահ կամ այլ), համեմատում է ենթադրված և ստացած արդյունքները, ինչի հիման վրա էլ համադասարանցիների հետ գնահատում է յուրաքանչյուր մասնակցի դերը, գործառույթը:
- Թվարկում է պետության ժողովրդականության սկզբունքները (օրինակ՝ իշխանության բաշխումը և ներկայացուցչականությունը, բազմակուսակցականությունը, խոսքի ազատությունը և այլն) և յուրաքանչյուրի համաձայն բնութագրում է Վրաստանի պետության կառավարումը: Համեմատում է որևէ այլ ժողովրդավարական պետության հետ, վերլուծության հիման վրա անում է եզրակացություն, թե որ կառավարումն է ավելի ժողովրդավարական:

2009

- Սեփական բնակավայրի օրինակի հիման վրա քննարկում է հասարակության դերը ժողովրդավարության շինարարության մեջ: Դատում է հասարակության և կառավարման մարմինների համագործակցության մասին:

Տնտեսություն

Քաղ. IX 8. Միմյանցից տարբերում է մարդու ցանկությունները և հնարավորությունները:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Համադասարանցիների հետ դատում է, թե ինչ է անհրաժեշտ մարդուն գոյության համար և դրանց համապատասխանեցնում է սեփական ցանկությունները: Թվարկում է մարդու պահանջմունքների և ցանկությունների բավարարման ուղիները:
- Համադասարանցիների խմբի հետ քննարկում է մարդու պահանջմունքների հիերարխիայի մասին տարբեր տեսակետներ, համադասարանցիներին ծանոթացնում է խմբի կողմից անվանված և ըստ նշանակության դասավորած մարդու պահանջմունքների ցանկը:
- Ամենօրյա սպառման առարկաներից (օրինակ՝ սնունդ, հագուստ, դպրոցական պարագաներ և այլն) ընտրում է որևէ մեկը և հետևողականորեն նկարագրում բոլոր փուլերը՝ նրա ստեղծումից մինչև սպառումը, առանձնացնում է ծախսած ռեսուրսները՝ ըստ տիպերի (բնական, մարդկային, կապիտալ):
- Կոնկրետ գումարի (օրինակ՝ 25 լարի) համապատասխան թվարկում է իրեն ծանոթ տարբեր ապրանք թե սպասարկում (օրինակ՝ մարզական պայուսակ, էքսկուրսիա Վարձիա, մեկ տոպրակ ալյուր և այլն) ստանալու տարբերակները և ընտրում նրանցից որևէ մեկը: Բացատրում է սեփական ընտրության պատճառները և կապում այլընտրանքային արժեքի հասկացության հետ:
- Համադասարանցիների խմբի հետ կազմում է դասարանի բարեկարգման համար անհրաժեշտ իրերի թե աշխատանքների ցանկ, որոնցից ընտրում է մի քանիսը, որոնք խումբը կարող է գնել կամ իրականացնել առանց ուրիշների օգնության, համադասարանցիներին հայտնում է իր ընտրության մասին և հիմնավորում է այն՝ քննարկելով սահմանափակումները և այլընտրանքները:

Քաղ. IX.9. Հետազոտում է մարդու տնտեսական գործունեության հիմնական բնագավառները և նրանց փոխադարձ կապը:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Սեփական բնակավայրի օրինակով թվարկում է մարդկանց տարբեր գործունեություններ, որոնք իրականացվում են եկամուտ ստանալու համար և դրանք խմբավորում է՝ ըստ ապրանքի արտադրման թե սպասարկման: Յուրաքանչյուր գործունեության համապատասխանեցնում է օգտագործած

ռեսուրսների տեսակները (օրինակ՝ բնական, մարդկային, կապիտալ):

- Համեմատում է հայրենի երկրամասում տարածված ավանդական թե ժամանակակից տնտեսական գործունեությունները՝ շահութաբերության համաձայն: Դատում է տնտեսական գործունեության ոլորտի փոփոխություն առաջացնող պատճառների վերաբերյալ:
- Գրում է երկ «Ինչի՞ց է կախված իմ բարեկեցությունը», որտեղ տարբեր առարկաներից (օրինակ՝ պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն և այլն) ստացած տեղեկությունների և վիճակագրական վերլուծության մեթոդների օգտագործմամբ հիմնավորում է սեփական դիրքորոշումը:

Քաղ. IX.10. Պլանավորում է ապագա գործունեությունը և կարիերան:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Թվարկում է իր նպատակները (օրինակ՝ լինեն կրթված, առողջ, գեղեցիկ, անգործ, ապրեն անվտանգ և այլն), որոնք կապված են կարիերայի հետ, դատում է նրանց իրատեսականության և նվաճման ուղիների մասին, նպատակի իրագործման ուղիները կապում է համապատասխան պարտականությունների հետ:
- Սեփական հնարավորությունների և նպատակների վերլուծության հիման վրա՝ անվանում է գործունեության այն բնագավառը, որի հետ ենթադրաբար կապում է սեփական ապագա գործունեությունը, դասարանում բացահայտում է համախոհներ, որոնց հետ էլ հավաքում է տեղեկություններ այս բնագավառի մասին և նրա վերլուծությունից հետո անում է հայտ մինի-նախագծի համար՝ «Իմ ապագա մասնագիտությունը և կարիերան»:
- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների խմբի հետ նախանշում է այն ուղիները, որոնք իրեն կօգնեն մասնագիտության ընտրության ժամանակ, ինչը նկատի ունի՝ տեղեկությունների որոնում և վերլուծության փուլեր, ժամկետների, կիրառվելիք մեթոդների սահմանում (օրինակ՝ հարցում, հարցազրույց, ծանոթացում տեղում և այլն):
- Սեփական հնարավորությունների և ձգտումների վերլուծության հիման վրա գրում է երկ՝ «Ինչպես եմ պատկերացնում իմ ապագա կարիերան» (նախանշված նպատակներ և նրանց նվաճման ուղիներ, ցանկալի և անխուսափելի իրադարձություններ, նրա մտահղացման համապատասխանություն հասարակական շահերին): Երկը ներկայացնում է համադասարանցիներին:

Երաշխավորված բովանդակություն

1. Ցանկություններ և պահանջմունքներ
2. Մարդու իրավունքների բարոյական հիմունքները և պատմությունը
3. Հակամարտությունների զարգացման և կարգավորման ուղիները
4. Արդարացի աշխարհ և խաղաղ համագոյակցություն
5. Ժողովրդավարության հիմունքները և նրա նշանակությունը հասարակության զարգացման մեջ
6. Ժողովրդավարությունը Վրաստանում
7. Քաղաքացու մասնակցությունը հասարակական կյանքում
8. Իրավունքը և բարոյականությունը
9. Բնակչության սոցիալական կառուցվածքը
10. Ժողովրդավարական կառավարման սկզբունքները
11. Իշխանության բաժանումը և կառավարման մակարդակները
12. Օրինականությունը և իրավակարգապահությունը
13. Ընտրություն և մրցակցություն
14. Իմ կարիերան
15. Շուկաներ և գների կարգավորում
16. Շահույթ և պարտավորություն՝ հարկեր
17. Բյուջե՝ հնարավորություններ, պարտավորություններ, ցանկություններ

Պատմության ներածություն
X դասարան
Արդյունքներն ըստ ուղղությունների

Պատմ. X	Ուղղություններ
Պատմական մեկնաբանություն և հետազոտություն	Հաղորդակցություն
1. Աշակերտը վերլուծում և գնահատում է միևնույն պատմական իրադարձության տարբերակված մեկնությունները: 2. Աշակերտը վերլուծում է առաջնային և երկրորդային աղբյուրները: 3. Աշակերտը պլանավորում է և անցկացնում պատմական հետազոտություն:	4. Աշակերտը գրում է պատմական շարադրություն:

Հետևանքները և ստուգիչները

Պատմական մեկնաբանություն և հետազոտում

Պատմ. X.1.Վերլուծում է և գնահատում միևնույն պատմական իրադարձության տարբերակված մեկնաբանությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Համենատում է երկու աղբյուրներ, որոնք կոնկրետ պատմական իրադարձության (անհատի) մասին հաղորդում են տարբերակված լրատվություններ (կամ տալիս են միևնույն պատմական իրադարձության կամ անհատի տարբերակված գնահատումներ) , դատում է այն գործոնների մասին, որոնք պայմանավորել են կոնկրետ իրադարձության տարբերակված մեկնաբանությունների գոյությունը (օր., պատմական աղբյուրի ստեղծման դարաշրջանը և միջավայրը, հեղինակի ազգությունը, նրա քաղաքական թե կրոնական կողմնորոշումը, սոցիալական կարգավիճակը և այլն):
- Համենատում է կոնկրետ պատմական իրադարձության (անհատի): մասին գոյություն ունեցող երկու (կամ երեք) պատմաբանների տարբերակված տեսակետները,
- Գնահատում դրանք և ձևավորում սեփական հայացքն այս պատմական իրադարձության (անհատի) մասին:
- Դատում է տարբեր պատմական մեկնությունների վարկածային բնույթի մասին և գիտակցում, որ ցանկացած մեկնություն կարող է վերագնահատվել՝ նոր պատմական նյութի ձեռքբերման (հրապարակման) դեպքում:

- Պատմական փաստը տարբերում է պատմական մեկնաբանությունից, դատում է՝ որքանով են դրանք կապված միմյանց հետ (օր.՝ մատենագիրներն անձամբ ընտրում են փաստերը, որոնք հետագայում թողնում են ապագա սերունդներին, այդ պատճառով տարեգրությունը միայն փաստեր պարունակող փաստաթուղթ չէ, այն միաժամանակ նաև մեկնաբանություն է՝ մեզ հասած պատմական փաստերը մեզ տեղեկացնում են մատենագիրների գնահատումը՝ դրանց նշանակության մասին):
- Տարբերում է պատմական փաստերի վերլուծության վրա հիմնված վարկածը և պատմաբանի կողմից արտահայտված տեսակետը (ենթադրությունը) և աղբյուրների ուսումնասիրման հիման վրա, ստուգում դրա վավերականությունը:

Պատմ. X.2. Վերլուծում է առաջնային և երկրորդային աղբյուրները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտահայտում է սեփական կարծիքը՝ պատմական աղբյուրի հեղինակի մասին և քննադատորեն գնահատում, թե որքանով վստահելի է այն (օր.՝ հետազոտում է՝ հեղինակը եղե՞լ է արդյոք իրադարձության ականատեսը, թե՞ օգտվել է ուրիշների տեղեկությունից, ազդո՞ւմ էր արդյոք գրաքննությունն աղբյուրի հեղինակի վրա):
- Արտահայտում է սեփական կարծիքը պատմական փաստաթղթի ստեղծման տարեթվի և տեղի մասին, աղբյուրը գնահատելիս, նկատի է առնում, թե ժամանակի և տեղի առումով, որքանով է հեռացած այն դրանում շարադրված պատմական իրադարձություններից:
- Պատմական աղբյուրից հավաստի բովանդակություն դուրս բերելու նպատակով՝ որոշում է պատմական իրադարձության մասնակիցներին, դրա զարգացման վայրն ու ժամանակը, հարուցիչ գործոններն ու արդյունքները:
- Որոշում է պատմական աղբյուրի գլխավոր հարցը:
- Որոշում է պատմական աղբյուրի ստեղծման նպատակը՝ հեղինակի հիմնավորումը (օր., նկատի է առնում աղբյուրի հեղինակի անձնական հարաբերությունները պատմական դեմքի հետ, նրա վերաբերմունքը օտարերկրացիների նկատմամբ, նրա դարաշրջանի հասարակական միջավայրը, արժեքներն ու աշխարհընկալումը):
- Տարբերում է տեղեկությունը աղբյուրում եղած բոլոր մյուս տեղեկություններից, որի հաղորդումը աղբյուրի հեղինակի նպատակն է (օր., Իսկոբ Խուցեսիի «Շուշանիկի նահատակությունը» երկում հեղինակի նպատակն է քրիստոնեության համար անձնուրաց թագուհու կյանքի նկարագրությունը, սակայն, միևնույն ժամանակ, այս ստեղծագործության մեջ մենք գտնում ենք տեղեկություններ V դարի II կեսի Քարթլիի քաղաքական, սոցիալական և մշակութային իրավիճակի մասին):
- Աղբյուրների վրա աշխատելիս՝ նկատի է առնում պատմական իրադարձության մասնակիցների առանձնահատուկ արժեքները, շահերը, հայացքները, փաստարկները և մարդկային այլ հատկություններ:

- Պատմական աղբյուրների վրա աշխատելիս՝ բացահայտում է պատճառահետևանքային կապերը, դատողություններ անում պատմության մեջ անհատի դերի, գաղափարների ազդեցության և պատահականության գործոնների մասին:
- Պատմական աղբյուրից վերցրած տեղեկությունները խմբավորում է՝ հասարակական կյանքի տարբեր բնագավառների (քաղաքականություն, էկոնոմիկա, մշակույթ, կրոն, սոցիալական հարաբերություններ) համաձայն:
- Կարողում է պատմական քարտեզը՝ պատմական իրադարձության զարգացման վայրում աշխարհագրական լրատվություն ձեռք բերելու նպատակով:
- Վերապրում է պատմական դարաշրջանը. ա) աղբյուրների ուսումնասիրման հիման վրա, ձևավորում է այդ դարաշրջանում եղած արժեքները, հայացքներն ու կարողությունները, նկարագրում է, թե ինչպես էին ընկալում այն ժամանակաշրջանի մարդիկ իրենց դարաշրջանը, բ) փորձում է խուսափել անցած դարաշրջանի գնահատումից՝ ելնելով միայն այսօրվա հեռանկարից:

Պատմ.X.3. Պլանավորում և անց է կացնում պատմական հետազոտություն:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ ընտրում է հետազոտման նպատակով իր համար հետաքրքիր պատմական հարց (աշակերտի ընտրությունը կարող է պայմանավորել՝ պատմական աշխատությանը, պատմական թեմատիկայով ստեղծված գեղարվեստական գրականությանը, կինոնկարներին, ճարտարապետական հուշարձաններին, թանգարանային ցուցանմուշներին ծանոթացումը կամ որևէ ժամանակակից քաղաքական իրադարձությամբ հետաքրքրվելը):
- Ապագա հետազոտության թեման կոնկրետացնելու նպատակով՝ ընտրած պատմական հարցի կապակցությամբ, ծանոթանում է մեկ կամ երկու ընդհանուր բնույթի հոդվածների (օր., հոդված՝ Վրացական խորհրդային հանրազիտարանից):
- Որոշում է, թե ինչ բնույթի հետազոտություն է մտադիր անցկացնել. նրա հետազոտությունը հիմնվում է միայն երկրորդային աղբյուրների վրա, եթե նրան անհրաժեշտ լինի կկիրառի ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային աղբյուրները:
- Կազմում է «աշխատանքային» մատենագրություն (օր., ա) հանրազիտարանի հոդվածի վերջում նշված գրքերի համաձայն, բ) ուսուցչի կողմից առաջադրված գրքի ծանոթագրություններում կամ կիրառված գրականության ցուցակում որոնում-գտնում և ընտրում է երկու կամ երեք հետազոտություն):
- Աշակերտը, գրադարանում քարտազրացուցակի օգնությամբ, որոնում-գտնում է անհրաժեշտ գրականություն:
- Կարճ ժամանակահատվածում որոշում է, թե պիտանի կլինի՞ արդյոք այս կամ այն գիրքը կամ հոդվածը ապագա հետազոտության համար (օր.՝ գրքի ներածության, առաջաբանի, ցանկի գլուխների և ենթագլուխների, հոդվածի ներածությունում հեղինակի վարկածին ծանոթանալու միջոցով):

- Հետազոտման շահերից ելնելով՝ մանկավարժի օգնությամբ որոնում-գտնում, ծանոթանում և գնահատում է առաջնային աղբյուրները:
- Անհրաժեշտության դեպքում որոնում-գտնում և կիրառում է տեղեկություններ՝ տեսողական, գրական և երաժշտական աղբյուրներից (լուսանկարներ, նկարներ, որմնանկարներ, ճարտարապետական կառույցներ, վեպեր, չափածո և դրամատիկական ստեղծագործություններ, բանահյուսական, հանրաժանոթ թե դասական երաժշտություն):
- Հետազոտման գործընթացում օգտագործում է տարբեր տեսակի դիագրամներ՝ պատմական աղբյուրից ձեռք բերած լրատվությունը բացահայտելու և լուսաբանելու նպատակով:
- Ուսուցչին պարբերաբար իրազեկում է հետազոտման արդյունքներին և նախատեսում նրա դիտողությունները:
- Ուսուցչի օգնությամբ ընտրում է կերպարվեստի ստեղծագործություններ, տեսողականորեն ուսումնասիրում դրանք և գրում համառոտ շարադրություն, որտեղ հաղորդում է, թե ինչ է ասում մեզ ստեղծագործությունն իր դարաշրջանի մասին, և ինչու է ինքը մտածում այսպես:

Հաղորդակցություն

Պատմ. X.4. Գրում է պատմական շարադրություն:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատմական շարադրություն գրելու նպատակով՝ ընտրում է իրեն հետաքրքրող հարց և հետզհետե կոնկրետացնում այն: Օրինակ.

Պատմական հարց	Համեմատաբար նեղ պատմական հարցեր	Համեմատաբար նեղ պատմական հարցեր	Համեմատաբար նեղ պատմական հարցեր
Հռոմի կայսրությունը	<ul style="list-style-type: none"> • Հռոմի ճարտարապետությունը • Կրոնը նախաքրիստոնեական Հռոմում • Հուլիոս Կեսար • Կայսր Կլաուդիոս 	<ul style="list-style-type: none"> • Առաջին եռապետությունը: • Գալիայի պատերազմները: • Քաղաքացիական պատերազմներ: • Հուլիոս Կեսար՝ բռնակալ: 	Բրիտանիայի նվաճումը:

- Ընտրած հարցով նախօրոք հետազոտություն անցկացնելուց հետո՝ սահմանում է շարադրության գլխավոր գաղափարը՝ թեզիսը և ձևավորում է այն՝ նախադասության տեսքով¹:
- Սահմանում է շարադրությունը գրելու նպատակը, ինչը ենթադրում է, թե ինչ նշանակություն ունի շարադրությունը՝ պատմական հարցի կապակցությամբ ընթերցողին իրազեկելը (կամ պատմական հարցի պարզաբանումը, մեկնությունը), թե ընթերցողին հավաստիացնելը՝ պատմական հիմնախնդրի սեփական տեսակետի (փաստարկի) ճշտության մեջ:
- Գրելու գործընթացում հաշվի է առնում սեփական միտումնավորությունը:
- Որոշում է, թե ով է լինելու իր գրած շարադրության ընթերցողը (օր.՝ համադասարանցիները, ուսուցիչը, թե օլիմպիադայի ժյուրին): Այդ նպատակով պատասխանում է հետևյալ հարցերին. ապագա ընթերցողը նախօրոք ի՞նչ գիտի շարադրության մեջ քննարկված պատմական հարցի մասին, ի՞նչ գիտելիք պետք է տա ընթերցողին իմ շարադրությունը, ի՞նչ են ցանկանում՝ ընթերցողը տեսնի նորովի, ինչպե՞ս պետք է կազմեն շարադրությունը, որպեսզի իմ գաղափարներն ըմբռնելի դառնան կոնկրետ ընթերցողի համար:

<p>Շարադրության թեզիսը՝ (նախադասության տեսքով)</p>	<p>Օր., 1920-21 թվականներին Անդրկովկասի երկրների անկախության կորուստը պայմանավորեցին արտաքին քաղաքական գործոնները:</p>
<p>I. Առաջին գլխավոր գաղափարը ա) Առաջին գլխավոր գաղափարի հետ կապված առաջին օժանդակ գաղափարը:</p> <p>1. Պատճառ կամ օրինակ 2. Պատճառ կամ օրինակ:</p> <p>բ) Առաջին գլխավոր գաղափարի հետ կապված երկրորդ օժանդակ գաղափարը:</p> <p>1. Պատճառ կամ օրինակ: 2. Պատճառ կամ օրինակ:</p>	<p>Օր.՝ Ռուսաստանի հեղափոխությունը: Բոլշևիկների իշխանության գլուխ անցնելը:</p>
<p>II. Երկրորդ գլխավոր գաղափարը:</p>	<p>Առաջին համաշխարհային պատերազմը և Փարիզի խաղաղության կոնֆերանսը:</p>

¹ Ցանկալի է, վարկածը սահմանել և նախադասությամբ ձևավորել հետազոտման վաղ փուլում, այսպես կոչված, սահմանել «աշխատանքային» թեզիս, աշխատանքային թեզիսը կարելի է կատարելագործել հետազոտության հաջորդ փուլում:

- Կազմում է շարադրության պլանը, ինչը ենթադրում է. ա) պլանը կազմելու ժամանակ առավել նշանակալից գաղափարները տեղավորել մեկ խմբում, իսկ նվազ կարևորները՝ երկրորդում և այլն, բ) կազմել հետևյալ տիպի սխեմա.
- Ուսուցչին (ղեկավարին, համադասարանցուն) է ներկայացնում սևագիր տարբերակը³:
- Պատմական շարադրություն գրելու գործընթացում սահմանում է լեզվի ձևականության մակարդակը⁴: Խուսափում է մասնագիտական ժարգոնների անհարկի կիրառումից և կլիշեների գործածումից, ընդունում է որոշում այն մասին, թե որքանով պատկերավոր պետք է լինի լեզուն:
- Մեջբերում անելիս, շրջասության ժամանակ կամ ուրիշի կարծիքն օգտագործելիս՝ անպայման նշում է աղբյուրը:
- Կիրառում և հետևողականորեն պահպանում է ցուցումներ անելու ոճը:
- Շարադրությանը կցում է օգտագործված գրականության ցանկը:
- Համարակալում է էջերը:
- Սևագրության տարբերակն ավարտելուց որոշ ժամանակ անց, անդրադառնում է դրան՝ վերանշակման նպատակով. ա) շարադրությունը երկրորդ անգամ ընթերցելիս՝ փորձում է իր աշխատությունը տեսնել ապագա ընթերցողի աչքերով, բ) երկրորդ անգամ ընթերցելիս, ստուգում է. որքանով լավ է կազմված աշխատությունը, համընկնո՞ւմ է, արդյոք, սևագիր տարբերակը նախօրոք կազմված պլանին, լա՞վ է կապված, արդյոք, թեման, տրամաբանական կապի մե՞ջ են բոլոր մասերը թեզիսի հետ, թերություններ կա՞ն, արդյոք, փաստարկի տարբեր մասերի միջև, կա՞ն արդյոք բովանդակության կամ արտահայտությունների կրկնություններ:
- Երկրորդ (կամ երրորդ տարբերակը) գրելուց հետո, խմբագրում է շարադրությունը:
- Շարադրության վերջնական տարբերակը ներկայացնելուց առաջ՝ մեկ անգամ ևս ընթերցում է խմբագրած տարբերակը:

Երաշխավորված բովանդակություն

1. Ներածություն

- Ի՞նչ է պատմությունը:
- Պատմության օժանդակ դիսցիպլինները:
- Պատմական աղբյուրների համառոտ տեսություն. գրավոր, իրային, ազգագրական, բանավոր, լեզվական, կինո-, ֆոտո-, ֆոնոփաստաթղթեր:
- Աշխարհում և Վրաստանում պատմական կարծիքի զարգացման համառոտ տեսություն (հին աշխարհի և միջին դարերի մատենագիրներ, նոր դարաշրջանի XIX-XX դարերի պատմաբաններ):

2. Ինչպես աշխատենք գրքի վրա (լուսանցքագրության, տերմինացանկերի, ցանկերի կիրառում):

3. Ինչպես աշխատենք արխիվներում, գրադարաններում, թանգարաններում:

4. Ինչպես են հետազոտում պատմաբանները, և ինչպես է գրվում պատմական շարադրությունը:

- Առաջնային և երկրորդային աղբյուրների վրա աշխատանք:
- Հետազոտության պլանավորում ու կազմակերպում:
- Պատմական շարադրություն գրել:

³ Շարադրությունը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը. ներածություն՝ բեմայի գլխավոր հիմնախնդրի համառոտ տեսությունը և հիմնախնդրի նկատմամբ սեփական կարծիքի արտահայտումը՝ թեզիսի տեսքով: Հիմնական մասը՝ սեփական դիրքորոշումը մեկնաբանելու կամ հաստատելու համար, բերում է փաստարկներ և օրինակներ: Եզրակացություն՝ շարադրության հիմնական մասում արտահայտված փաստարկների և նկատառումների ամփոփում:

⁴ Լեզվի ձևականության մակարդակը սահմանվում է այն բանի համաձայն, թե ինչ տիպի ընթերցողի համար է (բարեկամ, համադասարանցի, ուսուցիչ, օլիմպիադայի մրցատյան) գրվում աշխատությունը:

Աշխարհագրության գիտության ներածություն և աշխարհագրական հետազոտություն

X դասարան Ներածություն

Տվյալ դասընթացի նպատակն է աշակերտին ծանոթացնել աշխարհագրության գիտության հիմունքներին և հետազոտության մեթոդներին: Դասընթացը կազմված է այնպես, որ աշակերտը կարողանա, սեփական հետաքրքրություններին և տարիքային հնարավորություններին համապատասխան, ինքնուրույն հետազոտել աշխարհագրական հարցը և անցկացնել սեփական աշխատության շնորհանդես (լսարանի առջև հանդես է գալիս հեշտ ըմբռնելի ձևով), ապագայում կիրառել աշխարհագրական գիտելիքն ու հմտություն-կարողությունները:

Աշխարհագրության տվյալ դասընթացում առանձնաձևում են երկու հիմնական ուղղություններ՝ աշխարհագրական հետազոտություն և հաղորդակցություն:

Ուղղությունների բնութագրումը.

1. Աշխարհագրական հետազոտություն. Այս ուղղության գլխավոր նպատակն է՝ դեռահասը գիտակցի աշխարհագրության և աշխարհագրական գիտելիքների նշանակությունը՝ մարդու գործունեության տարբեր բնագավառների համար, իրազեկվի աշխարհագրական հետազոտությունների ավանդական (նկարագրական, համեմատական-աշխարհագրական, քարտեզագրական) և նորագույն (մաթեմատիկական, օդա-տիեզերական, աշխարհա-տեղեկատվական) մեթոդներին, ուսումնասիրի աշխարհագրական նախահմացության և մոդելավորման հարցերը, կարողանա որոնել-գտնել համապատասխան հիմնախնդրի հետ կապված տեսական նյութեր և աղբյուրներ, դաշտային պայմաններում կուտակել տեղեկություններ, կազմակերպել, վերլուծել նյութը և մշակել աշխարհագրական թեմայի կառուցվածքը:

2. Հաղորդակցություն: Այս ուղղության նպատակն է. աշակերտը կարողանա վերլուծել քարտեզներն ու աշխարհագրական այլ միջոցները և ստեղծել դրանց համանմանները, ձեռք բերել աշխարհագրական հետազոտության և անհատական ու խմբային (աշխատանքի բաժանում, խմբային քննարկում և այլն) աշխատանքի հմտություն-կարողություններ, անհատական աշխատանքի գործընթացում ծագած հիմնախնդիրների կարգավորման համար դիմի հարցով շահագրգռված հասակակիցներին, հետազոտության գործընթացում փոխհարաբերություններ հաստատի այն անձանց և կազմակերպությունների հետ, որոնցից հատկապես հնարավոր է ստանալ ցանկալի տեղեկություններ, պետք է կարողանա տարբեր տեսակի լսարանների համար պատրաստել շնորհանդես:

Արդյունքներն ըստ ուղղությունների

Աշխարհ. X.	Ուղղությունները
Աշխարհագրական հետազոտություն	Ուղղությունները
<p>1. Որոշում է հիմնախնդիրը, աշխարհագրական հետազոտության նպատակը, դրա կարգավորման ուղիները և ուղղությունը:</p> <p>2. Աշխարհագրական հետազոտության համար հավաքում է անհրաժեշտ տեղեկություններ:</p> <p>3. Աշխարհագրական հետազոտություն իրականացնելու համար, վերլուծում և մշակում է ձեռք բերած լրատվությունը:</p>	<p>4. Կիրառում է քարտեզներ և աշխարհագրական այլ միջոցներ՝ լրատվություն որոնելու-գտնելու և սեփական տեսակետներն արտահայտելու համար:</p> <p>5. Ընդգծում է աշխարհագրական հետազոտության արդյունքների բացահայտման համար անհրաժեշտ հմտություն-կարողությունները:</p>

Արդյունքները և ստուգիչները

Աշխարհագրական հետազոտություն

Աշխարհ. X.1. Որոշում է հիմնախնդիրը, աշխարհագրական հետազոտության նպատակը, դրա կարգավորման ուղիներն ու ուղղությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Աշխարհագրական հետազոտության ժամանակ սահմանում է վայրի, իրադարձությունների և գործընթացների միջև փոխհարաբերությունները (տեղային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակով բնական պայմանների, ռեսուրսների, բնակչության, տնտեսության և էկոլոգիական իրավիճակի միջև պատճառա-հետևանքային կապերը):
- Դիտարկում և ուսումնասիրում է տեղային միջավայրը՝ այնտեղ եղած աշխարհագրական հիմնախնդիրները որոշելու համար:
- Առաջադրում է հարցեր (աշխարհագրական), գնահատում իրադարձությունը, արտահայտում է ենթադրություն և խմբի հետ համադրման արդյունքում, որոշում է իր համար հրատապ հիմնախնդիրը (օր.՝ տարածքի յուրացման հիմնախնդիրը՝ ինչո՞ւ է փոխվում տարածքը, ի՞նչն է դրա պատճառը և հետևանքը):
- Զննարկում է դիտարկման արդյունքները, դատողություններ անում տվյալ հիմնախնդրի շուրջ և արտահայտում դրա կարգավորման հավանական ուղիները, ինչպես նաև վարկածներ, որոնցից հետազոտման համար ընտրում է լավագույնը:

- Ընտրված վարկածի հիման վրա, սահմանում է աշխարհագրական հետազոտության ուղղությունը և մշակում թեմայի կառուցվածքը:

Աշխարհ.X.2. Աշխարհագրական հետազոտության համար հավաքում է անհրաժեշտ տեղեկություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Կազմում է կատարվելիք աշխատանքների գրաֆիկը և պահպանում հաջորդականությունը:
- Ելնելով հետազոտման նպատակից՝ համապատասխան գիտական, կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններից ձեռք է բերում ցանկալի տեղեկատվություն:
- Ելնելով աշխարհագրական հետազոտության նպատակներից՝ ընտրում և ուսումնասիրում է համապատասխան տեսական և տեսանելի նյութեր:
- Տիրապետում է դաշտային հետազոտության համար անհրաժեշտ որոշ տեխնոլոգիաների և, անհրաժեշտության դեպքում, համապատասխանաբար է կիրառում գործիքները:
- Համապատասխան մեթոդոլոգիայի հիման վրա, պլանավորում է դաշտային աշխատանքները:
- Նախանշված հիմնախնդրի կարգավորման նպատակով տեղական միջավայրում որոնում-գտնում է փաստացի նյութեր:
- Թեմայի շուրջ ձեռք բերած լրատվության հիման վրա, ստեղծում է աշխարհագրական տվյալների բանկ (տեսական նյութեր, քարտեզներ, դաշտային աշխատանքների ժամանակ ձեռք բերած նյութեր, վիճակագրական տվյալներ, աղյուսակներ, դիագրամներ, գծանկարներ, համապատասխան նյութա-տեխնիկական բազայի գոյության դեպքում անց է կացնում ԳԻՍ (GIS) վերլուծություն:

Աշխարհ.X.3. Աշխարհագրական հետազոտություն անցկացնելու համար, վերլուծում և մշակում է ձեռք բերած տեղեկությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հիմնվելով գիտական աղբյուրների վրա, քննադատորեն է գնահատում հետազոտական պրոբլեմատիկայի հետ կապված տեսակետները:
- Կիրառում է հետազոտության համար անհրաժեշտ մեթոդը (քարտեզագրական, սոցիոլոգիական, մաթեմատիկական, վիճակագրական, համեմատական...), մշակում և վերլուծում է տեղեկությունը:
- Ինքնուրույն հավաքում և մշակում է տեղեկություններ, որի համար էլ, անհրաժեշտության դեպքում, մասնակցում է քննարկումների և խորհրդատվությունների:
- Ստացած արդյունքի վերլուծության հիման վրա՝ ընդհանրացնում է

հիմնախնդիրը և ստուգում իր կողմից ընտրված վարկածի ճշտությունը:

- Ծանոթանում և ստեղծում է պարզ աշխարհագրական մոդելներ (օր.՝ աշխարհաքաղաքաշինական հիմնախնդիրներ, առևտրական և արդյունաբերական օբյեկտների տեղադրման վայրերի պլանավորում և այլն::
- Տեղեկության վերլուծության հիման վրա՝ մշակում է աշխարհագրական հիմնախնդրի կարգավորման ուղիները և անում կանխատեսումներ:

Հաղորդակցություն

Աշխարհ.X.4.Կիրառում է քարտեզներ և աշխարհագրական այլ միջոցներ՝ տեղեկություններ որոնելու-գտնելու և սեփական տեսակետներն արտահայտելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Լուսանկարների, նկարազարդումների, գծանկարների, աղյուսակների, դիագրամների և քարտեզների կիրառումով, մեկնաբանում է աշխարհագրական տեղեկությունը (օր.՝ կլիմայական պայմանների յուրահատկությունների սահմանումը):
- Նույն տիպի աշխարհագրական միջոցի մասին տրված տեղեկությունն արտահայտում է տարբեր կերպ (օր.՝ քարտեզի վրա եղած տեղեկությունն արտահայտում է աղյուսակի տեսքով::
- Կիրառում է աշխարհագրության միջազգային լեզուն՝ քարտեզը՝ տեղեկություններ ձեռք բերելու և իր կարծիքներն արտահայտելու համար:
- Հետազոտական նպատակի համաձայն՝ տարբեր թեմատիկ քարտեզների համադրման հիման վրա, անց է կացնում համալիր վերլուծություն (օր.՝ կլիմայական, բնակչության, ֆիզիկական-աշխարհագրական քարտեզների համադրման հիման վրա, դատում է տարածաշրջանի առողջարանային տնտեսության մասին):
- Դաշտային պայմաններում ձեռք բերած նյութերի և գոյություն ունեցող վիճակագրական լրատվության մշակման հիման վրա, աշակերտը կազմում է գծանկարներ, դիագրամներ, աղյուսակներ, քարտեզներ, կցում է իր աշխատությանը՝ նյութն ավելի լավ ընկալելու համար:

Աշխարհ.X.5. Ընդգծում է աշխարհագրական հետազոտության արդյունքների արտահայտման համար անհրաժեշտ հմտություն-կարողությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հետազոտության գործընթացում գրական աղբյուրներում որոնում-գտնում է աշխարհագրական արտահայտությունների և հայեցակարգերի

բացատրություններ և պատշաճորեն կիրառում դրանք:

- Հետազոտության արդյունքում ստացած եզրակացություններն ու սեփական տեսակետը հաղորդում է տարբեր ձևով (բանավոր, գրավոր, գծանկարային և այլն):
- Մշակված տեղեկությունների (որոնաժ-գտած գիտական աղբյուրների և սեփական հետազոտության) հիման վրա, գրում է աշխարհագրական շարադրություն:
- Հետազոտության տարբեր փուլում համադասարանցիների հետ փոխանակում է իր կարծիքը ստեղծված հիմնախնդիրների մասին և դատում հնարավոր ելքի մասին:
- Հետազոտության տարբեր փուլում մասնակցում է (անում է գործարար դիտողություններ և արդյունավետ առաջարկություններ) համադասարանցիների կողմից քննարկման ներկայացրած հիմնախնդիրների քննարկմանը:
- Աշխարհագրական շարադրություն գրելուց հետո, այն ծանոթացնում է ղեկավարին և հետաքրքրված համադասարանցիներին, նրանց դիտողությունների հաշվառումով, խմբագրում է շարադրությունը:
- Անց է կացնում սեփական հետազոտության շնորհանդեսը, տարբեր հետաքրքրված հասարակական խմբերի (դասարան, համայնք, օլիմպիադա, կոնֆերանս և այլն) առջև:

Երաշխավորված բովանդակություն

1. Ներածություն

- Աշխարհագրության ուսումնասիրման օբյեկտը և նպատակները:
- Ժամանակակից աշխարհագրական գիտության համակարգը:
- Աշխարհագրության տեղը գիտությունների համակարգում:
- Աշխարհագրական գաղափարների ստեղծման (ձևավորման) պատմությունը:
- Աշխարհագրության և աշխարհագրական գիտելիքների նշանակությունը:

2. Աշխարհագրական հետազոտությունը և նրա կազմակերպումը

Ինքնուրույն աշխարհագրական հետազոտության հմտություն-կարողությունների և տիրապետելը:

- Աշխարհագրական հետազոտության մեթոդները. ավանդական (նկարագրական, համեմատական-աշխարհագրական, քարտեզագրական) և ժամանակակից (մաթեմատիկական, օդա-տիեզերական, աշխարհալրատվական, մոդելավորում):
- Աշխարհագրական նախիմացություն:
- Հիմնախնդրի ընկալումը և ընտրումը:
- Դիտարկում:
- Վարկածների առաջադրում:
- Աշխարհագրական շարադրության կառուցվածքային կազմակերպում:
- Տվյալների կազմակերպում և վերլուծում:
- Հիմնախնդրի կարգավորում:

3. Հաղորդակցություն

- Քարտեզը և աշխարհագրական միջոցները:
- Թեմայի մշակման գործընթացում խմբային աշխատանքի հմտություն-կարողությունների տիրապետում (աշխատանքի բաժանում, անհատական կատարում, խմբային քննարկում և այլն):
- Աշխարհագրական թեմայի շարադրում:
- Մշակված աշխարհագրական թեմայի շնորհանդեսի պատրաստումն ու ներկայացումը:

Քաղաքացիական կրթություն
X դասարան
Արդյունքներն ըստ ուղղությունների

Քաղ.X		Ուղղությունները
Անհատական զարգացում	Մարդը և հասարակությունը	Քաղաքացին պետությունը
<p>1. Վերլուծում է սեփական անհատական հատկությունները:</p> <p>2. Սահմանում է սեփական տեղն ու դերը հասարակությունում:</p> <p>3. Պլանավորում է իր ապագան:</p>	<p>4. Ուսումնասիրում և վերլուծում է ժամանակակից հասարակության համար նշանակալից իրադարձություններն ու գործընթացները:</p> <p>5. Հասարակության համար կարևոր հարցերի կապակցությամբ, մշակում և պաշտպանում է սեփական դիրքորոշումը, հարգում այլ դիրքորոշումներ:</p> <p>6. Համագործակցում է հասակակիցների և չափահասների հետ՝ ընդհանուր հետաքրքրություններն իրականացնելու համար:</p>	<p>7. Վերլուծում է ժողովրդավարական հասարակությանը բնորոշ ինստիտուտների գործառույթները:</p> <p>8. Մասնակցում է հասարակության բարօրությանը նպաստող գործունեությանը:</p>

Արդյունքները և ստուգիչները

Անհատական զարգացում

Քաղ. X.1. Վերլուծում է սեփական անհատական հատկանիշները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Խմբի հետ միասին կազմում է իր համար ընդունելի անհատական հատկանիշների ցուցակը և արտահայտում կարծիքներ՝ այս հատկանիշների զարգացման հնարավորության մասին:
- Կազմում և լրացնում է հարցարան՝ սեփական դրական և բացասական հատկանիշների սահմանազատման համար: Այն համեմատում է տարբեր համադասարանցիների ցուցակի հետ և հանգում եզրակացությունների:
- Դատում է այն բնածին և ձեռքբերովի հատկանիշների մասին, որոնք անհրաժեշտ են հասարակությունում լիարժեք կյանքի համար:

Քաղ. X.2. Սահմանում է սեփական տեղն ու դերը հասարակությունում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Որոշում է սոցիալական խումբը (օր.՝ ընտանիք, աշակերտներ, թաղամաս, դեռահասներ, մարզիկներ, նկարիչներ, գիտնականներ և այլն), որին վերագրում է ինքն իրեն ու գնահատում, թե որքանով են համապատասխանում իր ձգտումները խմբի հետաքրքրություններին:
- Ելնելով կոնկրետ գործառույթից՝ գործում է որպես խմբի ընտրած առաջնորդ կամ նրա անդամ:
- Կազմում և դասարանին է ներկայացնում ժամանակի գիծը՝ «Իմ կյանքի ուղին», որի վրա նշում է իր կյանքում՝ անցյալում տեղի ունեցած և ներկայում ընթացող նշանակալից իրադարձությունները, դրանք կապում միմյանց հետ, վերլուծում, թե որքանով են ազդում անցյալում ձեռք բերած հաջողությունը կամ անհաջողությունը ներկայում ձեռք բերած արդյունքների վրա և գնահատում է իր դերն այս իրադարձություններում:

Քաղ. X.3. Պլանավորում է իր ապագան:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Շարունակում է աշխատանքը ժամանակի գծի վրա և ապագայի հատվածի վրա նշում այն ենթադրելի գործողությունները, որոնք մտադիր է իրականացնել անձամբ, տեսակավորում է դրանք՝ ըստ նշանակության և պատճառահետևանքային կապ է հաստատում անցյալ, ներկա և ապագա իրադարձությունների միջև:
- Մասնակցում է համադասարանցիների «Իմ կյանքի ուղին» աշխատանքների ցուցահանդես-քննարկմանը, արտահայտում կարծիքներ՝ տարբեր աշխատանքների մասին, հաշվի է առնում համադասարանցիների

դիտողությունները և, եթե հարկ է համարում, փոփոխություններ է մտցնում իր աշխատանքում:

- Համադասարանցիների հետ գրի է առնում առաջիկա ընդհանուր նպատակները և աղյուսակի միջոցով տեսակավորում դրանք՝ իրականացվելիք ժամկետների համաձայն: Օրինակ

Նպատակներ	Ժամկետ
	Ամենօրյա՝ 2-3 օր
	Կարճաժամկետ՝ մի քանի շաբաթ
	Միջին ժամկետային՝ մի քանի ամիս
	Երկարաժամկետ կամ հեռանկարային՝ մի քանի տարի

- Դատողություններ է անում դրանց իրատեսականության և ձեռքբերման ուղիների մասին:
- Սեփական կարողությունների և նպատակների վերլուծության հիման վրա, անվանում է հասարակական կյանքի այն բնագավառը¹, որը ենթադրաբար կապում է իր ապագա գործունեության հետ, դասարանում հայտնաբերում է համախոհների, որոնց հետ միասին լրատվություն է հավաքում այդ բնագավառի մասին և դրա քննարկումից հետո անում հայտարկ՝ «Իմ ապագա մասնագիտությունը» մինի-նախագծի համար:
- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների խմբի հետ միասին պլանավորում է այն ուղիները, որոնք կօգնեն նրան՝ ընտրած մասնագիտության ուսումնասիրման հարցում, ինչը նկատի ունի. լրատվության ձեռքբերման և վերլուծության փուլեր, ժամկետներ, կիրառվելիք մեթոդների (օր.՝ հարցում, հարցազրույց, տեղում ծանոթություն և այլն) սահմանում:
- Համադասարանցիների հետ համաձայնեցնում է՝ «Իմ ապագա մասնագիտությունը» նախագծի իրականացման համար նախանշված կոնկրետ գործողությունների պլանը, գործառույթների ու ռեսուրսների տեղաբաշխումը և ավարտում իրեն հատկացված դերը:
- Համադասարանցիներին և ուսուցչին իրազեկում է «Իմ ապագա մասնագիտությունը» նախագծի շրջանակներում անցկացված աշխատանքի արդյունքներին, նրանց հետ միասին գնահատում է իր և մյուսների մասնակցությունը, համեմատում պլանավորված և իրատեսորեն ձեռք բերված արդյունքները, հայտնաբերում է թերությունները և վերլուծում պատճառները:

¹ Անճնական և հասարակական կյանքի բնագավառները. սոցիալական անվտանգություն, էկոնոմիկա, պետական կառավարում և մշակույթ:

- Անցկացրած աշխատանքից հետո, սեփական կարողությունների և ձգտումների վերլուծության հիման վրա, գրում է ստեղծագործություն՝ «Ինչպես եմ պատկերացնում իմ ապագան» (նախանշված նպատակները և դրանց հասնելու ուղիները, ցանկալի և անխուսափելի իրադարձություններ, նրա մտահղացման համապատասխանությունը հասարակական շահերին), որը ներկայացնում է համադասարանցիներին:
- Ուսուցչի հետ միասին քննարկում է 11-րդ և 12-րդ դասարաններում ուսումնասիրվելիք դիսցիպլինների ցուցակը, մասնակցում տարբեր առարկաների մանկավարժների՝ համապատասխան դիսցիպլինների մասին զրույցներին և պարզաբանում է դրանց նշանակությունը իր ապագա կարիերայի գործում, կամընտրական առարկաներից ընտրում է ցանկալին և հիմնավորում սեփական ընտրությունը:

Մարդը և հասարակությունը

Քաղ. X.4. Ուսումնասիրում և վերլուծում է ժամանակակից հասարակության համար նշանակալից իրադարձություններն ու գործընթացները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Իր ընտրած որևէ սոցիալական միջավայրի (օր.՝ ընտանիք, դպրոց, հարևանություն, բնակավայր, երկիր) կյանքում առանձնացնում է խիստ կարևոր իրադարձությունները, ունկնդրում համադասարանցիների համանման կարծիքները, որոնում ընդհանուր միտումները և ընդհանրացնում դրանք:
- Անվանում է ամսվա ամենանշանակալից հասարակական իրադարձությունը Վրաստանում, ծանոթանում զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված դրա հետ կապված նյութերին, տարբերում է փաստերը, մեկնաբանություններն ու տեսակետները, ձեռք բերված լրատվության հիման վրա, գրում ռեֆերատ և այս իրադարձության արդյունքները կապում տարբեր սոցիալական խմբերի հետ:
- Անց է կացնում պարզ սոցիոլոգիական հարցում՝ դպրոցական կյանքի հետ կապված հարցերի մասին (օր.՝ դպրոցի հանրաճանաչությունը բնակավայրում կամ տարածաշրջանում, ուսուցման որակը, այլ դպրոցներից տարբերվող յուրահատկությունները, դպրոցի բյուջեն, մրցույթներին մասնակցության արդյունքները և այլն), ստացած արդյունքները համեմատում է դպրոցում եղած պաշտոնական տեղեկությունների հետ և վերլուծում դրանք, դպրոցի կամ դասարանի վարչության ներկայացուցչին ծանոթացնում է արդյունքները:

Քաղ. X.5. Հասարակության համար նշանակալից հարցերի կապակցությամբ մշակում և պաշտպանում է սեփական դիրքորոշումը, գնահատում մյուսների դիրքորոշումները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է վերջին ժամանակների որևէ հակամարտություն (օր.՝ սեփական

փորձից, զանգվածային լրատվամիջոցներով հայտնի դարձած կամ ուրիշ), համադասարանցիների խմբի հետ միասին քննարկում է այն և առանձնացնում չափանիշները, որոնց համաձայն էլ գնահատում է հակամարտ կողմերի գործողությունը:

- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է նրանց համար հրատապ հիմնախնդիր և ուսումնասիրում՝ որքանով է այս հարցը արտացոլված լրատվամիջոցներում, անվանում է փաստարկները՝ հասարակական կարծիքի ձևավորման գործում զանգվածային լրատվամիջոցների նշանակությունը բացահայտելու համար:
- Իրենց ծանոթ օրինակների հաշվառումով, դատում է համադասարանցիների համար հրատապ հարցերի մասին (օր.՝ բարեկամություն, ծնողների հետ փոխհարաբերություններ, մասնագիտության ընտրություն և այլն), սահմանազատում է տրված հարցի հետ կապված տարբեր դիրքորոշումների ուժեղ և թույլ կողմերը:
- Տղաների և աղջիկների հետաքրքրություններն արտացոլող խմբերի վերաբաժանումից հետո, անհատականորեն լրացնում է՝ «Ակնկալիքներ՝ ամուսնությունից» աղյուսակը:

Ցանկություններ	Իրավունքներ	Պարտականություններ

- Իր ցուցակը համեմատում է իր խմբի անդամների աշխատանքներին, մանկավարժի հետ միասին մասնակցում է երկու խմբերի աշխատանքների համեմատությանը և ընդհանուր եզրափակիչ փաստաթղթի ստեղծմանը, որտեղ առավելագույնս հաշվի են առնվելու տղաների և աղջիկների հետաքրքրությունները:
- Մասնակցում է դպրոցի զարգացման (օր.՝ ուսման որակը, տեխնիկական հանդերձավորում, ազգային և միջազգային նախագծերին մասնակցություն, եկամուտների աճ և այլն) հետ կապված դասարանային բանավեճերին, բարեկիրք կերպով արտահայտում և պաշտպանում է սեփական դիրքորոշումը, արտահայտված դիրքորոշումները գնահատելիս, առաջնորդվում է՝ ելնելով հասարակական շահերից և ոչ թե՝ գաղափարի հեղինակի հետ իր անձնական վերաբերմունքից:

Քաղ. X.6. Համագործակցում է հասակակիցների և չափահասների հետ՝ ընդհանուր հետաքրքրությունները իրականացնելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է նվազ պաշտպանված սոցիալական խումբ, ուսումնասիրում նրանց կարիքները և բացահայտում այս հիմնախնդիրների կարգավորման մեջ շահագրգիռ կողմերին, կազմում է նրանց ապագա համագործակցության պլանը և հնարավոր գործնական միջոցառումներ, սեփական մասնակցության հաշվառումով:

- Համադասարանցիների հետ միասին թվարկում է դպրոցի իրավիճակը բարելավելուն ուղղված գործողությունները, ընտրում կոնկրետ միջոցառում և հավաքում համախոհների՝ դրա իրականացման համար, խմբի անդամների հետ միասին քննարկում է նրանց կողմից ներկայացված տարբեր տեղեկություններ և հայեցակետեր, գրավոր ձևավորում և դպրոցի ղեկավարությանն է ներկայացնում գործողությունների պլան:
- Դպրոցի զարգացման հետ կապված ընդհանուր քննարկումներին թե բանավեճերին մասնակցելիս՝ տարբերակված դիրքորոշումների թվում որոնում է ընդհանուր հետաքրքրություններ և բոլոր կողմերի համար ընդունելի փաստարկներ, նկատի է առնում արտահայտված փաստարկները և դիրքորոշումները՝ նախանշված պլանը կատարելագործելու համար, կազմում է նրա համախոհների և ընդդիմախոսների համագործակցության պլան:

Քաղաքացի և պետություն

Քաղ. X.7. Վերլուծում է ժողովրդավարական հասարակությանը բնորոշ ինստիտուտների գործառույթները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է հասարակական կյանքի որևէ բնագավառ և որոնում-գտնում է (օր.՝ սեփական բնակավայրի օրինակով) տեղեկություն՝ դրան մասնակից կողմերի (անհատներ, պետություն և հասարակական կազմակերպություններ) մասին, բնութագրում է այս կողմերի գործառույթները՝ տրված բնագավառի զարգացման մեջ:
- Համադասարանցիների խմբի հետ միասին մշակում է լրատվություն՝ դպրոցի թե երկրի ղեկավարության որևէ ընտրովի պաշտոնի կամ մարմնի (օր.՝ դպրոցի տնօրեն, պատգամավոր, քաղաքական գործիչ և այլն) մասին և կեղծակերպական ընտրություններում կատարում է իրեն հատկացրած դերը (օր.՝ ընտրող, թեկնածու, աջակից, դիտորդ, լրագրող, իրավապահ և այլ), միմյանց է համեմատում ենթադրելի և ստացած արդյունքները, որի հիման վրա էլ, համադասարանցիների հետ միասին, գնահատում է յուրաքանչյուր մասնակցի դերը, գործառույթը:
- Ընտրում է մարդու իրավունքների խախտման (օր.՝ բռնություն, կառաչակերություն, խտրականություն, իրավունքների չարաշահում և այլն) որևէ կոնկրետ փաստ և նմանակաժ դատական քննարկմանը կատարում է իր ընտրած դերը (օր.՝ հայցվոր, պատասխանող, փաստաբան, դատավոր, ատենակալ կամ այլ ոք), վերլուծում է քննարկման գործընթացն ու արդյունքները, որի հիման վրա էլ, ելնելով նրա դերից, կազմում է գործընթացը շարունակելու կամ ավարտելու համար անհրաժեշտ «փաստաթուղթ» (օր., դատավճիռ, բողոքարկում, միջնորդություն, արձանագրություն, հաշվետվություն պաշտպանյալին կամ այլ):

Քաղ. X.8. Մասնակցում է հասարակության բարօրությանը նպաստող գործունեությանը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- «Սեփական ձգտումների և հնարավորությունների համաձայն՝ դպրոցում ընդգրկվում է տարբեր հասարակական խմբերում (օր.՝ գիտատեխնիկական, ստեղծագործական կամ մարզական ակումբներում, իրավունքների պաշտանության խմբերում և այլն) և մասնակցում նրանց գործունեությանը:
- Կիրառում է տարբեր միջոցներ՝ հասարակական հարցերի մասին սեփական (կամ խմբի) տեսակետը արտահայտելու համար (օր.՝ հայտարարություններ, դիմումներ, լրագրային թե ամսագրային հոդվածներ գրելը, հեռուստա-ռադիո ինտերակտիվ հարցումներին մասնակցությունը և այլն):
- Սոցիալապես անպաշտպան որևէ խմբի օգնելու համար նախանշված գործողության գաղափարը փոխանակում է համադասարանցիների հետ և հավաքում համախոհների, պլանավորում է հասարակական աջակցության ձեռքբերման կամպանիա, որի համար դիմում է օրինական միջոցների (օր., դիմում, հանրագիր, հարցում, ստորագրահավաք և այլն), համադասարանցիների հետ միասին գնահատում է պլանավորած և իրատեսորեն ձեռք բերված արդյունքները:

Երաշխավորական բովանդակություն.

1. Մարդը տարբեր սոցիալական խմբերում:
2. Ինքնագնահատում և նպատակադրվածություն:
3. Օրինակելի անհատներ:
4. Աշխատանքային շուկա և միտումներ:
5. Կրթություն ստանալու և մասնագիտական պատրաստության հնարավորությունները:
6. Աշխատանքի իրավունքները՝ սեփական երկրում և արտասահմանում:
7. Չափահասություն և ամուսնություն:
8. Ընտանիք և այլ սոցիալական խմբեր:
9. Սոցիալապես անպաշտպաններ:
10. Աշխատակիցներ և լիդերներ:
11. Հակամարտությունները և դրանց կարգավորումը:
12. Անսահմանափակ և սահմանափակ հարաբերություններ:
13. Հասակակիցների և ավագների հասարակություն:
14. Ժողովրդավարական կառավարման մոդելը:
15. Իրականությունը և դրա գնահատումը:
16. Հասարակական կարծիք և որոշումներ:
17. Հավասարություն՝ մեծամասնություն և փոքրամասնություն:
18. Մասնակցության կուլտուրա:
19. Կաշառակերություն և անտարբերություն:
20. Դատարանը և իրավապահները՝ մարդու իրավունքների պաշտպանության միջոցներ:
21. Հասարակական պատվեր և պետական պարտականություններ:
22. Քաղաքացին և պետական պաշտոնյան՝ պատասխանատվությունների բաժանում

Վրաստանի և աշխարհի պատմություն
XI դասարան
Արդյունքներն ուղղությունների համաձայն

Պատմ. XI.		Ուղղությունները	
Միջավայրը և էկոնոմիկան	Պետական կառավարում և քաղաքականություն	Մարդը և հասարակությունը	Կրոնը և մշակույթը
<p>1. Վերլուծում է Վրաստանում և աշխարհում նշանակալից տնտեսական փոփոխությունները:</p> <p>2. Աշակերտը վերլուծում է ռեսուրսների և տնտեսության փոխներգործությունը:</p>	<p>3. Աշակերտը վերլուծում է կառավարման կառուցվածքների ստեղծումն ու փոփոխությունները:</p> <p>4. Աշակերտը հետազոտում է Վրաստանում և աշխարհում ներքին և արտաքին քաղաքական գործընթացները:</p>	<p>5. Աշակերտը հետազոտում է սոցիալական կառուցվածքների փոխադարձաբերությունները:</p>	<p>6. Աշակերտը վերլուծում է կրոնի ազդեցությունը նյութական և հոգևոր մշակույթի վրա:</p> <p>7. Աշակերտը հետազոտում է տարբեր մշակույթների փոխհարաբերությունները և փոխազդեցությունը:</p>

Արդյունքները և ստուգիչները

Միջավայրը և էկոնոմիկան

Պատմ. XI.1. Վերլուծում է Վրաստանում և աշխարհում նշանակալից տնտեսական փոփոխությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է երկու տարբերակված տնտեսական փոխհարաբերությունների ձև և դրանք համեմատում միմյանց (օր.՝ արհեստանոցը միջին դարերում և գործարանը՝ XIX դարում):
- Ընտրում է տնտեսական հարաբերությունների որևէ ձև և համեմատում Վրաստանում և որևէ այլ երկրում (տարածաշրջանում) դրա ձևավորման և զարգացման հետ (օր.՝ ֆեոդալական տնտեսությունը Վրաստանում և Արևմտյան Եվրոպայում):
- Տարբեր դարաշրջանների և երկրների օրինակով դատում է տարբերակված տնտեսական փոխհարաբերությունների պայմաններում աշխատանքի բաժանման մասին:
- Ընտրում է որևէ դարաշրջան և դատում տեխնոլոգիական փոփոխությունների և էկոնոմիկայի զարգացման փոխազդեցության մասին:
- Ընտրում է տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած երկու գաղթային գործընթացներ և համեմատում դրանց պատճառներն ու հետևանքները:
- Գրում է շարադրություն, որտեղ դատում է որևէ հակամարտության (պատերազմի) տնտեսական նախապայմանների և արդյունքների մասին:
- Աղյուսակում խմբավորում է արևելյան և արևմտյան տնտեսական փոխհարաբերություններին բնորոշ նշանները և դատում դրանց միջև եղած նմանությունների և տարբերությունների մասին:
- Մեկ երկրի օրինակով գրավոր դատում է, թե ինչպես էր փոխվում տարբեր դարաշրջաններում պետության դերը՝ երկրների տնտեսական փոխհարաբերությունների զարգացման գործում:
- Ընտրում է երկու կայսրություն և միմյանց հետ համեմատում դրանց տնտեսական քաղաքականությունը՝ ծարամասերում և գաղութներում (օր.՝ Անգլիայի և Իսպանիայի քաղաքականությունն իրենց գաղութներում):
- Ընտրում է որևէ տնտեսական տեսություն և դատում, թե ինչ ազդեցություն է գործել այն այս կամ այն երկրի (տարածաշրջանի) տնտեսական զարգացման վրա:

Պատմ. XI.2. Աշակերտը վերլուծում է ռեսուրսների և էկոնոմիկայի փոխազդեցությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դատում է, թե ինչ ազդեցություն են գործում բնական և մարդաբանական

փոփոխությունները տնտեսական զարգացման վրա (օր.՝ սառածություն, Նիդերլանդներում ամբարտակների կառուցում):

- Համեմատում է նույն դարաշրջանում բաց և փակ (մեկուսացված) աշխարհագրական միջավայրում տնտեսական զարգացման յուրահատկությունները (օր., Վրաստան, Հին Հունաստան):
- Դատում է, թե ինչ ազդեցություն են գործում բնակչության թիվը և խտությունը երկրի տնտեսական զարգացման վրա:
- Ընտրում է որևէ պետություն և դատում, թե այս երկրի տնտեսական գերակայությունների վրա ինչ ազդեցություն են գործում նրա տարածքում արդյունահանած հանածոները:

Պետական կառավարում և քաղաքականություն

Պատմ.XI.3. Վերլուծում է կառավարման կառուցվածքների ձևավորումն ու փոփոխությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Խմբային բանավեճի ժամանակ դատում է կոնկրետ դարաշրջանում պետության կառավարման կառուցվածքներում ընթացող փոփոխությունների մասին:
- Համեմատում է կենտրոնների և տարածաշրջանների փոխհարաբերությունները տարբեր դարաշրջաններում:
- Ընտրում է երկու հեղափոխություն և համեմատում դրանց հարուցիչ պատճառները, ընթացքի գործընթացն ու արդյունքները, այս վերլուծության հիման վրա՝ դասարանում խմբային աշխատանքի ժամանակ ստեղծում է հեղափոխության ընդհանուր նմուշօրինակ:

Պատմ.XI.4. Հետազոտում է Վրաստանում և աշխարհում ներքին և արտաքին քաղաքական գործընթացները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ դարաշրջանից և համեմատում տարբեր պետությունների շահերը Վրաստանի հանդեպ (օր., Բյուզանդիայի և Իրանի շահերը IV-VII դարերում):
- Ընտրում է որևէ պետություն և խմբավորում որևէ դարաշրջանում դրա միավորման կամ մասնատման արտաքին և ներքին գործոնները:
- Գրում է շարադրություն աշխարհում զարգացող նշանակալից պատմական իրադարձության մասին, որը ազդեցություն է գործել վրացական պետության (պետությունների: հետագա զարգացման վրա (օր.՝ I խաչակրաց արշավանքի կամ Բյուզանդիայի կայսրության անկման ազդեցությունը Վրաստանի վրա):
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է մեկ քաղաքական գործչի

և դատում նրա ընտրած արտաքին թե ներքին քաղաքական կուրսի արդյունքների մասին (օր.՝ Էրեկլե II-ի կողմից Գիորգևսկի միջազգային դաշնագրի կնքումը կամ Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան):

- Ընտրում է որևէ կոնկրետ դարաշրջան, առանձնացնում է վրացական պետության (պետությունների) շահերը և դատողություններ անում ձեռնարկած քաղաքական քայլերի մասին:

Մարդը և հասարակությունը

Պատմ.XI.5. Հետազոտում է սոցիալական կառուցվածքների փոխհարաբերությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտահայտում է սեփական տեսակետը անձնավորության գույքային և սոցիալական իրավիճակների միջև փոխհարաբերությունների մասին:
- Համեմատում է միևնույն դարաշրջանի երկու կամ երեք երկրների սոցիալական կառուցվածքները և նշում տարբերություններն ու նմանությունները:
- Խմբավորում է տարբեր հասարակություններում տարբերակված սոցիալական խավերի ներկայացուցիչներին և դատում նրանց իրավունքների և պարտականությունների մասին:
- Համեմատում է սարի ու դաշտի սոցիալական կառուցվածքները և գտնում նմանություններն ու տարբերությունները:

Կրոնը և մշակույթը

Պատմ.XI.6. Աշակերտը վերլուծում է կրոնի ազդեցությունը նյութական և հոգևոր մշակույթի վրա:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Համեմատում է Վրաստանի և մյուս երկրների նախաքրիստոնեական կրոնական պատկերացումները և դրանց ազդեցությունը արվեստի և կենցաղի վրա:
- Դասարանային բանավեճերի ժամանակ դատում է, թե ինչ ազդեցություն է գործել քրիստոնեությունը վրաց ժողովրդի արվեստի և կենցաղի վրա, զուգահեռներ է անցկացնում որևէ այլ քրիստոնեական երկրի հետ:
- Դատում է, թե ինչպես էին փոխվում փոխհարաբերությունները աշխարհիկ և հոգևոր իշխանության միջև՝ տարբեր դարաշրջաններում և երկրներում, և ինչպես էին անդրադառնում այդ փոփոխությունները երկրի մշակութային զարգացման վրա:

Պատմ. XI.7. Հետազոտում է տարբեր մշակույթների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբով կամ անհատականորեն աշխատելիս՝ անվանում է վրացական արվեստի այն հուշարձանները (օր.՝ գրականություն, կերպարվեստ), որոնց վրա հատկապես ազդեցություն են գործել այլ մշակույթները, հիմնավորում է իր ընտրությունը:
- Ընտրում է վրացական պաշտամունքային թե աշխարհիկ նշանակության հուշարձաններ և զուգահեռներ անցկացնում համանման նշանակություն ունեցող այլ երկրների հուշարձանների ճարտարապետության միջև:
- Վրաստանի քաղաքներից մեկը համեմատում է արևելյան և եվրոպական որևէ քաղաքի հետ և դատում նրա ճարտարապետության և կենցաղի վրա տարբեր մշակույթների ազդեցության մասին:
- Դասարանային բանավեճի ժամանակ դատում է եվրոպական և արևելյան մշակույթների փոխհարաբերությունների և վրաց ժողովրդի արվեստի ու կենցաղի վրա դրանցից յուրաքանչյուրի ազդեցության մասին:

Երաշխավորված բովանդակություն

1. Նախապատմական ժամանակաշրջան
2. Հին Արևելքը և Վրաստանը
3. Վրաստանը և աշխարհը անտիկ ժամանակաշրջանում
4. Վրաստանը և նրա հարևանները IV-VII դարերում
5. Արաբները, արաբների տիրապետությունը Վրաստանում
6. Վրաստանը, Մերձավոր Արևելքը և Եվրոպան X-XV դարերում
7. XV-XVIII դարեր.
 - ա) Վրաստանը և հարևանները (Իրան, Թուրքիա, Ռուսաստան):
 - բ) Բյուզանդիայի անկումը, Արևմտյան Եվրոպա և ԱՄՆ-ի ստեղծումը:
9. XIX դար.
 - ա) Վրաստանը Ռուսաստանի կայսրության կազմում:
 - բ) Եվրոպան և ԱՄՆ-ը:

Համաշխարհային աշխարհագրություն
 XI դասարան
 Արդյունքներն ուղղությունների համաձայն

Աշխարհ.XI.		Ուղղությունները
Ժամանակը և տարածությունը	Պետական կառավարումը և քաղաքականությունը	Միջավայրը և սոցիալական համակարգերը
<p>1. Քաղաքական քարտեզի կազմելը կապում է աշխարհում ընթացող նշանակալից գործընթացների հետ:</p>	<p>2. Վերլուծում է երկրների տեղն աշխարհում՝ մի շարք սոցիալական և տնտեսական պարամետրերի համաձայն:</p> <p>3. Վերլուծում է տարածքային և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը հասարակության զարգացման վրա:</p>	<p>4. Հետազոտում է աշխարհի բնակչության բնակեցման յուրահատկությունները և վերլուծում ժողովրդագրական իրավիճակը:</p> <p>5. Երկրների դասակարգման հիման վրա՝ վերլուծում է դրանց զարգացման հեռանկարները:</p> <p>6. Համեմատում է երկրներն՝ ըստ տարբեր բնութագրիչների և դատում նմանություն-տարբերությունների պատճառների մասին:</p>

Արդյունքները և ստուգիչները

Ժամանակը և տարածությունը

Աշխարհ.XI.1. Քաղաքական քարտեզի կազմելը կապում է աշխարհում ընթացող նշանակալից գործընթացների հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընդգծում է աշխարհի քաղաքական քարտեզը կազմելու գլխավոր փուլերը, արդյունքներն արտահայտում է իր համար ցանկալի ձևով:
- Խմբով աշխատելիս՝ վերլուծում է ձեռք բերած տեղեկությունը՝ XX դարի 90-ական թվականներին ընթացող գործընթացների մասին և կապում դրանք ժամանակակից քարտեզը կազմելու հետ, պատճառա-հետևանքային կապերը պատկերում է ցանկալի ձևով:
- Դարաշրջանների համաձայն՝ աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխությունները տեղափոխում է ուրվագծային քարտեզի վրա և ստեղծում թեմատիկ քարտեզագիրք:

Պետական կառավարումը և քաղաքականությունը

Աշխարհ.XI.2. Վերլուծում է երկրների տեղը աշխարհում՝ մի շարք սոցիալական և տնտեսական պարամետրերի համաձայն:

Արդյունքն առկա է, եթե աշակերտը.

- Թվարկում և խմբավորում է երկրների զարգացմանը խոչընդոտող և օժանդակող (աշխարհագրական դիրք, սոցիալական, տնտեսական և քաղաքական) գործոնները, վերլուծում նշված գործոնների ազդեցությունը երկրների զարգացման վրա և դրսևորում է սեփական վերաբերմունքը:
- Մշակում է երկրի զարգացման մակարդակը մատնացույց անող չափանիշներ (աշխատատեղեր, առևտրական օբյեկտներ, միջին աշխատավարձ, տրանսպորտ, բնակատեղ) և հիմնավորում սեփական տեսակետները:
- Ուշադրությամբ զննում է հյուսիս-հարավի սահմանազատման (տնտեսական զարգացման մակարդակը նշող) քարտեզ և աղյուսակում երկրները խմբավորում՝ մայրցամաքների և զարգացման մակարդակի համաձայն:
- Կազմում և համեմատում է այն ռեսուրսների (շինանյութ, գվարճանքի միջոցներ, տրանսպորտ և ճանապարհներ, էլեկտրաէներգիայի արտադրություն-սպառում և այլն) ցանկը, որոնք օգտագործվում են հարուստ և աղքատ երկրների տնտեսություններում, դատում է ռեսուրսների և տնտեսական զարգացման մակարդակների միջև եղած կապերի մասին:
- Տնտեսական պարամետրերի և մարդկային զարգացման դասիչի համաձայն, համեմատում է երկրների ցուցանիշները, արտահայտում սեփական կարծիքները՝ դրանցից յուրաքանչյուրի լիարժեքության թե թերությունների մասին:

Աշխարհ.XI.3.Վերլուծում է տարածքային և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը հասարակության զարգացման վրա:

Արդյունքն առկա է, եթե աշակերտը.

- Բնութագրում է աշխարհագրական դիրքի մակարդակները (տարածաշրջանային, մայրցամաքային, մերձափնյա, զոնալ, հարևանություն և փոխհարաբերություններ՝ զարգացած և զարգացող երկրների հետ), ըստ նշված ցուցանիշների, աղյուսակում խմբավորում է տարբեր երկրներ:
- Բերում է օրինակներ և համեմատում տարբեր երկրները՝ կառավարման ձևի, տարածքային կառուցվածքի, միջազգային կարգավիճակի և արտաքին քաղաքական կուրսի համաձայն:
- Դատում է աշխարհի տարածաշրջանային տարբերակումների մասին և համեմատում տարածաշրջանները՝ պատմա-մշակութային և աշխարհաքաղաքական նշանների համաձայն:
- Խմբով աշխատելիս՝ վերլուծում է աշխարհաքաղաքականության բաղկացուցիչ նշանակալից բաղադրամասերը (տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և ռազմական քաղաքականություն) և, ըստ նշված չափանիշների, խմբավորում է երկրները՝ աշխարհաքաղաքական կուրսի համաձայն:
- Համապատասխան տերմինների և հասկացությունների կիրառությամբ, դատում է Վրաստանի աշխարհաքաղաքական հիմնախնդիրների և միասնական եվրոպական տան (Եվրամիություն) հայեցակարգի մասին, նշված հարցի կապակցությամբ ձևավորում է սեփական հայացքները:
- Դատում է տարբեր բնագավառներում Վրաստանի ռազմավարական գործընկեր երկրների հետ փոխհարաբերությունների հեռանկարների մասին և արդյունքներն արտահայտում ցանկալի ձևով:
- Վերլուծում է նշանակալից միջազգային ռազմաքաղաքական, ֆինանսական և տնտեսական կազմակերպությունների դերը՝ դրանց անդամագրված երկրների զարգացման գործում, երկրները դասում է հիմնական կազմակերպությունների թվին, դատում է դրանց ընդլայնման հեռանկարների մասին և ստեղծում համապատասխան քարտեզներ:

Միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխարհ.XI.4. Հետազոտում է աշխարհի բնակչության բնակեցման յուրահատկությունները և վերլուծում ժողովրդագրական իրավիճակը:

Արդյունքն առկա է, եթե աշակերտը.

- Աշխարհի բնակչության ռասայական և էթնիկական կառուցվածքի աշխարհագրական յուրահատկությունների հիման վրա, կազմում է համապատասխան քարտեզ:
- Վիճակագրական տեղեկությունների հիման վրա, խմբավորում է հիմնական կրոնները՝ ծագման ժամանակի, դավանակից երկրների քանակի և բնակչության թվի (բազմամարդության) համաձայն, արդյունքներն արտացոլում

է ցանկալի ձևով (աղյուսակ, քարտեզ և այլն):

- Չեռք բերած տեղեկությունների հիման վրա, դատում է աշխարհի լեզվաբնույթների և խմբերի աշխարհագրության մասին, արդյունքներն արտահայտում է առանձնահատուկ ձևաչափով (տեքստային նյութի ձևափոխում քարտեզի, աղյուսակի, սխեմայի վրա):
- Վիճակագրական տեղեկությունների վերլուծության հիման վրա՝ խմբավորում է երկրները՝ տարբեր սոցիալ-ժողովրդագրական կարգերի (կյանքի տևողություն, ծնելիություն, առողջապահության և կրթության մակարդակ) համաձայն, արդյունքներն արտահայտում է իր համար ցանկալի ձևով:
- Վիճակագրական տեղեկությունների և համապատասխան ժողովրդագրական կարգերի վերլուծության հիման վրա՝ համեմատում է ժողովրդագրական անցման փուլերը, աղյուսակում խմբավորում է տարբեր փուլերում գտնվող երկրները:
- Դատում է ժողովրդագրական քաղաքականության նշանակության մասին, խմբով աշխատելիս, մշակում է ժողովրդագրական քաղաքականության գնահատման չափանիշները, համեմատում է և վերլուծում տարբեր երկրներում իրականացված ժողովրդագրական քաղաքականության արդյունքները (հաջող և անհաջող):
- Վերլուծում է աշխարհի բնակչության աճի նախնացությունները և դրա տարածաշրջանային յուրահատկությունները, համեմատում է աշխարհի բնակչության ապագայի սցենարները և արդյունքները ներկայացնում իրեն ցանկալի ձևով:

Աշխարհ. XI. 5. Երկրների դասակարգման հիման վրա՝ վերլուծում է դրանց զարգացման հեռանկարները:

Արդյունքներն առկա են, եթե աշակերտը.

- ՄԱԿ-ի (մարդկային զարգացման դասիչ) դասակարգման համաձայն՝ յուրաքանչյուր խմբում միավորված երկրները համեմատում է՝ ըստ դրանց բնորոշ բնական պայմանների (բնահատուկ բնապատկերներ՝ արևադարձային անտառներ, արիդային լանդշաֆտ և այլն), սեփական տեսակետներն արտահայտում է տարբեր ձևերով:
- Զարտեզներում և այլ աշխարհագրական միջոցներում տրված տեղեկությունների հիման վրա, ՄԱԿ-ի դասակարգման համաձայն, բնութագրում և համեմատում է յուրաքանչյուր խմբում միավորված երկրների տնտեսության առաջատար ճյուղերը, դատում ծագած հիմնախնդիրների և զարգացման հեռանկարների մասին:
- Արտահայտում է կարծիքներ և խմբային աշխատանքի ժամանակ հիմնավորում տարբեր երկրների կայուն զարգացման համար բնակչության, ռեսուրսների և ավանդույթների խելամիտ կիրառման նշանակությունը:
- Համեմատում է ՄԱԿ-ի դասակարգման երկրների խմբերը՝ բնական պայմանների, տնտեսության ճյուղերի, բնակչության և զարգացման հեռանկարների համաձայն, արտահայտում է սեփական կարծիքներն այս խմբերի միջև հնարավոր կապերի մասին:

Աշխարհ. XI. 6. Համեմատում է երկրները՝ տարբեր բնութագրիչների համաձայն և դատում նմանություն-տարբերության պատճառների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի և այլ աշխարհագրական միջոցների օգնությամբ, հետազոտում է երկրների բնական պայմանները, բերում է նման օրինակներ այլ երկրներից (օր.՝ արևադարձային անտառներ, անապատ, տայգա և այլն):
- Վերլուծում է բնակչության վիճակագրական տվյալները (քարտեզներ, աղյուսակներ, գծանկարներ, դիագրամներ և այլն), դատում է բնակչության խտության, բնակեցման յուրահատկությունների և ժողովրդագրական իրավիճակի մասին, համեմատում մյուս երկրների համանման տվյալները և արդյունքներն արտահայտում տարբերակված ձևաչափով:
- Հետազոտում է ուսումնասիրվելիք երկրի ավանդույթների ծագման աշխարհագրական և պատմա-մշակութային յուրահատկությունները, համեմատում մյուս երկրների հետ և ենթադրում, թե ինչպես կարող է կիրառվել ավանդույթների բազմազանությունը երկրի զարգացման համար:
- Տնտեսական գործունեության կառուցվածքի հիման վրա՝ աղյուսակում խմբավորում է երկրները՝ զարգացման փուլերի համաձայն (ագրարային, արդյունաբերական, ետարդյունաբերական::

№	Երկիրը	Ագրարային			Արդյունաբերական			Ետարդյունաբերական					
		Զբաղվածության կառուցվածքը %-ով	Բաժինը ՄՇՊ-ում %-ով	Զբաղվածության կառուցվածքը %-ով	Բաժինը ՄՇՊ-ում %-ով	Զբաղվածության կառուցվածքը %-ով	Բաժինը ՄՇՊ-ում %-ով						
		Գյուղատնտեսություն	Արդյունաբերութ.	Սպասարկում	Գյուղատնտեսություն	Արդյունաբերութ.	Սպասարկում	Գյուղատնտեսություն	Արդյունաբերութ.	Սպասարկում			
1	ԱՄՆ							X	X	X	X	X	X
2	Ճապոնիա							X	X	X	X	X	X
3	Բանգլադեշ	X	X	X	X	X	X						
4	Չինաստան							X	X	X	X	X	X
5	Բրազիլիա							X	X	X	X	X	X

2009

- Արտահանման-ներմուծման տվյալների վրա հիմնվելով՝ դատում է երկրի ռեսուրսների և տնտեսության մասնագիտացման ճյուղերի մասին, համեմատում է երկրները՝ նշված ցուցանիշների համաձայն:
- Վերլուծում է երկրում գոյություն ունեցող հիմնախնդիրները (ռեսուրսներ, սոցիալ-տնտեսական, քաղաքական և էկոլոգիական), արտահայտում է ենթադրություն՝ եղած հիմնախնդիրների հաջող կարգավորման մասին:
- Վերլուծում է տեքստային տեղեկություններն ու տարբեր տեսակի աշխարհագրական միջոցները և սահմանում, ինչպես էր փոխվում ընտրած երկրի դերը՝ աշխարհի ֆոնի վրա, արտահայտում է կարծիք՝ երկրի ապագա հեռանկարների մասին (սոցիալ-տնտեսական և ռազմա-քաղաքական ներուժ):

Երաշխավորական բովանդակություն

1. Քաղաքական քարտեզի կազմավորման փուլերը

- I փուլ՝ հին (հնագույն ժամանակներից մինչև V դարը):
- II փուլ՝ միջին դարեր (V դարից մինչև XV դարը):
- III փուլ՝ նոր (XVI դարից մինչև XX դարի սկիզբը):
- IV փուլ՝ նորագույն (I համաշխարհային պատերազմից մինչև 90-ական թվականները):

ա) Ժամանակակից փուլ (XX դարի 90-ական թվականներից մինչև այսօր):

2. Աշխարհի ժողովրդագրական իրավիճակը (պատմական անցյալից մինչև այսօր):

- Ռ-ասաներ, էթնիկական և կրոնական կառուցվածքը (տարածում):
- Տարածաշրջանների և երկրների սոցիալ-ժողովրդագրական դասակարգումը (կյանքի տևողությունը, ծնելիությունը, մահացությունը, առողջապահության և կրթության մակարդակը):
- Ժողովրդագրական անցում:
- Ժողովրդագրական քաղաքականություն:

3. Քաղաքական աշխարհագրություն և աշխարհաքաղաքականություն

- Երկրները կառավարման ձևի և վարչա-տարածքային կառուցվածքի համաձայն:
- Երկրները միջազգային կարգավիճակի և արտաքին քաղաքական կուրսի համաձայն:
- Նշանակալից միջազգային ռազմա-քաղաքական և տնտեսական կազմակերպությունները (միավորումները):
- Երկրները՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի համաձայն (մարդկային զարգացման դասիչը):

4. ՄԱԿ-ի երկրների տիպաբանությունը.

1. Յոթնյակի երկրները
2. Արևմտյան Եվրոպայի մյուս զարգացած երկրներ, Իսրայել, Սարի, Ավստրալիա և Նոր Զելանդիա
3. Նոր արդյունաբերության երկրները

4. Արևելյան Եվրոպայի երկրները
5. Ռուսաստանը և նախկին ԽՍՀՄ երկրները (բացառությամբ Մերձբալթյան երկրների)
6. Չինաստան
7. Մեծ տարածությամբ և առատ բնակչությամբ զարգացող երկրները (Հնդկաստան, Պակիստան, Ինդոնեզիա)
8. Նավթարդյունահանող երկրները, զարգացած տուրիզմի, տարանցիկ և պլանտացիաների տնտեսության փոքր երկրներ
9. Չարգացող երկրներ (1000 ԱՄՆ դոլար՝ բնակչության մեկ շնչի հաշվով)
10. Խիստ աղքատ երկրներ (միջին հաշվով 100 ԱՄՆ դոլար՝ բնակչության մեկ շնչի հաշվով):

Հասարակական գիտություններ
Կամընտրական դասընթացներ
XI-XII դասարաններ

XI-XII դասարաններում կամընտրական ուսումնական դասընթացների (շաբաթը 3 ժամ) վերջին եռամսյակը տրամադրվում է տարբեր տեսակի նախագծերի վրա աշակերտների գործնական աշխատանքին, որոնք նրանք **ընտրում են** մանկավարժի և համադասարանցիների հետ միասին: Նախագծի վրա աշխատանքն ընդգրկում է պլանավորման, հետազոտության, գործնական ակտիվության և արդյունքների ներկայացման փուլեր՝ ընտրված հարցին համապատասխան: Նախագիծը համարվում է իրականացված, եթե դրա արդյունքները ներկայացված են ակներևաբար և համոզիչ կերպով, կոռեկտ ձևով (օր.՝ գրավոր փաստաթուղթ, մանրակերտ, բեմականացում, բանավեճեր, միջոցառում, հետևողական միջոցառումներ և այլն): Չափորոշչում տարբերակված խորհրդանիշով նշված են աշակերտների ակտիվությունները, որոնք վերջին եռամսյակում, հնարավոր է, իրականացվեն նախագծի տեսքով:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուղղություն՝ տնտեսություն
<ol style="list-style-type: none"> 1. Վերլուծում է տարբեր շուկաների փոխադարձ կապի և պահանջարկ-առաջարկի հավասարակշռության պայմանները: 2. Հիմնավորում է առևտրի նշանակությունը բարեկեցության բարելավման համար: 3. Ուսումնասիրում է մրցակցության ծագման պատճառներն ու դատում դրանց խոչընդոտող թե օժանդակող գործոնների մասին: 4. Վերլուծում է Վրաստանում տնտեսական գործունեության հնարավորությունները: 5. Գնահատում է միջազգային փոխհարաբերությունների նշանակությունը երկրի տնտեսության զարգացման համար:

Արդյունքները և ստուգիչները

Տնտ. XI-XII. 1. Վերլուծում է տարբեր շուկաների փոխադարձ կապն ու պահանջարկ-առաջարկի հավասարակշռության պայմանները:

Արդյունքն առկա է, եթե աշակերտը.

- Թվարկում է սեփական պահանջարկները՝ տարբեր ապրանքների և սպասարկման մասին, դատում դրանց մատակարարման ժամանակաշրջանի համապատասխանության, որակի և մատչելիության մասին:
- Սեփական ընտանիքի (կամ բնակավայրի, երկրի) օրինակով, քննարկում է եղած պահանջները, խմբավորում դրանք՝ շուկաների տեսակի (օր.՝ պարենային, արդյունաբերական, կրթության, սպասարկման, աշխատանքի, դրամի և այլն) համաձայն և որակավորում՝ ըստ ինտենսիվության, գնի, կենսական անհրաժեշտության թե այլ չափանիշների:
- Անվանում է միևնույն արժեքի ապրանքներ և սպասարկում: Դատում է դրանց տարբերակիչ նշանների մասին և հիմնավորում, թե ինչու նրանք ունեն միատեսակ արժեք:
- Ընտրում է ապրանքի կամ սպասարկման որևէ շուկա (օր.՝ ապրանքի, փողի, աշխատանքի, կրթության, սպասարկման և այլն) Վրաստանում և քննարկում պահանջարկ-առաջարկի հավասարությունը, հավասարակշռությունը, գնահատում է դրա իրավիճակը (օր.՝ հավասարակշռություն, անբավարարություն, առատություն):
- Որևէ շուկայի օրինակով, դատում է, թե ինչ ազդեցություն է գործում գների վրա արդյունաբերողների և սպառողների թիվը:
- Սեփական բնակավայրի (կամ երկրի) օրինակով, դատում է տնտեսության գործունեության տարբեր բնագավառների փոխկախվածության մասին և անվանում փոխադարձ կապի պատճառները (օր.՝ մասնագիտացում, տեղափոխում, փոխանակում և այլն):
- Փողի, ապրանքի և ռեսուրսների շրջանառությունը քննարկելիս՝ անվանում է համապատասխան շուկաներ (օր.՝ հանդեր, գյուղացիներ, հացի փուռ, խանութներ և այլն), սեփական բնակավայրի կամ երկրի օրինակով:

Տնտ. XI-XII. 2. Հիմնավորում է առևտրի դերը՝ բարեկեցության բարելավման համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ ապրանք կամ սպասարկում, որն օգտագործում է և անվանում դրա արժեքը, ձեռք բերած տեղեկությունների հիման վրա, հաշվում է այս ապրանքի կամ սպասարկման արժեքն այն պարագայում, եթե նա անձամբ էր արտադրում և համեմատում գնվածի արժեքին, այս վերլուծության հիման վրա, դատում է մարդու համար առևտրի նշանակության մասին:

- Ձեռք է բերում տեղեկություններ սեփական բնակավայրում գոյություն ունեցող տարբեր ռեսուրսների մասին, վերլուծում է դրանք և կազմում այնտեղ արտադրված կամ արտադրվելիք ապրանքի թե սպասարկման ցանկը, համադասարանցիների հետ փոխանակում իր կարծիքը, դրանք տեղում կամ մի ուրիշ տեղում փոխանակելու ուղիների մասին և հիմնավորում է այս գործողությունների արդյունավետությունը, ունկնդրում է համադասարանցիների դիտողությունները և նկատի առնում՝ իրենց բնակավայրի արտահանում-ներմուծման աղյուսակը կազմելիս:
- Թվարկում է փողի հատկությունները և գործառույթները, դրանք կապում տնտեսական գործունեության տարբեր տեսակների հետ:
- Քննարկում և համեմատում է երկու դեպք, երբ փողը շրջանառության մեջ է, և երբ փողը ընդհանրապես գոյություն չունի, դատում է, թե որ դեպքը իր համար կլինի առավել շահութաբեր:

Տնտ. XI-XII. 3. Ուսումնասիրում է մրցակցության ծագման պատճառները և դատում դրան խոչընդոտող և օժանդակող գործոնների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սեփական փորձի կամ ձեռք բերած տեղեկությունների հիման վրա՝ նկարագրում է դեպքեր, երբ մարդիկ ունեն իրենց անհրաժեշտ ապրանքը ձեռք բերելու միայն մեկ կամ մի քանի աղբյուր, համեմատում է այս երկու իրավիճակները և դատում դրանցից մեկի առավելության մասին:
- Անվանում է իրեն հայտնի մի քանի ընկերություն, ֆիրմա, որոնք արտադրում են միևնույն տեսակի ապրանք կամ իրականացնում են սպասարկում, սեփական փորձի հիման վրա, ընտրում է լավագույն արդյունաբերողի բացահայտման չափանիշները և հիմնավորում իր կարծիքը, դատում է, թե որքանով համահավասար պայմաններում են գործում այդ ընկերությունները:
- Կոնկրետ ձեռնարկատիրական գործունեության քննարկման հիման վրա՝ առանձնացնում է շահույթի աճի և ծախսերի կրճատման գործոնները, դատում այս գործունեության մեջ ընդգրկված մարդկանց հնարավորությունների մասին՝ ձեռնարկության արդյունավետությունը բարձրացնելու համար:
- Չանգվածային լրատվամիջոցներից ստացած տեղեկությունների հիման վրա՝ նկարագրում է դեպք, երբ սահմանափակվել էր օրինական ձեռնարկությունը և անվանում է այս իրադարձության հարուցիչ պատճառները (օր.՝ իշխանության կողմից արգելում, պահանջարկների կրճատում, մյուս արդյունաբերողների ուժեղացում և այլն), արտահայտում է կարծիք՝ գոյություն ունեցող կամ հնարավոր արդյունքների մասին ինչպես արդյունաբերողի, այնպես էլ սպառողի համար:
- Դատում է մարդու տնտեսական իրավունքների նշանակության մասին՝ հավասարության և ազատության տեսակետից:

ՏՆՈՒՄ XI-XII. 4. Վերլուծում է Վրաստանում տնտեսական գործունեության հնարավորությունները:

Արդյունքն առկա է, եթե աշակերտը.

- Թվարկում է Վրաստանում ամենատարածված տնտեսական ակտիվությունները և առանձնացնում այնպիսիները, որտեղ պետական կառավարման մարմինների որոշումներին տրվում է ամենանվազ նշանակությունը:
- Թվարկում է տնտեսական համակարգերը (օր.՝ հրամայական, ազատ, խառը) և դատում մարդու տնտեսական իրավունքներին յուրաքանչյուրի համապատասխանության մասին, ընտրում է իր կարծիքով ամենարճալիցի և հիմնավորում ընտրությունը:
- Բնութագրում է շուկայական էկոնոմիկայի գլխավոր սկզբունքները (օր.՝ մասնավոր սեփականություն, անձնական դրդապատճառ, ընտրության և գործունեության ազատություն, շուկաների և գների համակարգ և այլն), դատում է շուկայական էկոնոմիկայի սկզբունքներին Վրաստանի Սահմանադրության և այլ օրենքների համապատասխանության մասին:
- Դատում է Վրաստանի տնտեսությունում պետության դերի մասին:
- Համադասարանցիների խմբի հետ միասին սեփական բնակավայրում անց է կացնում փոքր հարցում՝ հարկավճարների նկատմամբ բնակչության վերաբերմունքը դրևորելու համար (օր.՝ որքանով է անհրաժեշտ, իրատեսական է, նպատակալաց և արդյունավետ կերպով է կիրառվում և այլն), ստացած արդյունքների և դպրոցում ստացած տեղեկությունների վերլուծության հիման վրա, գրում է շարադրություն՝ «Հարկավճարների դերը երկրի զարգացման գործում»:
- Անվանում է Վրաստանի տնտեսական զարգացման գլխավոր ցուցանիշները (օր.՝ ամբողջական ազգային և ներքին արտադրանքի, տնտեսության աճի տեմպը, սպառողական զանբյուրի քանակը, աղքատության և գործազրկության մակարդակը, մարդկային զարգացման դասիչը), համեմատում է մյուս համանման (բնակչության թվի տեսակետից) երկրների տվյալների հետ:
- Թվարկում է աղքատության պատճառները Վրաստանում և մյուս երկրներում, համեմատում դրանք և ձևավորում կարծիք՝ դրա հաղթահարման մասին:
- Ընտրում է որևէ գործունեություն և համադասարանցիների հետ միասին որոնում-գտնում տեղեկություններ՝ դրա հաջող իրականացման տնտեսական պայմանների մասին (օր.՝ իրավական պարտականություններ, շուկայի իրավիճակը, ռեսուրսներ և այլն), վերլուծման հիման վրա՝ կազմում է գործողությունների պարզ պլան և ներկայացնում համադասարանցիներին:

Տնտ. XI-XII. 5. Գնահատում է միջազգային փոխհարաբերությունների նշանակությունը երկրի տնտեսության զարգացման համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քննարկում է հարևան երկրների տնտեսական զարգացման ցուցանիշները և գնահատում համապատասխան պետությունների ազդեցությունը Վրաստանի և այս երկրների տնտեսական փոխհարաբերությունների վրա:
- Ընտրում է Վրաստանի քաղաքացիների տնտեսական գործունեության որևէ բնագավառ և դատում դրա զարգացման համար միջազգային փոխհարաբերությունների նշանակության մասին: Թվարկում է այդ տեսակետից առաջնային պետությունները, տարածաշրջանները թե միջազգային կազմակերպությունները և հիմնավորում սեփական կարծիքը:
- Նկարագրում է ժամանակակից աշխարհում պետության հզորացման չափանիշները և դրանց համապատասխան գնահատում է Վրաստանի իրավիճակը, համադասարանցիների հետ միասին քննարկում է ստացած արդյունքները և դրանց գնահատումների նախատեսումով, գրում է ակնարկ՝ Վրաստանի փոխհարաբերությունների մասին արտաքին աշխարհի հետ:

Վերջին եռամսյակում իրականացվելիք նախագծերի երաշխավորական տարբերակները:

- Համադասարանցների խմբի հետ միասին ընտրում է որևէ ապրանքի կամ սպասարկման տեսակ, պատկերացնում է՝ ինչպես էր ինքնուրույն արտադրում և փոխանակում այն՝ սեփական պահանջարկները բավարարելու համար:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է այն սոցիալական խումբը, որին, իր կարծիքով, անհրաժեշտ է հասարակության աջակցությունը, բացահայտում է այս խմբի ընդհանուր նպատակներն ու խնդիրները, համադասարանցիների հետ միասին պլանավորում է այդ սոցիալական խմբի (կամ կոնկրետ ներկայացուցիչների) աջակցության միջոցառումներ:
- Մասնակցում է դասարանային բանավեճին՝ «Ինչո՞վ կարող ենք համալրել դպրոցը» թեմայով, որի նպատակն է՝ դպրոցի կարիքների և համադասարանցիների համապատասխան հնարավորությունների ճշգրտումը, հաշվի է առնում նախորդ տարում անցկացրած համանման աշխատանքի արդյունքները և մշակում սեփական գործողությունների պլան, որը համաձայնեցնում է համադասարանցիների հետ, պլանավորած ակտիվություններում (օր.՝ դպրոցի գրադարանի կամ մարզադահլիճի համալրումը, ցածր դասարանցիների էքսկուրսիաներին մանկավարժներին օգնությունը, դպրոցի թե դրա շրջակայքի բարեկարգումը և այլն) կատարում է իրեն հատկացված դերը:
- Ընտրում է իր կամ սոցիալական որևէ խմբի համար հրատապ, կոնկրետ հիմնախնդիր (օր.՝ կրթություն ստանալ, զբաղվածություն, հարկավճարային կոնֆլիկտ, շուկայի կրճատում, օպտիմալացում, գների աճ կամ նվազում, հզոր

մրցակիցների ի հայտ գալը և այլն): Ձեռք է բերում տեղեկություն, որի վերլուծության հիման վրա, գրում է կոնկրետ հիմնախնդրի կարգավորման պլանը (հնարավոր է, մի քանի տարբերակ), կողմերի իրավունքների պաշտպանության և օրինական գործողությունների հաշվառումով: Սահմանում է իր դերը հիմնախնդրի կարգավորման գործում, հավաքում է համախոհների և գործում պլանի համաձայն, գնահատում է սեփական մասնակցության արդյունավետությունը և արդյունքները քննարկում է համադասարանցիների հետ:

- Ելնելով սեփական նպատակներից՝ ընտրում է ապագա գործունեությունը՝ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո: Որոնում-գտնում է հանրային տեղեկություն՝ իր ընտրության իրականացման ուղիների մասին: Այս տեղեկության վերլուծության հիման վրա, մշակում է գործողությունների պլան՝ խոչընդոտող և օժանդակող գործոնների հաշվառումով, որի մասին տեղեկացնում է համադասարանցիներին: Գնահատում է սեփական կարողությունները և համադասարանցիների հետ միասին դատում՝ տիրող իրավիճակում որքանով իրատեսական է իր ձգտումների իրականացումը:
- Ընտրում է որևէ հարևան կամ զարգացած երկիր և քննարկում Վրաստանի հետ փոխհարաբերությունների յուրահատկությունները, գնահատում է յուրաքանչյուր պետության քաղաքական, տնտեսական և սոցիալական բնութագրիչները, սահմանում նրանց ընդհանուր հետաքրքրությունները և գրում հոդված՝ երկու երկրների համագործակցության զարգացման հեռանկարների մասին, որտեղ հիմնավորում է սեփական նկատառումները:
- Անցկացրած հարցման կամ անձնական դիտարկման հիման վրա, միջազգային փոխհարաբերություններում առանձնացնում է իր բնակավայրի քաղաքացիների կարիքները (օր.՝ կրթություն, զբաղվածություն, առևտուր, ճանապարհորդություն, համագործակցություն և այլն), վերլուծում է այս փոխհարաբերությունների պատճառներն ու արդյունքները:

Քաղաքացիություն (գործնական իրավունք)

Ուղղություն՝ քաղաքացիություն
<p>1. Վերլուծում է քաղաքացիության սոցիալական հիմունքները:</p> <p>2. Մշակում և պաշտպանում է սեփական դիրքորոշումը օրինականության կուլտուրայի զարգացման մասին:</p> <p>3. Հետազոտում է քաղաքացու հնարավորություններն իրավական պետությունում:</p> <p>4. Համագործակցում է չափահասների և հասակակիցների հետ՝ հասարակության համար արդյունավետ գործունեությունում:</p> <p>5. Ուսումնասիրում է ժողովրդավարության, օրենքի գերակայության և պետական կառավարման փոխադարձ կապը:</p>

Արդյունքները և ստուգիչները

Քաղ. XI-XII. 1. Վերլուծում է քաղաքացիության սոցիալական հիմունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Իր դասարանի օրինակով (իր և համադասարանցիների հետաքրքրությունները վերլուծելուց հետո) դատում է մարդու անհատական և հասարակական շահերի մասին, առանձնացնում այն ընդհանուր շահերը, որոնց կանխատեսումը անհրաժեշտ է հասարակական համաձայնության համար:
- Պատմական անցյալից կամ ժամանակակից իրականությունից ընտրում է որևէ երկիր և նկարագրում դրա սոցիալական կառուցվածքը, քննարկում է տարբեր սոցիալական խմբերի իրավական վիճակը, փոխհարաբերությունները և յուրաքանչյուրի դերը հասարակական-քաղաքական կյանքում, վերլուծության արդյունքների մասին իրազեկում է համադասարանցիներին:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է այն սոցիալական խումբը, որին, իր կարծիքով, անհրաժեշտ է հասարակության աջակցությունը, բացահայտում է այս խմբի ընդհանուր նպատակներն ու խնդիրները, համադասարանցիների հետ միասին պլանավորում է այս սոցիալական խմբի (կամ կոնկրետ ներկայացուցիչների) աջակցության միջոցառումներ:
- Պլանավորում է բանավեճեր՝ «Մեր հասարակությունը քաղաքացիակա՞ն է արդյոք» թեմայով, ընտրում է դերերից մեկը (օր.՝ միջնորդ, դիտորդ կամ վիճաբանող կողմ), մասնակցելիս դրսևորում և հիմնավորում է սեփական դիրքորոշումը (տեսական դրույթներով և կոնկրետ օրինակներով), հաշվի է առնում ընդդիմախոսների դիտողությունները և ձևակերպում բանավեճի վերջնական արդյունքները:

Քաղ. XI-XII. 2. Մշակում և պաշտպանում է սեփական դիրքորոշումը՝ օրինականության կուլտուրայի զարգացման մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է բանավեճի՝ «Ինչո՞ւ են երեխաները խախտում օրենքը» թեմայով, դատում է անչափահաս հանցագործների իրավունքների և նրանց պաշտպանության օրենսդրական երաշխիքների մասին, գրում է թեմա՝ «Ի՞նչ խորհուրդ կտայի հասակակցիս»:
- Դատում է տարբեր (օր.՝ գողություն, սպանություն, կաշառակերություն, խտրականություն, խարդախություն, բռնություն և այլն) հանցագործությունների հարուցիչ պատճառների և դրանց նվազեցման ուղիների մասին:
- Մասնակցում է խմբային աշխատանքի՝ «Մեկ օր առանց օրենքի», նկարագրում է՝ ինչ հետևանքներ կարող է ունենալ օրենքի բացակայությանը անհատի և հասարակության համար: Սեփական կարծիքը համաձայնեցնում է խմբի մյուս անդամների հետ, սեփական եզրակացությունը ներկայացնում է համադասարանցիներին:

- Մասնակցում է դասարանային բանավեճին՝ «Մեր հասարակությունն ունի՞ արդյոք օրինականության կուլտուրա», գնահատում է հասարակության վերաբերմունքն այս հարցի նկատմամբ՝ իր բնակավայրում (կամ երկրում), դատում է քաղաքացիների, օրենսդիր և իրավապահ մարմինների փոխադարձ կապի մասին, գրում է դասարանում տեղի ունեցած բանավեճի արձանագրությունը կամ հաշվետվությունը:

Քաղ. XI-XII. 3. Հետազոտում է քաղաքացու հնարավորություններն իրավական պետությունում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատում է օրենք ընդունելու կամ փոխելու կանոնների մասին, քննարկում է սովորույթների և օրենքի նկատմամբ հասարակական վերահսկողության մեխանիզմները և համենատառու միմյանց:
- Մասնակցում է բանավեճերի՝ «Ո՞ր կանոններն են ավելի ուժեղ՝ գրված, թե՞ չգրված», սեփական դիրքորոշումը հիմնավորում է կոնկրետ օրինակների (ժամանակակից իրականությունից, գեղարվեստական գրականությունից կամ պատմությունից) քննարկմամբ և գնահատելիս առանձնացնում է այն չափանիշները, որոնց հիմնվում է ինքը:
- Դատում է, թե ինչպես կվարվի իր իրավունքները խախտվելու դեպքում և բացատրում է, թե ինչու պետք է հաշվի նստի ուրիշի ազատությունների հետ՝ սեփական իրավունքները պաշտպանելիս:
- Քննարկում է Վրաստանի քաղաքացու սահմանադրական իրավունքները և ազատությունները, առանձնացնում համապատասխան քաղաքացիական պարտականությունները, դատում է իրավունք-պարտականությունների իրականացման սահմանադրական միջոցների մասին:
- Ժամանակի գծի վրա նշում է այն փուլերը, երբ ձեռք բերեց իր համար նշանակալից իրավունքը և ստացավ առանձնահատուկ պարտականություն, նույն գծի վրա նշում է փուլերը, երբ նա կստանա առանձնահատուկ (լրացուցիչ կամ ընդլայնված) իրավունքներ և պարտականություններ (օր.՝ կառավարման, ընտրություններին մասնակցելու, ընտանիք կազմելու, զինծառայության և այլն), գրում է ակնարկ՝ «Իմ իրավունքներն ու պարտականությունները»:
- Վրաստանի Սահմանադրության մեջ՝ որոնում, գտնում և խմբավորում է այն դրույթները, որոնք ապահովում են նրա՝ քաղաքացու անձնական, սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, համադասարանցիների խմբի հետ միասին այս հարցը քննարկելիս, դատում է քաղաքացու սահմանադրական պարտականությունների և դրանցից խուսափելու դեպքում սպասելի արդյունքների մասին:
- Թվարկում է մարդու իրավունքները պաշտպանող միջազգային և ազգային փաստաթղթերն ու կազմակերպությունները, Վրաստանի և մյուս երկրների օրինակով դատում է այսպիսի կազմակերպությունների արդյունավետության մասին:

Քաղ. XI-XII. 4. Համագործակցում է չափահասների և հասակակիցների հետ հասարակության համար օգտավետ գործունեությունում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը

- Մասնակցում է դասարանային բանավեճին՝ «Ինչո՞վ կարող ենք համալրել դպրոցը» թեմայով, որի նպատակն է դպրոցի կարիքների և համադասարանցիների համապատասխան հնարավորությունների ճշգրտումը, նկատի է առնում նախորդ տարում անցկացրած համանման աշխատանքի արդյունքները և մշակում սեփական գործողությունների պլան, որը համաձայնեցնում է համադասարանցիների հետ: Պլանավորած ակտիվություններում (օր.՝ դպրոցի գրադարանի կամ մարզադահլիճի համալրումը, ցածր դասարանցիների էքսկուրսիաներին մանկավարժներին օգնությունը, դպրոցի և նրա շրջակա միջավայրի բարեկարգումը և այլն) կատարում է իրեն հատկացված դերը:
- Համադասարանցիների խմբի հետ միասին քննարկում է դպրոցի ինքնակազմավարման մարմինների գործունեությունը և դրանց արդյունքները, վերլուծում է քննարկման արդյունքները և գրում երաշխավորություններ դպրոցական կյանքի բարելավման մասին, որոնք պատշաճ ձևով ներկայացնում է համապատասխան իրավասու անձի կամ մարմին:

Քաղ. XI-XII. 5. Ուսումնասիրում է ժողովրդավարության, օրենքի գերակայության և պետական կառավարման փոխադարձ կապը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անվանում է վրացական իրավունքի հուշարձանները (կամ կոնկրետ դրույթներ), որոնք այսօր էլ հրատապ են՝ սահմանադրական, քրեական, վարչական թե քաղաքացիական իրավունքի տեսակետից:
- Որևէ իրավապահ պետական մարմնի (օր.՝ ոստիկանություն, դատարան, ժողովրդական պաշտպան և այլն) կամ միջազգային կազմակերպության օրինակով, քննարկում է դրանց իրավասությունը, նշանակությունը (կամ նպատակները) և գործունեությունը՝ իրավակարգի պաշտպանության հարցում, գնահատում է գոյություն ունեցող փորձի թերի և դրական կողմերը:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում և գրում է մի քանի օրենք և սահմանադրական դրույթ, որոնց պահպանումը հասարակության համար (օր., դպրոց, ընտանիք, թաղամաս, քաղաք և այլն) ապահովում է հասարակական կարգուկանոն ու կյանքի անվտանգ պայմաններ, մասնակցում է բանավեճի՝ օրենքի գերակայության անհրաժեշտության և օրինականության ապահովման մասին:
- Ընտրում է մարդու իրավունքների խախտման որևէ կոնկրետ փաստ և

կեղծակերպական դատաքննությունում կատարում որոշակի դեր (օր., հայցվոր, պատասխանող, փաստաբան, դատավոր, ատենակալ և այլն), վերլուծում է քննման գործընթացները և արդյունքները, որի հիման վրա, ելնելով նրա դերից, կազմում է եզրափակիչ փաստաթուղթ՝ գործընթացը երկարաձգելու կամ ավարտելու համար (օր.՝ դատական եզրակացություն, բողոքարկում, միջնորդություն, արձանագրություն, հաշվետվություն պատվիրատուին և այլն):

Վերջին եռամսյակում իրականացվելիք նախագծերի երաշխավորական տարբերակներ

- Ձեռք է բերում և վերլուծում տեղեկություններ մարդու, այսպես կոչված, բնական իրավիճակի մասին, գեղարվեստական գրականության կամ պատմական աղբյուրների օրինակով, նկարագրում է այնպիսի հասարակության մոդել, որտեղ «մարդը մարդու համար գայլ է» և համեմատում է որևէ բիոսոցիումի կյանքի կարգի հետ: Վերլուծության հիման վրա՝ սահմանում և հիմնավորում է որևէ հասարակությունում (օր.՝ դպրոց, հարևանություն, գյուղ, ձեռնարկություն, երկիր և այլն) համաձայնության հասնելու պայմանները:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ներկայացնում է իրավիճակ, երբ բարոյապես արդարացված արարմունքը կարող է պատժվել իրավական կերպով կամ հակառակը՝ իրավականորեն նպատակահարմար արարմունքը լինել բարոյապես ոչ արդարացի: Նրանց հետ միասին գրում է սցենար և մասնակցում դրա բեմադրությանը, համադասարանցիների հետ միասին քննարկում և խաղարկում է այս պատմության զարգացման այլ հնարավոր տարբերակ՝ «Միգուցե, այսպես ավելի լավ լիներ»:
- Տարբեր սոցիալական խմբերում անց է կացնում հարցում, որի արդյունքում պետք է դրսևորվի մասնակիցների վերաբերմունքը օրինականության նկատմամբ (օր., խախտողն են արդյոք օրենքները, հիմնականում որո՞նք, ի՞նչ հաճախությամբ, նրանց կարծիքով, սա լո՞ւրջ հիմնախնդիր է, եթե չեն խախտում, ի՞նչն է խանգարում՝ վա՞խը օրենքի առջև, թե՞ իրավական արժեքներին իրազեկ լինելը), հարցման արդյունքների վերլուծության հիման վրա, դատում է այս հասարակության իրավական գիտակցության մասին:
- Ծանոթանում և ընկերների հետ միասին քննարկում է դպրոցի հոգաբարձուների խորհրդի և վարչության որոշումները՝ ուսումնական գործընթացի կապակցությամբ, վերլուծում է, թե որքանով են նրանց դպրոցում հաշվի առնված հասարակական (օր.՝ աշակերտների ինքնակառավարման, մանկավարժների, ծնողների, հարևան բնակչության և այլն) շահերը և համադասարանցիների խմբի հետ միասին գրում է տարեկան հաշվետվության նախագիծ՝ դպրոցի զարգացման գործին հասարակության մասնակցության մասին:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է իրավական պետության գլխավոր բնութագրիչ նշաններից մեկը (օր.՝ օրենքի գերակայությունը,

օրենքների արդարացիությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը), որի համաձայն ընտրում և վերլուծում է լրատվամիջոցներում հրապարակված վերջին ժամանակների նյութերը, գնահատում է Վրաստանում տիրող իրավիճակը, ստացած եզրակացությունները պատրաստում է՝ դասարանային քննարկմանը ներկայացնելու համար, մասնակցում է քննարկման արդյունքների ամփոփմանը:

- Ընտրում է իր կամ որևէ սոցիալական խմբի համար հրատապ կոնկրետ հիմնախնդիր (օր.՝ կրթություն ստանալը, զբաղվածությունը, մարդու իրավունքների խախտումը, քաղաքացիական վեճ, քաղաքական կամ կրոնական խտրականություն և այլն), ձեռք է բերում տեղեկություն, որի վերլուծության հիման վրա, գրում է կոնկրետ հիմնախնդրի կարգավորման պլան (հնարավոր է մի քանի տարբերակ), կողմերի իրավունքների պաշտպանության և օրինական գործողությունների հաշվառումով, որոշում է սեփական դերը՝ հիմնախնդրի կարգավորման հարցում, հավաքում է համախոհների և գործում պլանին համապատասխան, գնահատում է սեփական մասնակցության արդյունավետությունը և արդյունքները ծանոթացնում համադասարանցիներին:
- Ընտրում է որևէ կոնկրետ իրավիճակ՝ քաղաքացիների կյանքից (սոցիալական, տնտեսական կամ քաղաքական), ուսումնասիրում է ստեղծված իրավիճակը և կողմերի շահերը, համադասարանցիների հետ միասին խաղարկում է նշված իրավիճակը և դրա կարգավորման այլընտրանքային տարբերակները, դատում է այս ուղիների լավ ու վատ կողմերի մասին և ընկերների հետ միասին նախանշում հակամարտության արդարացի կարգավորման պլանը:
- Ելնելով սեփական նպատակներից՝ ընտրում է իր ապագա գործունեությունը, միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, որոնում, գտնում է հանրային լրատվություն՝ իր ընտրությունը իրականացնելու ուղիների մասին, այս լրատվության վերլուծության հիման վրա, մշակում է գործողությունների պլան, օժանդակող և խոչընդոտող գործոնների հաշվառումով, որը ծանոթացնում է համադասարանցիներին, գնահատում է սեփական հնարավորությունները և համադասարանցիների հետ միասին դատում, թե որքանով իրատեսական է նրա՝ քաղաքացու, ձգտումների իրականացումը գոյություն ունեցող իրավիճակում:
- Մանկավարժի և դպրոցի վարչության հետ համաձայնությամբ, մասնակցում է դպրոցի արտադասարանական ճանաչողական-դաստիարակչական ծրագրին՝ «Օգնի՛ր հասակակցիդ» (օր.՝ սահմանափակ կարողություններով աշակերտների նկատմամբ հանդուրժողականության դաստիարակում, սոցիալական հիվանդություններով (օր., հյուծախտ, ալկոհոլամոլություն, քնրամոլություն և այլն) տառապող մարդկանց նկատմամբ համապատասխան վերաբերմունքի մշակում, աջակցություն առողջ կենսակերպի հաստատմանը, առողջության համար վնասակար սովորույթներից հրաժարվելու կարողության ուսուցում և այլն):

2009

- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է իրենց համար հրատապ հարց, որի լուծումը հատկապես կառավարող մարմնի իրավասությունն է, քննարկում է այս հարցի լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները և սահմանում սեփական մասնակցության հնարավորությունները, մշակված երաշխավորությունները համաձայնեցնում է խմբի հետ և իրազեկում համապատասխան կառավարող մարմնին:

Պետություն

Ուղղություն` կառավարում

1. Վերլուծում է քաղաքական գաղափարների և պետական կառավարման փոխադարձ կապը:
2. Զննարկում է Վրաստանի սոցիալական և քաղաքական համակարգի հիմնական յուրահատկություններն ու փոխադարձ կապը:
3. Գնահատում է Վրաստանում պետականության զարգացման նշանակալից փուլերը:
4. Հետազոտում է ժողովրդավարության, օրենքի գերակայության և պետական կառավարման փոխադարձ կապը:
5. Գնահատում է միջազգային փոխհարաբերությունների նշանակությունը պետության զարգացման համար:

Արդյունքները և ստուգիչները

Պետ. XI-XII.1. Վերլուծում է քաղաքական գաղափարների և պետական կառավարման փոխադարձ կապը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Զննարկում է իրավունքի հասկացության տարբեր մեկնությունները, իրավունքի ծագման և զարգացման տարածված տեսությունները, վերլուծում է քննարկման աղբյուրները և գրում ստեղծագործություն հասարակական հարաբերություններում իրավունքի նշանակության մասին:
- Դատում է մարդու, հասարակության, ազգի կյանքում քաղաքականության նշանակության մասին, պատրաստում է հանրային ելույթ երկրում տիրող իրավիճակի քաղաքական դերի մասին:
- Ընտրում է որևէ երկիր և դատում կոնկրետ պատմական դարաշրջանում` ըստ տարբեր նշանների, բնակչության շրջանում մեծամասնության և փոքրամասնության սահմանազատման սկզբունքների մասին (օր.` էթնիկական, քաղաքական, կրոնական, տնտեսական, սոցիալական):
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է աշխարհի պատմության մեջ ամենատարածված մի քանի քաղաքական տեսություններ և ծանոթանում համապատասխան աղբյուրների, բերում է պետական ղեկավարությունում նշված քաղաքական գաղափարների իրականացման կոնկրետ օրինակներ և հիմնավորում սեփական դիրքորոշումը:
- Պետական կառուցվածքի տարբեր ձևերի մասին (միավորիչ, դաշնային, համադաշնային և այլն) դատողություններ անելիս` բնութագրում է դրանց հիմնական նշանները, հիմնավորում սեփական կարծիքը Վրաստանի պետական կառուցվածքի մասին:

- Ժամանակագրական հաջորդականությամբ անվանում է անկախ Վրաստանի կառավարող քաղաքական կուսակցությունները (կամ խմբակցությունները) և դատում, թե ինչով են պայմանավորված այս կուսակցությունների հաջողություններն ու անհաջողությունները, համեմատում է նրանց իշխանություն գալու ուղիները, գնահատում նրանց ղեկավարություն գալու ուղիները՝ օրինականության և հասարակական կարիքների առումով:

Պետ. XI-XII. 2. Քննարկում է Վրաստանի սոցիալական և քաղաքական համակարգի հիմնական յուրահատկություններն ու փոխադարձ կապը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատում է տարբեր սոցիալական միջավայրերի (օր.՝ ընկերական, հարևանային, մասնագիտական և հասարակական միավորումներ) ձևավորումն ու իրավիճակը սահմանող գործոնների մասին (օր.՝ ընդհանուր արժեքներ, հետաքրքրություններ, պայմաններ, ձգտումներ և այլն), դատում է այն հատկանիշների մասին, որոնք բնորոշ են Վրաստանին, անց է կացնում զուգահեռներ այլ երկրների հետ:
- Սեփական բնակավայրում սահմանագատում է տարբեր սոցիալական փոքրամասնություններին (օր.՝ միայնակ ծերեր, հաշմանդամներ, անապաստան երեխաներ, ներգաղթյալներ և այլն): Դատում է այս մարդկանց նկատմամբ հասարակության հարաբերության յուրահատկությունների մասին:
- Առանձնացնում է Վրաստանում, իր կարծիքով, ամենաանպաշտպան սոցիալական խմբերին և դատում հասարակության կողմից նրանց օգնելու հնարավորությունների մասին, հիմնավորում է սեփական կարծիքը:
- Անվանում է որևէ քաղաքական կուսակցություն և դատում նրա հանրահռչակության (կամ ոչ հանրահռչակության) պատճառների մասին:
- Ժամանակագրական հաջորդականությամբ անվանում է անկախ Վրաստանի կառավարող քաղաքական կուսակցությունները (կամ խմբակցությունները) և դատում, թե ինչով են պայմանավորված այս կուսակցությունների հաջողություններն ու անհաջողությունները:
- Մասնակցում է բանավեճի՝ «Ինչպիսի՞ն պետք է լինի քաղաքական գործիչը և ժողովրդավարական երկրում ի՞նչ է անհրաժեշտ նրան հաջողության համար», թեմայով, հիմնավորելիս զուգահեռներ է անցկացնում Վրաստանի և մյուս երկրների միջև:

Պետ. XI-XII.3. Գնահատում է Վրաստանում պետականության զարգացման նշանակալից փուլերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ժամանակի սանդղակի վրա նշում է Վրաստանի պետական կառավարման զարգացման համար մի քանի (3-5) նշանակալից իրադարձություններ, դատում է յուրաքանչյուր իրադարձությամբ հարուցված արդյունքների մասին,

զուգահեռներ է անցկացնում նույն ժամանակաշրջանի մյուս պետությունների հետ (օր.՝ հարևան երկրներ, Եվրոպա, Մերձավոր Արևելք, Արևելյան Ասիա կամ Ամերիկա):

- Դատում է ժամանակակից վրացական պետության համար Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության և I սահմանադրության նշանակության մասին, անվանում է ժառանգականությունը հաստատող փաստերը և վերլուծում փոփոխությունները (օր.՝ պետական կառուցվածք, կառավարում, ընտրական համակարգ և այլն), դրսևորում է սեփական վերաբերմունքը՝ տեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ:
- Վրաստանի գործող Սահմանադրությունը քննարկելիս՝ դատում է դրա ընդունման նախապայմանների և արդյունքների մասին, սեփական կարծիքները գրի է առնում աղյուսակի տեսքով:
- Արտահայտում է սեփական կարծիքը՝ պետության ժողովրդավարության և ինքնիշխանության մասին, ընտրում է Վրաստանի նման (բնակչության թվի համաձայն) որևէ պետություն և այն համեմատում Վրաստանի հետ՝ նշված երկու նշանների համաձայն, առանձնացնում է նմանություններն ու տարբերությունները:
- Վրաստանի կամ այլ երկրի պատմությունից անվանում է իրադարձություններ, երբ պետական կառավարման մեջ փոփոխություններն իրականացվել են հասարակության ներգործությամբ, գնահատում է այս իրադարձությունների արդյունքները՝ ժողովրդավարության կառուցման գործում առաջընթացի (կամ հետընթացի) տեսակետից:

Պետ. XI-XII. 4. Հետազոտում է ժողովրդավարության, օրենքի գերակայության և պետական կառավարման փոխադարձ կապը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անվանում է վրացական իրավունքի հուշարձանները (կամ կոնկրետ դրույթները), որոնք այսօր էլ հրատապ են՝ քաղաքացիական, քրեական թե քաղաքացիական իրավունքի առումով:
- Անկախ Վրաստանի սահմանադրությունները համեմատում է խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի սահմանադրությունների հետ, նշում է նրանց միջև եղած էական տարբերությունը, գնահատում է, թե որքանով է հաշվի առնված քաղաքացիների (ժողովրդի) դերը այս սահմանադրություններում և որքանով էին կատարվում հայտարարագրված դրույթները:
- Բնութագրում է ժողովրդավարության հիմնական սկզբունքներն ու դրանք կապում մարդու իրավունքների և պարտականությունների հետ, սեփական դիրքորոշումը հիմնավորում է իրեն ծանոթ միջազգային փաստաթղթերի դրույթների օգնությամբ (օր.՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիր, Երեխաների իրավունքների պաշտպանության համաձայնագիր և այլն):
- Մասնակցում է դպրոցական բանավեճին՝ «Մեր հասարակությունն ունի՞ արդյոք օրինականության կուլտուրա», գնահատում է սեփական

բնակավայրում (կամ երկրում) հասարակության վերաբերմունքն այս հարցի նկատմամբ, դատում է քաղաքացիների, օրենսդրական և իրավապահ մարմինների փոխադարձ կապի մասին:

- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում և գրում է մի քանի օրենք ու սահմանադրական դրույթներ, որոնց պահպանումն էլ ապահովում է հասարակական կարգուկանոն և հասարակության համար անվտանգ կենսապայմաններ (օր.՝ դպրոց, ընտանիք, քաղաք և այլն), մասնակցում է բանավեճի՝ օրենքի գերեկայության անհրաժեշտության և օրինականության ապահովության մասին:
- Ընտրում է մարդու իրավունքների խախտման որևէ կոնկրետ փաստ և կեղծակերպական դատական քննարկան գործընթացում կատարում է որոշակի դեր (օր.՝ հայցվոր, պատասխանող, փաստաբան, դատավոր, ատենակալ և այլն), վերլուծում է քննարկման գործընթացը և արդյունքները, որի հիման վրա, ելնելով իր դերից, կազմում է եզրափակիչ փաստաթուղթ՝ պրոցեսը երկարաձգելու կամ ավարտելու համար (օր.՝ դատական եզրակացություն, բողոքարկում, միջնորդություն, արձանագրություն, հաշվետություն հաճախորդին և այլն):

Պետ. XI-XII. 5.Գնահատում է միջազգային փոխհարաբերությունների նշանակությունը պետական զարգացման համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Զննարկում է հարևան երկրների կառավարման ձևերը և դատում դրանց ժողովրդավարության աստիճանի մասին, գնահատում է պետական կառավարման համակարգի ներգործությունը Վրաստանի և այս երկրների միջև փոխհարաբերությունների վրա:
- Ընտրում է Վրաստանի քաղաքացիների հասարակական-քաղաքական կյանքի կամ տնտեսական գործունեության որևէ բնագավառը և դատում նրա զարգացման համար միջազգային փոխհարաբերությունների նշանակության մասին, թվարկում է այդ տեսակետից առաջնահերթ պետությունները, տարածաշրջանները և միջազգային կազմակերպությունները և հիմնավորում սեփական դիրքորոշումը:
- Համադասարանցիների խմբի հետ միասին քննարկում է միջազգային իրավունքի արդյունավետությունը, Վրաստանի և որևէ պետության օրինակով առանձնացնում է մարդկանց և պետությունների միջև փոխհարաբերությունների այն բնագավառները, որտեղ նման նորմերի գործողությունը, նրա կարծիքով, անհրաժեշտ է:
- Նկարագրում է ժամանակակից աշխարհում պետության հզորության չափանիշները և դրանց համապատասխան՝ գնահատում է Վրաստանի իրավիճակը, համադասարանցիների հետ միասին քննարկում է ստացած արդյունքները և դրանց գնահատումների հաշվառումով Վրաստանի և արտաքին աշխարհի միջև փոխհարաբերությունների մասին ակնարկ գրում:

Վերջին եռամսյակում իրականացվելիք նախագծերի երաշխավորական տարբերակները

- Վրաստանի Սահմանադրության մեջ որոնում, գտնում է հոդվածներ, որոնք վերաբերում են Վրաստանի քաղաքացիների ընտրական իրավունքներին, դրանց վերլուծության հիման վրա, դատում է ժողովրդավարական և արդարացի ընտրությունների սկզբունքների հետ համապատասխանեցման մասին (օր.՝ համընդհանուր մարդասիրություն, քվեարկության գաղտնիություն, հավասարություն), սեփական դպրոցի, բնակավայրի կամ տարածաշրջանի օրինակով գնահատում է տարբեր ընտրական (օր., մեծամասնական, համամասնական և այլն) համակարգերը՝ քաղաքացու իրավունքների պաշտպանության դիրքերից:
- Ընտրում է նշանակալից իրադարձություն հասարակական-քաղաքական կյանքից և համադասարանցիների խմբի հետ միասին քննարկում այդ իրադարձությանը մարդկանց մասնակցության դրդապատճառը, հնարավորություններն ու աստիճանը, համապատասխան իրավական փաստաթղթերի վերլուծության հիման վրա, գրում է երաշխավորություններ հասարակական համագործակցության խրախուսման համար:
- Ուսումնասիրում է վրացական իրավունքի (հոգևոր, թե աշխարհիկ) հուշարձանների ստեղծման հիմունքները, գնահատում դրանց հրատապությունն ու մարդասիրությունը, ինչպես համապատասխան դարաշրջանի, այնպես էլ արդիականության համար, գրում է շարադրություն՝ Վրաստանում իրավական կարգուկանոնի զարգացման մասին:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է հրատապ հարց, որի լուծումը ղեկավարող մարմնի իրավասությունն է, քննարկում է այս հարցի լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները և սահմանում է սեփական մասնակցության հնարավորությունները, մշակված երաշխավորությունները համաձայնեցնում է խմբի հետ և իրազեկում համապատասխան կառավարող մարմնին:
- Կազմում է Վրաստանի պետականության և կառավարման հետ կապված տերմինների և տեղանունների բառարան (օր., Հերեթի, Շավչեթի, դահլիճ, հուշարձան կանգնեցնել, ավագագույն, բրուտ, գյուղապետ, տիրույթ, գավառ, ազգային խորհուրդ, մատնաչափ ամրոց, տնօրեն), խմբավորում է դրանք՝ դարաշրջանների համաձայն և համադասարանցիների հետ միասին պատրաստում յուրաքանչյուր դարաշրջանին համապատասխան իրազնական նյութ՝ (օր.՝ քարտեզ, ցուցապատառ, գծանկար, ցուցափեղկ և այլն) շնորհանդեսի համար, դատում է վրացական պետությունների զարգացման մասին հնագույն ժամանակներից մինչև այսօր:
- Համադասարանցիների խմբի հետ միասին ընտրում է իրավական պետության գլխավոր բնորոշ նշաններից մեկը (օր.՝ օրենքի գերակայությունը, օրենքների արդարացիությունը, իշխանության բաժանումը, մարդու իրավունքների պաշտպանությունը), որի համաձայն, ընտրում և վերլուծում է

լրատվամիջոցներով հրապարակված վերջին ժամանակների նյութերը, գնահատում է Վրաստանում տիրող իրավիճակը, ընդունած եզրակացությունները պատրաստում՝ դասարանային քննարկմանը ներկայացնելու համար, մասնակցում է քննարկման արդյունքների ամփոփմանը:

- Ուսումնասիրում է չսահմանափակված և սահմանափակված կառավարման քաղաքական հիմունքները, մասնակցում է դասարանային քննարկումներին՝ «Ինչպիսի՞ կառավարումն է նախընտրելի Վրաստանի համար», ամփոփում է արդյունքները և գրում հոդված:
- Ընտրում է որևէ դարաշրջանի պետություն և դրա կառավարումը կապում համապատասխան քաղաքական տեսության հետ, քննարկում այս տեսության կրոնական և պատմա-մշակութային հիմունքները, որոնում է համանմանները՝ ժամանակակից աշխարհում և վերլուծում է նշված քաղաքական տեսության տարածման պատճառները:
- Պետական կառավարման տարբեր ձևերը կապում է այն գաղափարի կամ գաղափարների հետ, որոնք դրված են այս կամ այն կառավարման հիմքում, գնահատում է դրանք՝ արդարացիության և մարդկանց հավասարության տեսակետից, լավագույն կառավարման մասին ակնարկ է գրում է:
- Համադասարանցիների հետ միասին ընտրում է Վրաստանում գործող հասարակական-քաղաքական ինստիտուտների (օր., քաղաքական կուսակցությունների, ոչ կառավարական կազմակերպությունների կամ լրատվամիջոցների) կոնկրետ ներկայացուցչի, հետազոտում և գնահատում է (օր.՝ խմբի հետ միասին անցկացված հարցման, լրատվամիջոցներում հրապարակված նյութերի վերլուծության կամ այլ վիճակագրական մեթոդի հիման վրա) այս կազմակերպության նկատմամբ հասարակության վերաբերմունքը:
- Ուսումնասիրում է Վրաստանի պետական կառավարման ժամանակակից համակարգը (կառուցվածքը, նրա մասերի գործառույթներն ու փոխադարձ կապը), համեմատում է Վրաստանի անցյալում գոյություն ունեցած կառավարման համակարգերը՝ ժողովրդավարության և օրենքի գերակայության տեսակետից, աշխատանքի արդյունքները ներկայացնում է համադասարանցիների քննարկմանը:
- Համեմատում է 1921 և 1995 թվականների Վրաստանի Սահմանադրությունները՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով, դատում է մեծամասնության և փոքրամասնության սահմանազատման չափանիշների մասին (օր.՝ էթնիկական, գույքային, կրոնական, մշակութային և այլն) և դրանց համապատասխան՝ նկարագրում է Վրաստանի բնակչության կառուցվածքը, գնահատում ժողովրդավարության նշանակությունը քաղաքացիական ինտեգրման գործընթացում:
- Ընտրում է որևէ հարևան կամ զարգացած երկիր և քննարկում Վրաստանի հետ փոխհարաբերությունների յուրահատկությունները, գնահատում է

յուրաքանչյուր պետության քաղաքական, տնտեսական և սոցիալական բնութագրիչները, որոշում դրանց ընդհանուր շահերը և գրում հողված երկու երկրների համագործակցության զարգացման հեռանկարների մասին, որտեղ հիմնավորում է սեփական դիրքորոշումը:

- Անցկացված հարցման և անձնական դիտարկման հիման վրա, առանձնացնում է սեփական բնակավայրի քաղաքացիների կարիքները միջազգային փոխհարաբերություններում (օր.՝ կրթություն, զբաղվածություն, առևտուր, ճանապարհորդություն, համագործակցություն և այլն), վերլուծում է այդ փոխհարաբերությունների պատճառներն ու արդյունքները:
- Մասնակցում է դասարանային քննարկումներին հիմնախնդիրների բացահայտման և դրանց կարգավորման ուղիների մասին, ընտրում է հիմնախնդիրներից մեկը և որոնում, գտնում լրացուցիչ լրատվություն դրա վերլուծության համար, նախանշում է հիմնախնդրի կարգավորման ուղիները:

**Գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրություն
Կամընտրական դասընթաց
XII դասարան
Արդյունքներն ըստ ուղղությունների**

Աշխարհ.XII		Ուղղություններ
Ժամանակը և տարածությունը	Պետական կառավարում և քաղաքականություն	Միջավայրը և սոցիալական համակարգերը
1. Հետազոտում է գլոբալացման գործընթացների տարածական-ժամանակային հատկանիշները:	2. Հետազոտում է քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրներ: 3. Վերլուծում է գլոբալ հիմնախնդիրների վճռման հարցում տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով մշակված համակարգված քաղաքականության անհրաժեշտությունը: 4. Վերլուծում է գլոբալ հիմնախնդիրները և դատում նրանց վճռման հնարավոր ուղիների մասին:	5. Հետազոտում է սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրներ: 6. Հետազոտում է բնական և անթրոպոգենային բնույթի գլոբալ հիմնախնդիրներ:

Արդյունքներ և ստուգիչներ

Ժամանակը և տարածությունը

Աշխարհ. XII 1. Հետազոտում է գլոբալացման գործընթացների տարածական-ժամանակային հատկանիշները:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Խմբային աշխատանքի հետևանքով կազմում է իր համար հրատապ հիմնախնդիրների տարածական-ժամանակային յուրահատկությունները: Մահմանում է «գլոբալ» հասկացությունը և մշակում է չափանիշներ՝ այս հիմնախնդիրին կարգավիճակ շնորհելու համար:
- Ենթադրություն է արտահայտում գլոբալ հիմնախնդիրների միջև եղած պատճառա-հետևանքային կապերի մասին և գծում համապատասխան գծապատկեր:
- Կազմում է գլոբալ հիմնախնդիրների ցանկ, համեմատում գոյություն ունեցածի հետ և դրանք տեղափոխում ժամանակի սանդղակի վրա, վերլուծում է հիմնախնդիրների առաջացման և փոխակերպման պատճառները (առաջացում, սրում, կարգավորում, փոխարինում):
- Գլոբալ հիմնախնդիրների ցանկից ընտրում է Վրաստանի համար ամենից հրատապ հիմնախնդիրները, որոշում է նրանց փոխակերպումը ժամանակի և տարածության մեջ: Պատրաստում է հիմնախնդրի ընթացքն արտացոլող գծապատկեր:

Աշխարհ. XII 2. Հետազոտում է քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրներ:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Խմբի հետ մեկտեղ վերլուծում է քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրների առաջացման, զարգացման և տարածքային առանձնահատկությունները: Արտահայտում է իր վերաբերմունքը տվյալ հարցի նկատմամբ և անում կանխատեսումներ:
- Հայթայթած տեղեկության հիման վրա (վիճակագրական, զանգվածային լրատվամիջոցներ) վերլուծում է աշխարհի երկրների ռազմա-քաղաքական ներուժը և արտահայտում կարծիք, թե ինչ ավանդ կարող է ներդնել յուրաքանչյուր քաղաքացի և երկիր՝ աշխարհում խաղաղության և զինաթափման նպատակով:
- Ընտրում է որևէ երկրի արված կոնկրետ քայլեր զինաթափման և խաղաղության

պահպանման գործում, ծանոթանում է (լրատվամիջոցներից) և մշակում իրադարձությունների զարգացման հնարավոր նախնացություն (զծապատկեր, սցենար):

- Որոշում է պատճառա-հետևանքային կապերը ազգամիջյան հակամարտությունների և ահաբեկչության առաջացման, նրանց դրսևորման ձևերի և տարածքային յուրահատկությունների միջև:
- Լրատվամիջոցներից տեղեկություններ է ձեռք բերում աշխարհում և Վրաստանում առկա ազգամիջյան հակամարտությունների և աղմկահարույց ահաբեկչական գործողությունների միջև և կազմում է «թեժ կետերի» քարտեզ:

Աշխարհ. XII 3. Վերլուծում է գլոբալ հիմնախնդիրների վճռման հարցում տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով մշակված համակարգված քաղաքականության անհրաժեշտության հարցը:

- Դատողություն է անում բնակչության (ընտանիքի, համայնքի, երկրի, տարածաշրջանի և աշխարհի) ապրելակերպի, բնապահպանական գիտակցության, կրթության և տեղական օրենսդրության պատճառա-հետևանքային կապերի մասին, արտահայտում է սեփական վերաբերմունքը կայուն զարգացման համար դրանց նշանակության մասին:
- Ծանոթանում է գլոբալ հիմնախնդիրների հետ կապված Վրաստանի կողմից կնքված կոնվենցիաներին և պարտավորություններին, կազմում է հարցարան և անցկացնում սոցիոլոգիական հարցում տվյալ գործընթացում հասարակության և անհատի տեղեկացվածության և ընդգրկվածության ուսումնասիրման նպատակով:
- Խմբային աշխատանքի ժամանակ տեղեկություններ է ձեռք բերում Վրաստանում կամ որևէ այլ երկրում գլոբալ հիմնախնդիրների հետ կապված՝ կատարված կամ չկատարված համաձայնագրի կամ պարտավորության մասին, հետազոտության արդյունքները ներկայացնում են լսարանի ներկայությամբ:
- Ծանոթանում է միջազգային բնապահպանական օրերին և դասարանի հետ ընտրում իրենց համար հետաքրքիրը և պատրաստում համապատասխան միջոցառումներ (բաց դաս, ցուցահանդես, կոնֆերանս և այլն):
- Խմբային աշխատանքի ժամանակ դատողություն է անում գլոբալ հիմնախնդիրների կարգավորման մեջ միջազգային ջանքի նշանակության մասին՝ մարդկության կայուն և կառավարելի զարգացման հեռանկարի համար և արդյունքները ներկայացնում է ցանկալի ձևով:

Աշխարհ. XII 4. Վերլուծում է գլոբալ հիմնախնդիրները և դատողություն անում նրանց վճռման ուղիների մասին:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Տարբերակում է այն գլոբալ հիմնախնդիրները, որոնց կարգավորումն, ըստ նրա, մոտ ապագայում է հնարավոր և արտահայտում է ենթադրություն նրանց վճռման հնարավոր ուղիների մասին:

2009

- Ընտրում է իր համար հրատապ գլոբալ հիմնախնդիր, ծանոթանում գոյություն ունեցած վիճակին և ստեղծում նրա զարգացման նմուշօրինակ (վճռելու և չվճռելու դեպքում):
- Խմբային աշխատանքի հետևանքով հետազոտում է գլոբալ հիմնախնդիրների մոդելավորման հարցեր և դատողություն անում միասնական աշխարհի հայեցակարգի վերաբերյալ:

Միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխարհ. XII 5. Հետազոտում է սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրներ:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Ենթադրություն է արտահայտում, թե ինչ սոցիալական և տնտեսական օգուտ կարող են բերել սպառազինությունից տնտեսած ծախսերը:
- Տրամաբանական կապեր է հաստատում սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրների միջև և դատողություններ անում նրանց տարածական և ժամանակային յուրահատկությունների մասին:
- Քարտեզների և այլ աղբյուրների հիման վրա վերլուծում է երկրների միջև սննդամթերքի և հումքի անհավասար բաշխումը: Ենթադրություն է արտահայտում հիմնախնդրի տեղական, տարածաշրջանային և գլոբալ մակարդակով վճռելու հնարավոր ուղիների մասին:
- Ընտրում է զարգացման տարբեր աստիճաններում գտնվող երկրներ, համեմատում է, թե որքանով սուր են դրսևորվում նրանցից յուրաքանչյուրում գլոբալ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:
- Տարբեր աշխարհագրական միջոցների վերլուծության հիման վրա դատողություն է անում, թե ինչ դեր են կատարում պատմական և աշխարհագրական գործոնները երկրի զարգացման գործում: Վերլուծում է հետամնացության պարամետրերի հաղթահարմանը կողմնորոշված միջոցառումներ և կազմում աշխարհի տարածաշրջանների նախիմացական (սպազայի) «սոցիալ-տնտեսական զարգացման» քարտեզ:

Աշխարհ. XII 6. Հետազոտում է բնական և անթրոպոգենային բնույթի գլոբալ հիմնախնդիրներ:

Արդյունքին հասել ենք, եթե աշակերտը.

- Վերլուծում է մարդու գործունեության հետևանքով ծագած բնապահպանական գլոբալ հիմնախնդիրները պատմական անցյալից մինչև օրս: Ենթադրություն է արտահայտում նրանց հնարավոր զարգացման մասին:
- Տարբեր աշխարհագրական միջոցների օգտագործմամբ վերլուծում է մթնոլորտի, ջրոլորտի, կենսոլորտի յուրացման հիմնական ուղղությունները, ընտրում է որևէ բաղադրամասի յուրացման հետ կապված գլոբալ հիմնախնդիր, դատում նրա անվտանգ յուրացման մասին և արդյունքներն արտացոլում

ցանկալի ձևով:

- Պատկերագրությունների և այլ աղբյուրների օգտագործմամբ կապեր է հաստատում գլոբալ աշխարհա-բնապահպանական հիմնախնդիրների և տնտեսության այն բնագավառների միջև, որոնք առաջ են բերում այս հիմնախնդիրները, կիրառում է քարտեզներ և կազմում աշխարհա-բնապահպանական հիմնախնդիրների բացահայտման քարտեզ:
- Մասնակցում է մտքերի փոխանակման, թեմայով՝ «Արտադրության ընդլայնումը և էկոլոգիական հաշվեկշռի պահպանումը»:
- Խմբային աշխատանքի ժամանակ ընտրում է որևէ գլոբալ աշխարհաքաղաքական հիմնախնդրի կարգավորման մի քանի նշանակալի միջոցառում և ստեղծում հիմնախնդրի զարգացման սցենարներ, արդյունքներն արտահայտում է իր համար ցանկալի ձևով (գծապատկեր, դիագրամ և այլն):
- Տարվա ընթացքում տարբեր աղբյուրներից (գիտական գրականություն, պարբերական հրատարակություններ, լրատվամիջոցներ) տեղեկություններ է հավաքում բնական և տեխնոգենային աղետների մասին, դրանք տեղադրում է քարտեզի և ժամանակագրական գծի վրա, արդյունքները վերլուծում է և ներկայացնում համադասարանցիների առջև:

Երաշխավորված բովանդակություն

1. Գլոբալացման գործընթացը

- Գլոբալ հիմնախնդիրների առաջացումը
- Գլոբալ հիմնախնդիրների փոխադարձ կապերը
- Մարդկության կայուն և կառավարվող զարգացման հեռանկարը

2. Կարևորագույն գլոբալ հիմնախնդիրներ

- Խաղաղություն և զինաթափում
- Ահաբեկչություն
- Էթնիկական ճգնաժամ
- Հետամնացության հաղթահարում
- Ժողովրդագրական
- Էներգետիկական
- Հումքային
- Սննդամթերքի
- Զաղաքաշինություն
- Առողջապահություն
- Կենսաբազմազանության պահպանում
- Բնապահպանական (մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ)
- Համաշխարհային օվկիանոսի հետ կապված
- Տարերային համադեմոստրացիաներ
- Տեխնոգենային համադեմոստրացիաներ

XII դասարան

Վրաստանը և աշխարհի պատմությունը ¹

Պատմ. XII		Ուղղություն	
Բնությունը և տնտեսությունը	Պետական կառավարում և սոցիալական կառուցվածք	Քաղաքականություն	Մշակույթը և կրոնը
<p>1. Վերլուծում է XX դարում Վրաստանում և աշխարհում նշանակալից տնտեսական փոփոխությունները:</p> <p>2. Աշակերտը վերլուծում է ռեսուրսների և տնտեսության փոխազդեցությունը:</p>	<p>3. Աշակերտը վերլուծում է XX դարում կառավարման կառույցներում տեղի ունեցած փոփոխությունները:</p> <p>4. Աշակերտը հետազոտում է սոցիալական կառույցների փոխհարաբերությունը XX դարում:</p>	<p>5. Աշակերտը վերլուծում է XX դարում Վրաստանի ներքին և արտաքին քաղաքական գործընթացները:</p>	<p>6. Աշակերտը հետազոտում է տարբեր մշակույթների փոխհարաբերությունը և փոխազդեցությունը:</p> <p>7. Աշակերտը դատում է համաշխարհային և վրացական մշակույթի զարգացման միտումների մասին:</p>

¹ XII դասարանի չափորոշիչը և երաշխավորված բովանդակությունը պետք է ուսուցանվի երկու եռամսյակի ընթացքում: Երրորդ եռամսյակում աշակերտն իրականացնում է նախագծեր (օրինակ՝ գրում է պատմական շարադրություն կամ համադասարանցիների խմբի հետ իրականացնում հետազոտություն բանավոր պատմությունից, որի արդյունքը ներկայացնում է շնորհանդեսի ձևով):

Արդյունքներ և ստուգիչներ

Ուղղություն՝ բնությունը և տնտեսությունը

Պատմ. XII 1. Աշակերտը վերլուծում է XX դարում Վրաստանում և աշխարհում նշանակալից տնտեսական փոփոխությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դատում է տեխնոլոգիական փոփոխությունների և տնտեսության զարգացման փոխազդեցության մասին:
- Գրում է շարադրություն, որի մեջ դատում է որևէ հակամարտության (պատերազմի) տնտեսական նախապայմանների և արդյունքների մասին:
- Մեկ երկրի օրինակով գրավոր դատում է, թե ինչպես էր փոխվում տարբեր տարաշրջաններում պետության դերը երկրների տնտեսական հարաբերությունների զարգացման գործում:
- Ընտրում է որևէ տնտեսական տեսություն և դատում, թե ինչ ազդեցություն է գործել այն այս կամ այն երկրի (տարածաշրջանի) տնտեսական զարգացման վրա:
- Համեմատում է ժամանակակից Վրաստանի դրամական միավորը այլ երկրի արժույթի հետ և նրանց կայունությունը կապում երկրի զարգացման դինամիկայի հետ:
- Դատում է ժամանակակից Վրաստանի և այլ երկրների տնտեսության մեջ քաղաքի և գյուղի տեսակարար բաժնի մասին:
- Սեփական երկրի (շրջանի, քաղաքի, գյուղի) օրինակով դատում է տնտեսական զարգացման և ժողովրդագրական հիմնախնդիրների փոխադարձ կապի մասին, զուգահեռներ է անցկացնում այլ երկրների հետ:
- Խմբային բանավեճի ժամանակ դատում է շուկայական և պլանային տնտեսության մասին, ընդգծում է նրանց դրական և բացասական կողմերը և ստեղծում իր համար ընդունելի նմուշօրինակ:
- Դատում է Վրաստանի տնտեսության ինտեգրման մասին՝ տարածաշրջանի, կայսրության և աշխարհի տնտեսության հետ (օրինակ՝ Վրաստանը և Կովկասը, Վրաստանը և Խորհրդային Միությունը, Վրաստանը և աշխարհը):

Պատմ. XII 2. Աշակերտը վերլուծում է ռեսուրսների և տնտեսության փոխազդեցությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է մի երկիր (տարածաշրջան) և դատում, թե ինչ ազդեցություն են գործում բնական և անթրոպոգեն փոփոխությունները նրա տնտեսական զարգացման վրա (օրինակ՝ Ճապոնիայում ամբարտակների կառուցումը,

Կոլլսեթիում ճահիճների չորացումը):

- Գատում է, թե ինչ ազդեցություն է գործում բնակչության թիվը և խտությունը երկրի տնտեսական զարգացման վրա:
- Ընտրում է որևէ պետություն և դատում, թե ինչ ազդեցություն էին գործում (գործում են) այս երկրի տնտեսական գերակայությունների վրա այն հանաժոները, որ արդյունահանվում են նրա տարածքում:

Ուղղություն՝ պետական կառավարում և սոցիալական կառուցվածք

Պատմ. XII 3. Աշակերտը վերլուծում է XX դարում կառավարման կառույցներում տեղի ունեցած փոփոխությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ երկիր և խմբային բանավեճի ժամանակ դատում նրա կառավարման կառույցներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:
- Համեմատում է կենտրոնի և տարածաշրջանի փոխհարաբերությունները տարբեր երկրներում:
- Խմբային աշխատանքի ժամանակ համեմատում է պետական կառավարման տարբեր համակարգեր (միապետական, սահմանադրական-միապետական, խորհրդարանական, ավտորիտար հանրապետություն), տալիս է իր գնահատումները նրանցից յուրաքանչյուրի դրական և բացասական կողմերի մասին:
- Խմբային աշխատանքի ժամանակ համեմատում է պետական կազմակերպման տարբեր համակարգեր (միավորիչ, դաշնային, համադաշնային և այլն), տալիս է սեփական գնահատումը յուրաքանչյուրի դրական և բացասական կողմերի մասին, դատում է, թե որ համակարգը կլիներ լավագույնը ժամանակակից Վրաստանի համար:

Պատմ. XII 4. Աշակերտը հետազոտում է սոցիալական կառուցվածքների փոխհարաբերությունները XX դարում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտահայտում է սեփական տեսակետը անձնավորության գույքային և սոցիալական վիճակների միջև եղած փոխհարաբերությունների մասին:
- Համեմատում է երկու կամ երեք երկրների սոցիալական կառույցները և մատնանշում նմանությունները և և տարբերությունները:
- Խմբավորում է տարբեր երկրներում տարբեր սոցիալական խավերի ներկայացուցիչների և դատում նրանց սոցիալական կարգավիճակի մասին:
- Վերլուծում է փոխհարաբերությունը տարբեր քաղաքական կուսակցությունների և տարբեր սոցիալական խավերի միջև Վրաստանում,

զուգահեռներ է անցկացնում Եվրոպայի երկրների հետ:

- գ Ընտրում է որևէ հեղափոխություն և գրում շարադրություն կառավարման և սոցիալական կառույցներում այս հեղափոխությամբ առաջացած փոփոխությունների մասին:

Ուղղություն՝ քաղաքականություն

Պատմ. XII 5. Աշակերտը վերլուծում է XX դարի Վրաստանի ներքին և արտաքին քաղաքական գործընթացները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ընտրում է աշխարհում զարգացած նշանակալի պատմական իրադարձությունների մեկը և գրում շարադրություն, թե ինչ ազդեցություն է նա գործել Վրաստանի վրա:
- Համադասարանցիների խմբի հետ ընտրում է քաղաքական գործչի և դատում նրա ընտրած արտաքին և ներքին քաղաքական ուղղության հետևանքների մասին:
- Ընտրում է տարբեր երկրների (տարածաշրջանների) երկու գործիչների քաղաքական գաղափարները, համեմատում դրանք և դատում, թե ինչ ազդեցություն է ունեցել նրանցից յուրաքանչյուրը աշխարհի կամ տարածաշրջանի քաղաքական զարգացման վրա:
- Առանձնացնում է ժամանակակից վրացական պետության շահերը և դատում արված քաղաքական քայլերի մասին:
- Կեղծակերպած խաղի ժամանակ ցույց է տալիս գլոբալացման կողմնակիցների և հակազլաբալիստների դիրքորոշումը՝ կապված Վրաստանի քաղաքական հզորացման հետ:
- Խմբային բանավեճի ժամանակ դատում է անջատականության մասին Վրաստանում և աշխարհում և համադասարանցիների խմբի հետ ստեղծում այս հիմնախնդրի վճռման իր նմուշօրինակը:
- Խմբային բանավեճի ժամանակ դատում է միջազգային ահաբեկչության և այս հիմնախնդրի վճռման ուղիների մասին:

Ուղղություն՝ մշակույթը և կրոնը

Պատմ. XII 6. Աշակերտը վերլուծում է տարբեր մշակույթների փոխազդեցությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Խմբային կամ անհատական աշխատանքի ժամանակ անվանում է դարի վրացական արվեստի այն հուշարձանները (օրինակ՝ գրականություն,

կերպարվեստ), որոնց վրա իր հետքն է թողել այլ մշակույթ, հիմնավորում է իր ընտրությունը:

- Ընտրում է XX դարի վրացական ճարտարապետական հուշարձաններ և զուգահեռներ է անցկացնում այլ երկրների համանման նշանակման հուշարձանների հետ:
- Դասարանային բանավեճի ժամանակ դատում է եվրոպական և արևելյան մշակույթների փոխհարաբերությունների մասին և XX դարի վրացական արվեստի վրա նրանցից յուրաքանչյուրի ազդեցության մասին:

Պատմ. XII 7. Աշակերտը դատում է աշխարհի մշակույթի և վրացական մշակույթի զարգացման միտումների մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Վերլուծում է փոփ-արվեստի զարգացման պատճառները և հետևանքները աշխարհում և Վրաստանում:
- Ընտրում է արվեստի որևէ բնագավառ (օրինակ՝ գրականություն, նկարչություն, կինո և այլն) և համեմատում նրա զարգացման միտումները Վրաստանում և աշխարհի որևէ երկրում (տարածաշրջանում):
- Գրում է շարադրություն, որում Վրաստանի կամ որևէ այլ երկրի օրինակով հետազոտում է երկրի մշակութային կյանքին պետության միջամտության հիմնախնդիրը:
- Ընտրում է որևէ արվեստագետի (օրինակ՝ Միխեիլ Ջավախիշվիլի, Սուլժենիցին, Չառլի Չապլին) և, հենվելով նրա կենսագրության և ստեղծագործության վրա, դասարանում բանավեճի ժամանակ դատում է արվեստագետի և պետության միջև փոխադարձ վերաբերմունքի հարցի մասին:

Բովանդակություն²

XX դար

1. Վրաստանը և աշխարհը XX դարի սկզբին
2. I համաշխարհային պատերազմը և Փարիզի հաշտության կոնֆերանսը
3. Վրաստանը 1918-1921 թվականներին
4. Վրաստանը և աշխարհը 1921-1939 թվականներին
5. II համաշխարհային պատերազմը և Վրաստանը
6. Աշխարհը և Վրաստանը 1945-1985 թվականներին
7. «Պերեստրոյկան» և ԽՍՀՄ փլուզումը
8. Վրաստանը համաշխարհային համագործակցության անդամ

²Չափորոշչուն սահմանված արդյունքներին կարելի է հասնել այս բովանդակության ուսուցումով: